

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՎԱՄԱԼՍԱՐԱՆ

Մերգեյ Առաքելյան

ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնարանաթողական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՏԴ 343.9(07)
ԳՄԴ 67.51g7
Ա 706

Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Հեղինակ՝

Առաքելյան Ս. Վ. – իրավ. գիտ. դոկտոր, Արդարադատության
ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրա-
վունքի ամբիոնի պրոֆեսոր

Գրախոսներ՝

Մարգարյան Ա. Ռ. – իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
քրեական իրավունքի ամբիոնի վարիչ

Սիմոնյան Տ. Վ. – իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ քրեական իրա-
վունքի ամբիոնի դոցենտ

Ա 706 Բռնությամբ կատարվող հանցագործություններ (ուսումնա-
մեթոդական ձեռնարկ): Ս. Վ. Առաքելյան: – Եր.: ԵՊՀ
հրատ., 2025. – 170 էջ:

Ձեռնարկում բացահայտվում է Հայաստանի Հանրապետությունում
բռնությամբ կատարվող հանցագործությունների էությունը, քննարկվում են
դրանց կրիմինալոգիական առանձնահատկությունները և կանխարգելման
հիմնական ուղղությունները: Այդ համատեքստում ներկայացվում են հան-
ցավոր բռնության ընդհանուր բնութագիրը և վարքագծի տվյալ դրսևորման
առանձին տեսակների կրիմինալոգիական առանձնահատկությունները:

Աշխատությունը նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլ-
տետների դասախոսների, ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտ-
ների և բռնությամբ կատարվող հանցագործությունների դեմ պայքարի հիմ-
նախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 343.9(07)
ԳՄԴ 67.51g7

ISBN 978-5-8084-2730-3
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427303>

© ԵՊՀ հրատ., 2025

© Առաքելյան Ս. Վ., 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ 1	8
ԲՈՒՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	8
§1.1. «Բռնությամբ կատարվող հանցագործություն» հասկացությունը	8
§1.2. Բռնությամբ կատարվող հանցագործությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը	15
§1.3. Բռնությամբ հանցանք կատարողի կրիմինալոգիական բնութագիրը	27
§1.4. Բռնությամբ կատարվող հանցագործությունից տուժողի կրիմինալոգիական բնութագիրը	45
§1.5. Բռնությամբ կատարվող հանցագործություններին նպաստող գործոնները	53
§1.6. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելումը	73
ԳԼՈՒԽ 2	97
ԲՈՒՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	97
§2.1. Սպանությունների բնութագիրը	97
§2.2. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների բնութագիրը	112
§2.3. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների բնութագիրը	126
§2.4. Խուլիգանությունների բնութագիրը	139
§2.5. Ընտանեկան հանցավոր բռնության բնութագիրը	150
ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ	164
PE3IOME	167
SUMMARY	168

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*«Ցանկացած բռնություն, մոայլ ու վանող
ամեն բան վկայում են ոչ թե ուժի, այլ
դրա բացակայության մասին»:*

Ռալֆ Ուոլդո Էմերսոն

ամերիկացի փիլիսոփա, բանաստեղծ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անհիշելի ժամանակներից բռնության տարբեր դրսևորումները մարդկային հասարակության կեցության անբաժան մասն են: Ավելին, ժամանակակից աշխարհում այն ներթափանցել է մարդկանց կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները՝ տարրական ընտանեկան և կենցաղային բռնարարքներից մինչև գիտատեխնիկական զարգացման նվաճումներով ուղեկցվող զինված բռնություն միջպետական հարաբերություններում:

Բռնարարքներն արդեն վաղուց շատերի կողմից ընկալվում են որպես կենսական տարբեր խնդիրներ լուծելու սովորական և նույնիսկ արդյունավետ ու գերադասելի միջոց: Պատմաբանները վկայում են, որ մարդկության պատմության վերջին հինգ հազար տարիներից միայն երեք հարյուրն են խաղաղ եղել: Շուրջ տասնհինգ հազար պատերազմները խլել են գրեթե 3,5 միլիարդ մարդկային կյանքեր: Ավելին, ժամանակի ընթացքում մարդիկ կարծես հարմարվել են բռնությանը, համակերպվել դրան: Շատերի համար այն դարձել է վարքագծի բնական, ընդունելի, ոչ դատապարտելի դրսևորում: Դա չի նշանակում, սակայն, որ բռնությամբ զուգորդված հանրավտանգ դրսևորումների դեմ պայքարելն անիմաստ է: Հակառակը՝ անհրաժեշտ է գործադրել հնարավոր բոլոր ջանքերը հանցավոր բռնությունը վերահսկելու, որոշակի սահմաններում այն պահելու, դրա տարածումը կանխելու, մակարդակը նվազեցնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին իրականացվող սոցիալական, տնտեսական, դատաիրավական և այլ բարեփոխումները, որոշակի դրական արդյունքներից բացի, ուղեկցվել են բացասական երևույթներով, որոնց շարքում կարելի է առանձնացնել նաև բռնությամբ կատարվող հանցագործությունների զգալի աճը, դրանց բացասական միտումները:

Այս տեսանկյունից ակնհայտ է դառնում հանցավորության տվյալ տեսակի վիճակի, կառուցվածքի, շարժընթացի, դրան նպաստող գործոնների, բռնությամբ հանցանք կատարողների և նման հանցագործություններից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունների, ինչպես նաև քննարկվող հանցագործությունների կանխարգելման հիմնական ուղղությունների համալիր գիտահետազոտական վերլուծությունների իրականացման, ուսումնական որոշակի նյութերի մշակման և ուսումնական գործընթացում ներդրման, ինչպես նաև համապատասխան որակյալ կադրերի պատրաստման անհրաժեշտությունը: Այդ կապակցությամբ որոշակի ներդրում կարելի է համարել նաև ձեր ուշադրությանը ներկայացվող սույն ուսումնամեթոդական ձեռնարկը, որը կարող է օգտակար լինել ինչպես իրավաբանական բուհերի և ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, ուսանողների, մագիստրանտների ու ասպիրանտների, այնպես էլ բռնությամբ կատարվող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

Տվյալ համատեքստում սույն աշխատությունում պարզաբանվել է «բռնությամբ կատարվող հանցագործություն» հասկացությունը, վերլուծվել են ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը, ներկայացվել են դրանք կատարողների և դրանցից տուժողների անձը բնութագրող առանձնահատկությունները,

բացահայտվել են հանցավոր վարքագծի քննարկվող դրսևորումներին նպաստող գործոնները, ինչպես նաև դրանց կանխարգելման հիմնական ուղղությունները:

Բացի այդ, քննարկվող հանցագործությունների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում ձևավորելու նպատակով ներկայացվել է նաև դրանց առավել վտանգավոր ու տարածված տեսակների՝ սպանությունների, առողջությանը դիտավորությանմբ վնասի պատճառումների, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, խուլիգանությունների, ինչպես նաև ընտանիքում բռնության հանցավոր դրսևորումների կրիմինալոգիական բնութագիրը:

Միևնույն ժամանակ, ձեռնարկն ուսումնասիրողների և համապատասխան դասընթացի մասնակիցների կողմից նյութին ծանոթանալը դյուրինացնելու և նրանց ձեռք բերած գիտելիքների գնահատումն իրականացնելու նկատառումներով մշակվել և աշխատությունում նախատեսվել են անհրաժեշտ տեսական աղբյուրների ցանկերը և ստուգիչ հարցաշարը՝ ըստ որոշակի թեմաների (պարագրաֆների):

Ամփոփելով հարկ է նաև հույս հայտնել, որ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունն իր արժանի տեղը կգտնի տեսական և ուսումնական ու մեթոդական այն աղբյուրների շարքում, որոնք կնպաստեն բռնությամբ կատարվող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Սերգեյ Վահանի ԱՌԱՔԵԼՅԱՆ

*իրավաբանական գիտությունների
դոկտոր, Արդարադատության ակադեմիայի
ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի
ամբիոնի պրոֆեսոր*

ԳԼՈՒԽ 1

ԲՈՒՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§1.1. «Բռնությամբ կատարվող հանցագործություն» հասկացությունը

Պարագրաֆի շրջանակներում նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել **«բռնություն»**, համապատասխանաբար նաև՝ **«բռնությամբ կատարվող հանցագործություն»** հասկացությունները: Այդ կապակցությամբ հարկ է անդրադառնալ ինչպես մասնագիտական գրականության մեջ դրա վերաբերյալ առկա կարծիքներին, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քրեական գործող օրենսդրությամբ նախատեսված համապատասխան իրավակարգավորումներին:

1. Բռնության բնույթի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Տարակարծությունները գլխավորապես կապված են հետևյալ հարցի հետ. տվյալ երևույթը կենսաբանակա՞ն (կամ կենդանակա՞ն), թե՞ սոցիալական ծագում ունի: Այս առումով կենցաղում հաճախ կարելի է հանդիպել «գազանաբար կատարված սպանություն» (երբ փորձում են նկարագրել առանձին դաժանությամբ սպանությունը), «ոչ թե մարդ է, այլ գազան» (երբ խոսում են դաժան մարդասպանի, սադիստի մասին): Նմանատիպ արտահայտություններով, սակայն, «գրպարտում են» գազաններին: Մասնագետների հավաստմամբ՝ կենդանիների միջավայրում ներխմբային ագրեսիայի դրսևորումները շատ հազվադեպ են ողբերգական ավարտ ունենում, քանի որ գործում են իրենց նմաններին ոչնչացնելը նախականիսող գործուն մեխանիզմներ (օրինակ՝

«հանձնվելու» նշան տալը հիմք է, որպեսզի անմիջապես դադարեցվի ամենադաժան մենամարտը):

Տեսակային նույն խմբին պատկանող կենդանիների միջև պայքարը նպատակ չի հետապնդում ոչնչացնելու հակառակորդին, այն, որպես կանոն, չի ուղեկցվում արյունահեղությամբ և դադարեցվում է կողմերից մեկի նահանջի պարագայում: Նրանց ագրեսիան միշտ ինստրումենտալ բնույթ է կրում՝ գործադրվում է տարածք նվաճելու, սնունդ հայթայթելու, էգին տիրանալու, ծագին պաշտպանելու համար և այլն:

Ներխմբային ոչնչացումը մարդ էակին բնորոշ առանձնահատկություններից է: Հետևաբար, բռնության պատճառներն առավել տրամաբանական կլինի փնտրել այն ամենում, ինչը բնութագրական է հենց մարդուն, տարբերում է նրան կենդանիներից, այլ ոչ թե նմանեցնում նրանց:

2. Բռնության էությունը բացահայտելու նպատակով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն **մարդկային վարքագծի դրսևորում** է՝ բռնարարք: Հետևաբար, դրա բովանդակությունը մարդու որոշակի վարքագծային մոդելն է, որը բնութագրվում է բռնարարի՝ մեկ ուրիշի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ վերջինիս անատոմիական (մարմնական) ամբողջականության կամ հոգեկան գործունեության վրա ներգործելու ցանկությամբ: Նման ներգործությունը, հանդիսանալով բռնության հատկանիշ, հասկացվում է որպես մեկ ուրիշին ֆիզիկական կամ հոգեկան վնասի պատճառում կամ նման վնասի պատճառման վտանգի ստեղծում:

Այլ կերպ ասած՝ **բռնությունն ուրիշի հոգեկան-մարմնական անձեռնմխելիությունը խախտելուն ուղղված ներգործությունն է, որն իրականացվում է փուժողի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով և վնաս է պատճառում կամ կարող է վնաս պատճառել նրա օրգանիզմի**

անստորմիական ամբողջականությանը կամ հոգեկան գործունեությանը:

3. Անհրաժեշտ է նաև **սահմանազատել** «բռնություն» և «հարկադրանք» հասկացությունները: Մասնավորապես՝

1) «հարկադրանքն» ավելի լայն հասկացություն է, քանզի բռնությունը դրա գործադրման եղանակներից մեկն է,

2) հարկադրանքի էական հատկանիշներից է դրա նպատակը՝ այլ անձին որոշակի վարքագիծ դրսևորելուն կամ դրանից ձեռնպահ մնալուն պարտադրելը, մինչդեռ բռնությունը կարող է գործադրվել նաև առանց նման նպատակի:

Այլ կերպ ասած՝ ցանկացած բռնություն ենթադրում է նաև հարկադրանք, սակայն միշտ չէ, որ հարկադրանքը գնահատվում է որպես բռնություն: Օրինակ՝ պատիժը պետական **հարկադրանքի միջոց է**, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից քրեական օրենսգրքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Այն որևէ պարագայում չի կարող համարվել բռնություն, քանզի դրա նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները, այլ ոչ թե խոշտանգումը, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը: Ավելին, ՀՀ Սահմանադրության հոդված 26-ը սահմանում է ինչպես խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, այնպես էլ մարմնական պատիժների արգելքները:

4. **Ֆիզիկական բռնության** համեմատաբար ընդգրկուն հասկացություն է սահմանել Ռ. Դ. Շարապովը, ով բնութագրել է այն որպես **դիտավորյալ հակաիրավական ներգոր-**

ծություն, որը կատարվել է այլ անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ վերջինիս օրգանների, հյուսվածքների կամ օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաների (նյութափոխանակություն, շնչառություն, վերարտադրություն, մարմնաշարժումներ և այլն) վրա էներգետիկ ազդեցություն գործելու միջոցով՝ Տվյալ սահմանմանը համամիտ է քրեագետների մեծ մասը:

Նման բռնության հետևանք կարող է լինել ինչպես ֆիզիկական (մահ, մարմնական վնասվածք, ցավի զգացում, դիմադրելու կամ տեղաշարժվելու ունակության կորուստ և այլն), այնպես էլ հոգեկան (ծանր ապրումներ, տառապանքներ, հոգեկան առողջության խնդիրներ և այլն) վնասի առաջացումը:

5. Ինչ վերաբերում է **հոգեկան բռնությանը**, ապա այն ավանդաբար ընդունված է հասկանալ որպես **այլ անձի հոգեկանի վրա հոգեպրավմապիկ բնույթի տեղեկատվության օգտագործմամբ իրականացվող ներգործություն:** Դրա ամենատարածված տեսակը վնաս պատճառելու սպառնալիքն է: Վերջինիս դրսևորման ձևերն են՝

1) ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքը,

2) առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու սպառնալիքը,

3) գույք (անկախ դրա արժեքից) ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքը,

4) անձին կամ նրա մերձավորին կամ մերձավոր ազգականին անվանարկող կամ նրանց իրավունքները, ազատու-

¹ Տե՛ս **Шарапов Р. Д.** Физическое насилие в уголовном праве. СПб.: Юрид. центр Пресс, 2001, էջ 290:

թյունները կամ օրինական շահերը ոտնահարող տեղեկություններ տարածելու սպառնալիքը,

5) ապօրինի այլ արարք կատարելու (օրինակ՝ անհիմն աշխատանքից ազատելու կամ բուհից հեռացնելու, նյութական օգնությունից զրկելու և այլն) սպառնալիքը:

Բռնության տվյալ տեսակի դրսևորումներ են նաև մարդու հոգեկանի վրա բացասական ազդեցություն ունեցող հետևյալ արարքները՝

1) վիրավորանքը, ծաղրուծանակը, ահաբեկումը և նման այլ գործողությունները,

2) միտումնավոր ցնցող (շոկային) տեղեկություն (օրինակ՝ ծնողի մահվան մասին սուտ տեղեկություն) հաղորդելը,

3) սոցիալական մեկուսացումը և այլն:

6. Հանցավոր կարող են համարվել թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեկան բռնության այն դրսևորումները, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված «հանցանք» հասկացությանը: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 16-ի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք է համարվում սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը»:*

Հետևաբար, քրեական օրենսգրքով չնախատեսված (օրինակ՝ մեկ հարված հասցնելով ֆիզիկական ցավ պատճառելը) կամ պատժի սպառնալիքով չարգելված (օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության վիճակում վնաս հասցնելը) կամ հանցագործության սուբյեկտ չհանդիսացող անձի (օրինակ՝ անմեղսունակի) կողմից բռնություն գործադրելը **հանցավոր համարվել չի կարող:**

7. Բռնությամբ կատարվող հանցագործություն ասելով հարկ է հասկանալ ՀՀ քր. օր.-ով նախատեսված հանցավոր այն արարքները, որոնց պարագայում ֆիզիկական կամ հո-

գեկան բռնության գործադրումը՝ որպես հանցակազմի բաղկացուցիչ մաս հանդիսացող հանցագործության եղանակ, կա՛մ **ուղղակիորեն նախատեսված է** (օրինակ՝ հոդված 198-ով նախատեսված սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), կա՛մ **կարող է ենթադրվել** (օրինակ՝ հոդված 155-ով նախատեսված սպանությունը):

8. ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված է նաև «բռնություն» հասկացությունը: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 3-ի («Սույն օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները») 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ այդպիսին է համարվում **«այլ մարդու նկարմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը»:**

Վերոհիշյալ հասկացությունը, փաստորեն, վերաբերում է ֆիզիկական բռնությանը: Մինչդեռ հոգեկան բռնության հասկացությունն օրենսդրորեն սահմանված չէ: Միևնույն ժամանակ, սակայն, որպես այդպիսին, քրեաիրավական իմաստով հարկ է հասկանալ ՀՀ քր. օր.-ի համապատասխան հոդվածներով նախատեսված **բռնություն (թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան) գործադրելու սպառնալիքը, շանտաժը և հոգեկան հարկադրանքի նմանադիպ այլ դրսևորումները** (օրինակ՝ գույք ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու կամ նյութական օգնություն չցուցաբերելու կամ ազատ տեղաշարժվելու հնարավորությունից զրկելու սպառնալիքը և այլն):

9. Ամփոփելով հարկ է առանձնացնել հանցավորության քննարկվող տեսակի կրիմինալոգիական հետևյալ հասկացությունը. **բռնությամբ կատարվող հանցագործությունները որոշակի տարածքում և ժամանակահատվածում գրանցված և լարենտային (այսինքն՝ պաշտոնական վիճակագրությանն անհայտ մնացած) հանցավոր այն արարքների**

համակցությունն են (հանրագումարը), որոնց օբյեկտիվ կողմի հատկանիշ է ֆիզիկական կամ հոգեկան բնությունը:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Առաքելյան Ս., Ալոյան Գ. Բռնությունը որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության հանցակազմի հատկանիշ // Պետություն և իրավունք: 2013: № 2-3 (60-61), էջ 100-113:
2. Առաքելյան Ս.Վ. Հոգեկան ներգործության որակման հիմնախնդիրներն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի // Բանբեր Արդարադատության ակադեմիայի: 2022: № 2 (8), էջ 37-44:
3. Антонян Ю.М., Волконская Е.К. Понятие насильственного преступления // Научный портал МВД России / Уголовное, уголовно-процессуальное право, криминалистика. 2013. № 1, с. 3-8.
4. Антонян Ю.М. Жестокость в нашей жизни. М.: Инфра-М, 1995, –320 с.
5. Антонян Ю.М. Насилие. Человек. Общество. М.: ВНИИ МВД России, 2001, –104 с.
6. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
7. Аракелян С.В. Семейно-бытовые убийства. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2009, –160 с.
8. Буз С.И. Понятие и основные криминологические характеристики насильственных преступлений в современной России // Вестник Краснодарского университета МВД России. 2017. № 3 (37), с. 8-11.

9. Вовленко Н.Н., Латушкин М.А. Соотношение принуждения и насилия: теоретико-правовой аспект // Вестник Волгоградской академии МВД России. 2011. № 1 (16), с. 18-22.
10. Гаухман Л.Д. Насилие как средство совершения преступления. М.: Юрид. лит., 1974, –167 с.
11. Гилинский Я.И. Социальное насилие: теория и российская реальность // Российский криминологический взгляд. 2008. №2, с. 224-235.
12. Иванова В.В. Преступное насилие: Учебное пособие для вузов. М.: ЮИ МВД РФ, Книжный мир, 2002, –83 с.
13. Мошков Д.С. Соотношение уголовно-правовых понятий: принуждение и насилие // Бизнес в законе. 2008. № 1, с. 121-124.
14. Насильственная преступность / Под ред. В.Н. Кудрявцева и А.В. Наумова. М.: «Спарк», 1997, –139 с.
15. Шарапов Р.Д. Насилие как уголовно-правовая категория и его виды // Вестник Тюменского государственного университета. 2006. № 1, с. 132-138.
16. Шарапов Р.Д. Физическое насилие в уголовном праве. СПб.: Юрид. центр Пресс, 2001, –298 с.

§1.2. Բռնությամբ կատարվող հանցագործությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը

Հանցավորության, ինչպես նաև դրա առանձին դրսևորումների, այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների հիմնական բնութագրիչներից են որակական և քանակական համապատասխան ցուցանիշները. դրանց վիճակը, կառուցվածքը և շարժընթացը: Ընդ որում, վիճակը և շար-

ժընթացը հանցավորության քանակական, իսկ կառուցվածքը՝ որակական ցուցանիշներն են:

1. Հանցավորության (այդ թվում բռնությամբ կատարվող հանցագործությունների) **վիճակը** բացարձակ թվերով արտահայտվող այն ցուցանիշների ամբողջությունն է, որոնք արտացոլում են որոշակի տարածքային և ժամանակային սահմաններում գրանցված բոլոր հանցագործությունների կամ դրանց առանձին տեսակների և դրանք կատարողների ընդհանուր քանակը: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում 2023 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին գրանցված հանցագործությունների կամ դրանց համար դատապարտված անձանց քանակը:

2. Բռնությամբ կատարվող հանցագործությունների (ինչպես և ընդհանրապես հանցավորության) **կառուցվածքը** բացարձակ կամ հարաբերական մեծություններով բնութագրվող այն ցուցանիշների ամբողջությունն է, որոնք արտացոլում են հանցագործությունների առանձին տեսակների (կամ հանցանք կատարած առանձին անձանց կամ նրանց որոշակի խմբերի) մասնաբաժինը (տեսակարար կշիռը) հանցագործությունների (առանձին անձանց կամ նրանց որոշակի խմբերի) ընդհանուր քանակում: Օրինակ՝ սպանությունների կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների մասնաբաժինը մարդու դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր քանակում:

3. Հանցավորության (ինչպես նաև բռնությամբ կատարվող հանցագործությունների) **շարժընթացը** որոշակի տարածքում և ժամանակահատվածում համապատասխան որակական և քանակական ցուցանիշների (այսինքն՝ վիճակի և կառուցվածքի) քանակական փոփոխությունն է: Կախված որոշակի նպատակից՝ այն կարող է հաշվարկվել ամսվա,

տարվա, առավել հաճախ՝ հնգամյակի, տասնամյակի կամ, նույնիսկ, ավելի երկար ժամանակահատվածի կտրվածքով: Օրինակ՝ նախորդող կամ նախորդ հինգ կամ տասը տարիների համեմատ՝ 2023 թ. հանցագործությունների քանակի աճը կամ նվազումը:

4. ՀՀ-ում բռնությամբ կատարվող որոշ հանցագործությունների որակական և քանակական հիմնական ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում:

Աղյուսակ 1

Հանցավորության վիճակը, կառուցվածքը և շարժընթացը ՀՀ-ում 2019-2023 թթ.

Հանցատեսակ	2019	2020	2021	2022	2023	Ընդ.
Սպանություններ	47	50	60	58	55	270
Առողջությանը վնասի պատճառումներ	1 112	1 024	976	933	1 062	5 107
Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ*	23	25	14	71	98	231
Խուլիգանություններ	326	338	322	453	600	2 039
Ընդամ. բռնութ. կատ. հանցագործություններ	1 508	1 437	1 372	1 515	1 815	7 647
Ընդամենը գրանցված հանցագործություններ	26 850	26 468	30 245	37 612	40 666	161 841

5. Ներկայացված աղյուսակի վերլուծությունը հիմք է տալիս մատնանշելու ՀՀ-ում 2019-2023 թվականներին գրանցված բռնությամբ կատարվող հանցագործությունների վիճա-

* Օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները 2022 թվականից ներառում են նաև բռնաբարությունները: Աղյուսակում մինչև 2021 թվականը ներկայացված տվյալները վերաբերում են բռնաբարություններին և բռնաբարության փորձերին:

կը, կառուցվածքը և շարժընթացը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

5.1. Վիճակը.

- ✓ Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում ընդամենը գրանցվել է **161 հազար 841** հանցագործություն: Դրանց ամենամեծ թիվը (40 հազ. 666) գրանցվել է **2023**, իսկ ամենափոքրը (26 հազ. 468)¹ **2020** թվականներին:
- ✓ Նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ընդամենը գրանցվել է բռնությամբ կատարվող **7 հազար 647** հանցագործություն¹: Դրանց ամենամեծ թիվը (1 հազ. 815) գրանցվել է **2023**, իսկ ամենափոքրը (1 հազ. 372)¹ **2021** թվականներին:
- ✓ 2019-2023 թվականներին ՀՀ-ում գրանցվել է **270** սպանություն, **5 հազար 107** առողջությանը վնասի (անկախ ծանրության աստիճանից) պատճառում, **231** սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարում (2019-2021 թթ. ցուցանիշները վերաբերում են միայն բռնաբարություններին և դրանց փորձերին), ինչպես նաև **2 հազար 039** խուլիգանություն:
- ✓ Սպանությունների պարագայում ամենամեծ թիվը (60) գրանցվել է **2021**, իսկ ամենափոքրը (47)¹ **2019** թվականին: Առողջությանը վնասի (անկախ ծանրության աստիճանից) պատճառումների ամենամեծ թիվը (1

¹ ՀՀ քր. օր.-ով նախատեսված այն հանցագործությունների թիվը, որոնց պարագայում բռնությունը կա՛մ նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ, կա՛մ միանշանակորեն ենթադրվում է, շատ ավելի մեծ է: Ուստի, ներկայացված թվային ցուցանիշները պայմանական են:

հազ. 112) գրանցվել է **2019**, իսկ ամենափոքրը (933)՝ **2022** թվականներին: Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարման դեպքերի (2019-2021 թթ. ցուցանիշները վերաբերում են միայն բռնաբարություններին և դրանց փորձերին) ամենամեծ թիվը (98) գրանցվել է **2023**, իսկ ամենափոքրը (14)՝ **2021** թվականներին: Խուլիգանությունների ամենամեծ թիվը (600) գրանցվել է **2023**, իսկ ամենափոքրը (322)՝ **2021** թվականներին:

5.2. Կառուցվածքը.

- ✓ 2019-2023 թթ. Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր հանցագործությունների կառուցվածքում բռնությամբ կատարվող առավել տարածված և վտանգավոր հանցավոր արարքների մասնաբաժինը կազմել է **4,72%**: Ընդ որում, ընդհանուր հանցավորության կառուցվածքում բռնությամբ կատարվող վերոհիշյալ հանցագործությունների մասնաբաժինն ամենամեծը (5,61%) եղել է **2019** թվականին, իսկ ամենափոքրը (4,02%)՝ **2022** թվականին:
- ✓ Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված բռնությամբ կատարվող վերոհիշյալ հանցագործությունների կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը (**66,78%**) առողջությանը վնասի (անկախ ծանրության աստիճանից) պատճառումներինն է: Դրանց հաջորդում են խուլիգանությունները, որոնց մասնաբաժինը **26,67%** է: Վերջիններիս հաջորդող սպանությունների մասնաբաժինը **3,53%** է: Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների մասնաբաժինն ամենափոքրն է՝ **3,02%**:

- ✓ Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված բռնությամբ կատարվող վերոհիշյալ հանցագործությունների կառուցվածքում սպանությունների մասնաբաժինն ամենամեծը (4,37%) եղել է **2021** թվականին, իսկ ամենափոքրը (3,03%)՝ **2023** թվականին: Համապատասխանաբար՝
 - առողջությանը վնասի (անկախ ծանրության աստիճանից) պատճառումների մասնաբաժինն ամենամեծը (73,74%) եղել է **2019** թվականին, իսկ ամենափոքրը (58,51%)՝ **2023** թվականին,
 - սեքսուալ բնույթի բռնի գործողությունների մասնաբաժինն ամենամեծը (5,39%) եղել է **2023** թվականին, իսկ ամենափոքրը (1,02%)՝ **2021** թվականին,
 - իսկ խուլիգանությունների մասնաբաժինն ամենամեծը (33,05%) եղել է **2023** թվականին, իսկ ամենափոքրը (21,61%)՝ **2019** թվականին:
- ✓ 2019-2023 թվականներին ՀՀ-ում գրանցված բոլոր հանցագործությունների կառուցվածքում սպանությունների մասնաբաժինը **0,16%** է, առողջությանը վնասի (անկախ ծանրության աստիճանից) պատճառումներինը՝ **3,15%**, սեքսուալ բնույթի բռնի գործողություններինը՝ **0,14%**, խուլիգանություններինը՝ **1,25%**:
- ✓ Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված բոլոր հանցագործությունների կառուցվածքում սպանությունների մասնաբաժինն ամենամեծը (0,19%) եղել է **2021** թվականին, իսկ ամենափոքրը (0,13%)՝ **2023** թվականին: Համապատասխանաբար՝
 - առողջությանը վնասի պատճառումների մասնաբաժինն ամենամեծը (4,14%) եղել է **2019** թվականին, իսկ ամենափոքրը (2,48%)՝ **2022** թվականին,

- սեքսուալ բնույթի բռնի գործողությունների մասնաբաժինն ամենամեծը (0,24%) եղել է **2023** թվականին, իսկ ամենափոքրը (0,04%)՝ **2021** թվականին,
- իսկ խուլիգանությունների մասնաբաժինն ամենամեծը (1,47%) եղել է **2023** թվականին, իսկ ամենափոքրը (1,06%)՝ **2021** թվականին:

5.3. Շարժընթացը.

- ✓ 2019-2023 թթ. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ արձանագրվել է գրանցված բոլոր հանցագործությունների **կայուն աճ**: Բացառություն է 2020 թվականը, որի պարագայում, նախորդ տարվա համեմատ, տեղի է ունեցել դրանց ոչ շոշափելի նվազում: Մասնավորապես, ինտերվալային համապատասխան դինամիկական շարքերի կառուցման արդյունքում ստացվում է հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 2-ը).

Աղյուսակ 2

Հանցավորության շարժընթացը ՀՀ-ում 2019-2023 թթ.

Տարի	Հանցագործությունների քանակ	Բացարձակ աճ (նվազում), շղթայական	Աճի (նվազման) տեմպ (շղթայական)	Աճի (նվազման) տեմպ (բազիսային)
2018	22 551	—	—	—
2019	26 850	+ 4 299	+ 19,06%	+ 19,06%
2020	26 468	– 382	– 1,43%	+ 17,37%
2021	30 245	+ 3 777	+ 14,27%	+ 34,12%
2022	37 612	+ 7 367	+ 24,35%	+ 66,79%
2023	40 666	+ 3 054	+ 8,12%	+ 80,33%

Ներկայացված աղյուսակից կարելի է եզրակացնել նաև, որ քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված հանցագործությունների առավել մեծ **շղթայական** աճը (նա-

խորդ տարվա համեմատ) արձանագրվել է **2022 թվականին՝** կազմելով + 7 367 (կամ 124,35%), իսկ ամենափոքրը՝ **2023 թվականին՝** կազմելով + 3 054 (կամ 108,12%): Համապատասխանաբար՝ առավել մեծ **բազիսային** աճը (2018 թ. համեմատ) արձանագրվել է **2023 թվականին՝** կազմելով + 18 115 (կամ 180,33%), իսկ ամենափոքրը՝ **2020 թվականին՝** կազմելով + 3 917 (կամ 117,37%):

- ✓ Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված բռնությամբ կատարվող առավել տարածված և վտանգավոր հանցագործությունների շարժընթացում, հակառակը, պարբերաբար գրանցվել է **մե՛կ աճ, մե՛կ նվազում**, որն արտացոլված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Բռնությամբ կատարվող հանցագործությունների շարժընթացը ՀՀ-ում 2019-2023 թթ.

Տարի	Հանցագործությունների քանակ	Բացարձակ (նվազում), շղթայական	Աճի (նվազման) տեմպ (շղթայական)	Աճի (նվազման) տեմպ (բազիսային)
2018	1 316	—	—	—
2019	1 508	+ 192	+ 14,59%	+ 14,59%
2020	1 437	- 71	- 4,71%	+ 9,19%
2021	1 372	- 65	- 4,52%	+ 4,26%
2022	1 515	+ 143	+ 10,42%	+ 15,12%
2023	1 815	+ 300	+ 19,80%	+ 37,92%

Ներկայացված աղյուսակից կարելի է եզրակացնել նաև, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում գրանցված բռնությամբ կատարվող հանցագործությունների քանակը 2019-ին, 2018-ի համեմատ, աճել է 192-ով: Հաջորդող երկու տարիներին արձանագրվել է դրանց շարունակական նվազում (2020-ին, 2019-ի համեմատ՝ - 71, իսկ 2021-ին, 2020-ի համեմատ՝ - 65): Հետագայում,

սակայն, քննարկվող հանցագործությունների թիվը կրկին շարունակաբար աճել է (2022-ին, 2021-ի համեմատ՝ + 143, իսկ 2023-ին, 2022-ի համեմատ՝ + 300):

Նշված հանցագործությունների առավել մեծ **շղթայական** աճը (նախորդ տարվա համեմատ) արձանագրվել է **2023 թվականին՝** կազմելով + 300 (կամ 119,80%), իսկ ամենափոքրը՝ **2022 թվականին՝** կազմելով + 143 (կամ 110,42%): Համապատասխանաբար՝ առավել մեծ **բազիսային** աճը (2018 թ. համեմատ) արձանագրվել է **2023 թվականին՝** կազմելով + 499 (կամ 137,92%), իսկ ամենափոքրը՝ **2021 թվականին՝** կազմելով + 56 (կամ 104,26%):

- ✓ Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) շարժընթացի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հետազոտողները հաճախ կիրառում են **ինտենսիվության հարաբերական մեծությունը (կամ գործակիցը)** հաշվարկելու մեթոդը¹: Այն, որպես կանոն, կիրառվում է համապատասխան երևույթի տարածվածության աստիճանը բնութագրելու նպատակով:

Մասնավորապես, հետազոտական որոշակի նպատակներից ելնելով՝ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների գործակիցները կարող են հաշվարկվել երկրի բնակչության 10 հազար կամ 100 հազար բնակչի հարաբերակցությամբ: Այն իրականացվում է հետևյալ բանաձևով. հանցագործությունների քանակը բազմապատկվում է՝ համապատասխա-

¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Առաքելյան Ս. Վ., Գաբուզյան Ա. Հ., Մարգարյան Ա.Ռ.** Կրիմինալոգիական հետազոտությունների մեթոդիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր.: Երևանի համալս. հրատ., 2001, էջ 52-53:

նաբար 10 հազարով կամ 100 հազարով, իսկ ստացված արդյունքը բաժանվում էրկրի բնակչության քանակի վրա (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ՀՀ-ում 2019-2023 թթ գրանցված բռնությամբ կատարվող հանցագործությունների գործակիցները 100 հազար բնակչի հարաբերակցությամբ*

Հանցատեսակ	2019	2020	2021	2022	2023
Սպանություններ	1,58	1,68	2,01	1,95	1,84
Առողջությանը վնասի պատճառումներ	37,3	34,3	32,7	31,3	35,6
Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ**	0,77	0,84	0,47	2,38	3,29
Խուլիգանություններ	10,9	11,3	10,8	15,2	20,1
Ընդամենը բռնությամբ կատ. հանցագործություններ	50,6	48,2	46,0	50,8	60,9

Տվյալ մեթոդի հիմնական առավելություններից մեկն այն է, որ դրա կիրառմամբ հնարավոր է համեմատել հանցավորության վիճակը և այլ ցուցանիշներն անգամ տարածքով ու բնակչության թվաքանակով էապես տարբերվող պետություններում, օրինակ՝ ՀՀ-ում և ՌԴ-ում և այլն:

- ✓ Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) վիճակը և շարժընթացն առավել պատկերավոր ներկայացնելու նպատակով հա-


* Հաշվի է առնվել ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2023 թ. ապրիլի 1-ի դրությամբ՝ 2 մլն 981 հազ. 200:

** Ինչպես արդեն նշվել է, աղյուսակում մինչև 2021 թ. ներկայացված տվյալները վերաբերում են բռնաբարություններին և բռնաբարության փորձերին:

ճախ կիրառվում է գրաֆիկական մեթոդը (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված բռնությանը կատարվող հանցագործությունների շարժընթացը



- ✓ Բռնությամբ կատարվող հանցագործությունների առանձին տեսակների (սպանությունների, ինչպես նաև դիտավորությամբ առողջությանը վնասի պատճառումների, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների և խուլիգանությունների) շարժընթացների առանձնահատկություններին մանրամասն անդրադարձ կկատարվի սույն ձեռնարկի Գլուխ 2-ի շրջանակներում:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Առաքելյան Ս. Վ., Գաբուլյան Ա. Հ., Մարգարյան Ա. Ռ. Կրիմինալոգիական հետազոտությունների մեթոդիկա:

- Ոստմնական ձեռնարկ: Եր.: Երևանի համալս. հրատ., 2001, –208 էջ:
2. Առաքելյան Ս. Վ. Իրավական վիճակագրությունը ՀՀ-ում: Ոստմնական ձեռնարկ: Եր.: Երևանի համալս. հրատ., 2011, –136 էջ:
 3. Антонян Ю.М., Верещагин В.А., Коимшиди Г.Ф. Наиболее опасные насильственные преступления в России // Россия и современный мир. 2001. – № 2, с. 116-125.
 4. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
 5. Аракелян С.В. Семейно-бытовые убийства. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2009, –160 с.
 6. Аракелян С.В. Тенденции насильственной преступности в Республике Армения // Բանբեր Երևանի համալսարանի: Իրավագիտություն: 2010: – № 132.3, с. 35-41.
 7. Артюшина О.В. Показатели преступности как основа криминологической характеристики (на примере насильственной преступности) // Вестник Тюменского института повышения квалификации сотрудников МВД России. 2015 № 2(5), с. 121-125.
 8. Буз С.И. Понятие и основные криминологические характеристики насильственных преступлений в современной России // Вестник Краснодарского университета МВД России. 2017. – № 3 (37), с. 8-11.
 9. Буз С.И., Федченко В.В. Состояние и основные тенденции насильственной преступности в России // Вестник Краснодарского университета МВД России. 2016. – № 4 (34), с. 8-12.

10. Насильственная преступность / Под ред. В.Н. Кудрявцева и А.В. Наумова. М.: «Спарк», 1997, –139 с.
11. Ольков С.Г. Насильственная преступность в России: сущность, тенденции, закономерности, преступники и жертвы, ущерб и противодействие // Публичное и частное право. 2010. – № V, с. 21-47.
12. Фомин С.А. Криминологические характеристики преступности и основные показатели характеристик преступности, ее отдельных групп и видов на современном этапе // Вестник Сибирского юридического института МВД России. 2018. – № 1 (30), с. 94-103.

§1.3. Բռնությամբ հանցանք կատարողի կրիմինալոգիական բնութագիրը

Հանցագործությունների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) կանխարգելման արդյունավետությունը մեծապես կախված է հանցագործի անձը բնութագրող առանձնահատկությունների վերաբերյալ հնարավորինս ամբողջական և բազմակողմանի պատկերացումից: Բանն այն է, որ հենց անձն է համապատասխան հանցավոր արարքների կատարման պատճառների կրողը:

Այսինքն՝ հանցագործի անձը հանցավոր ցանկացած վարքագծի մեխանիզմի շղթայի հիմնական և կարևորագույն օղակն է, որի առանձնահատկություններն էլ պետք է լինեն կանխարգելիչ ներգործության անմիջական օբյեկտ: Այլ կերպ ասած՝ հանցագործի (այդ թվում՝ բռնությամբ հանցանք կատարողի) անձնային առանձնահատկությունների ուսումնասիրությունն անհրաժեշտ է նրա այն հատկությունների և գծերի

բացահայտման համար, որոնք նպաստում են կամ կարող են նպաստել համապատասխան հանցանքների կատարմանը և պետք է հաշվի առնվեն կանխարգելիչ միջոցառումներ մշակելիս և իրականացնելիս:

1. Հանցագործի անձը մշտապես եղել է և կա կրիմինալ-գիայի **կենտրոնական հիմնախնդիրներից** մեկը: Դրա էությունը նախ և առաջ անձի որոշակի հատկությունների և որակների առկայության կամ բացակայության բացահայտումն է, որոնք՝

1) կարող են դրվել հանցագործին օրինապահ քաղաքացուց տարբերակելու հիմքում,

2) կարող են դիտարկվել որպես հանցագործի սոցիալական տիպի առանձնացման հիմք,

3) կանխորոշում են որոշակի խնդրահարույց իրավիճակներում վարքագծի հենց հանցավոր տարբերակի ընտրությունը:

2. Մարդկանց ընդհանուր զանգվածից հանցագործների առանձնացումն առաջին հերթին իրականացվում է **իրավաբանական չափանիշի**՝ հանցանք (տվյալ դեպքում՝ բռնությամբ զուգորդված) կատարելու փաստի հիման վրա: Այսինքն՝ հանցագործի անձի մասին հարկ է խոսել հենց նրա դրսևորած հանցավոր վարքագծի կապակցությամբ:

Միևնույն ժամանակ, սակայն, կրիմինալոգիական տեսանկյունից ուշադրության արժանի են ոչ միայն արդեն իսկ հանցանք կատարած անձինք, այլև նրանք, որոնց կենսակերպը, շփումները, հայացքները և արժեքային կողմնորոշումները վկայում են վերջիններիս կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու **հավանականության** մասին: Մասնավորապես, խոսքը ոչ միայն հանցագործության համար դատապարտված

անձանց մասին է, այլև ալկոհոլամոլների, թմրամոլների, թափառաշրջիկների, մարմնավաճառների, ինչպես նաև վարչական և հակահասարակական մանր իրավախախտումներ կատարողների:

3. Յու. Մ. Անտոնյանն առաջարկում է հանցագործի անձի հիմնախնդիրների հետազոտությունը պատկերացնել որպես որոշակի ալգորիթմ, որը պայմանականորեն կարելի է բաժանել **չորս հիմնական մասի՝**

1) հանցագործի **անձի ձևավորում** (անձի և կյանքի կոնկրետ իրավիճակի փոխազդեցության գործընթացը մինչև հանցագործությունը և դրա ընթացքում),

2) հանցագործի (կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի) անձը նրա կողմից կատարված հանցանքի կապակցությամբ **արդարադատություն իրականացնելիս,**

3) հանցագործի (դատապարտյալի) անձը նրա կողմից կատարված հանցանքի համար **պատիժ կրելիս** (այդ թվում՝ ազատազրկման վայրում),

4) հանցագործի անձը **պատիժ կրելուց հետո** կյանքի նոր պայմաններին հարմարվելիս (նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականության կապակցությամբ)¹:

4. Այսպիսով, ենթադրվում է բռնությամբ հանցանք կատարողի անձը բնութագրող սոցիոլոգիական, հոգեբանական, իրավական, բժշկական և այլ առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա պատկերացում կազմելու հանցավոր համապատասխան վարքագծի դրսևորման պատճառների և դրա կանխարգելման հիմնական ուղղությունների մասին: Այդ կապակցությամբ առաջարկվում է քննարկել ՀՀ-ում բռնությամբ հան-

¹ Տե՛ս **Антонян Ю.М.** Криминология. Избранные лекции. М., 2004, էջ 77:

ցանք կատարողների **անձնային հատկությունների** հետևյալ չորս խումբը՝

- **սոցիալ-ժողովրդագրական** (սեռ, տարիք, կրթություն, սոցիալական դրություն և այլն),
- **քրեահրավական** (հանցագործության ծանրության աստիճան, դիտավորության տեսակ, հանցանքի միանձնյա կամ խմբի կազմում կատարում, քրեական անցյալ և այլն),
- **բարոյահոգեբանական** (շարժառիթներ, համոզմունքներ, պահանջմունքներ, հետաքրքրություններ, հայացքներ, հակումներ, արժեքային կողմնորոշումներ և այլն),
- **կենսաֆիզիոլոգիական** (առողջական վիճակ, հիվանդությունների, հոգեկան առողջության խնդիրների առկայություն և այլն):

4.1. Սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները.

- ✓ Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, ըստ էության, անկետային տվյալներ են, որոնք բնորոշ են համապատասխան երկրի ամբողջ ազգաբնակչությանը: Բռնությամբ հանցանք կատարողների վերաբերյալ դրանք ուսումնասիրելիս, սակայն, կարող են բացահայտվել որոշակի առանձնահատկություններ:

Այսպես, օրինակ՝ ՀՀ ազգաբնակչության կազմում արական և իգական սեռերի ներկայացուցիչները համեմատաբար հավասար են բաշխված: Մինչդեռ բռնությամբ առավել տարածված և վտանգավոր հանցանքները կատարող անձանց պարագայում գերակշռում են **տղամարդիկ**, որոնց մասնաբաժինը **95,7%** է (տե՛ս աղյուսակ 5):

**ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների բաշխվածությունն
ըստ սեռի (%)**

	Սպանութ.	Առողջ. վն. պատճ.	Սեքս. բն. բռնի գործ.	Խուլիգ.	Ընդամենը բռն. կատ.
Տղամ.	94,7	97,6	99,1	91,4	95,7
Կին	5,3	2,4	0,9	8,6	4,3

Ներկայացված աղյուսակից կարելի է հետևություն անել նաև, որ **կանայք** առավել **մեծ** տեսակարար կշիռ (**8,6%**) ունեն խուլիգանությունների, իսկ առավել **փոքր** (**0,9%**)՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կառուցվածքում:

- ✓ Կրիմինալոգիական կարևոր նշանակություն ունի նաև բռնությամբ հանցանք կատարողների **տարիքին** վերաբերող ցուցանիշների ուսումնասիրությունը: Բանն այն է, որ զգալի չափով հենց տարիքով են պայմանավորված անձի ֆիզիկական վիճակն ու հնարավորությունները, նրա պահանջմունքների, հետաքրքրությունների, մոլումների, ցանկությունների, արժեքային կողմնորոշումների շրջանակը:

Մասնավորապես, տարիքի փոփոխությամբ պայմանավորված՝ փոփոխվում են նաև անձի սոցիալական դիրքորոշումները, դերերն ու գործառույթները, նրա կենսափորձը, հմտությունները և կարողությունները, սովորությունները, մոտիվացիայի ոլորտն ու տարբեր իրավիճակներին արձագանքելու դրսևորումները:

- ✓ Միաժամանակ, բռնությամբ հանցանք կատարողների տարիքային առանձնահատկությունների բացահայտումը կարևոր նշանակություն ունի նաև քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի հիմնական ուղ-

ղությունները որոշելու և կանխարգելիչ արդյունավետ միջոցներ մշակելու, դրանք կենսագործելու համար: Այդ կապակցությամբ համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի (%)

	Սպանութ.	Առողջ. վն. պատճ.	Սեքս. բն. բռնի գործ.	Խուլիգ.	Ընդամենը բռն. կատ.
14-15 տ.	0,7	2,9	0,5	1,1	1,3
16-17 տ.	2,8	9,9	3,2	3,4	4,8
18-24 տ.	16,9	25,3	25,0	18,8	21,5
25-29 տ.	17,1	17,0	22,9	18,9	19,0
30-49 տ.	47,6	35,6	42,0	45,9	42,8
50 և ավել	14,9	9,3	6,4	11,9	10,6

Ներկայացված աղյուսակից կարելի է հետևություն անել, որ ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների պարագայում գերակշիռ մասը (**93,9%**) մեծահասակներն են (չափահասները): Ընդ որում, նրանց կազմում բռնությամբ զուգորդված հանցավոր վարքագծի դրսևորման առումով առավել ակտիվ են 30-49 տարեկանները (**42,8%**), որոնց հաջորդում են 18-24 տարեկանները (**21,5%**), այնուհետև 25-29 տարեկանները (**19,0%**) և 50 ու բարձր տարիքային խմբի ներկայացուցիչները (**10,6%**): Բացի այդ, մեծահասակների տեսակարար կշիռն ամենամեծն է սպանություններ կատարողների (**96,5%**), իսկ ամենափոքրը՝ դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառողների (**87,2%**) պարագայում:

Միևնույն ժամանակ, ներկայացված աղյուսակից հետևում է, որ ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների կազմում անչափահասների մասնաբաժինը շուրջ **16 անգամ** փոքր է այն անձանց համեմատ, որոնց 18 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին: Ընդ որում, նրանց տեսակարար կշիռն ամենամեծն է դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառողների պարագայում (**12,8%**), որոնց հաջորդում են խուլիգանություններ (**4,5%**), սեքսուալ բնույթի բռնի գործողություններ (**3,7%**) և սպանություններ (**3,5%**) կատարողները:

- ✓ ՀՀ-ում բռնությամբ զուգորդված առավել տարածված և վտանգավոր հանցանքները կատարող անձանց **կրթական մակարդակի** կապակցությամբ հարկ է նշել, որ նրանց մեծ մասը (**45,3%**) միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցողներն են: Վերջիններիս նվազման կարգով հաջորդում են ոչ լրիվ միջնակարգ (**28,9%**), ոչ լրիվ բարձրագույն (**13,5%**) և բարձրագույն (**12,3%**) կրթություն ունեցողները:
- ✓ Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև ՀՀ-ում քննարկվող հանցանքները կատարողների **գրաղվածության** վերաբերյալ ցուցանիշները: Այդ առումով հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ նշված անձանց կազմում **զգալիորեն գերակշռում են** գործազուրկները և անկայուն եկամուտ ունեցողները: Անհամեմատ ավելի փոքր է մշտական աշխատանք ունեցողների և կրթական տարբեր հաստատություններում սովորողների թիվը (տե՛ս աղյուսակ 7-ը): Ընդ որում, գործազուրկների և անկայուն եկամուտ ունեցողների տեսակարար կշիռը բավա-

կանին բարձր է ոչ միայն բռնությամբ կատարվող հանցագործությունների, այլև հանցավոր վարքագծի այլ դրսևորումների (այդ թվում՝ շահադիտական և անզգույշ հանցագործությունների) պարագայում:

Աղյուսակ 7

Տեղեկություններ ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների զբաղվածության վերաբերյալ (%)

	Սպանութ.	Առողջ. վն. պատճ.	Սեքս. բն. բռնի գործ.	Խուլիգ.	Ընդամենը բռն. կատ.
Գործազ.	76,1	76,4	83,5	77,3	78,3
Մշտ. աշխ. ունեցող	0,5	0,3	0,0	0,6	0,4
Սովորող	0,6	1,5	0,0	1,2	0,8
Անկայուն եկամ. ուն.	22,8	21,8	16,5	20,9	20,5

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ ՀՀ-ում բռնությամբ զուգորդված առավել տարածված և վտանգավոր հանցանքները կատարող անձանց կազմում ամենամեծ մասնաբաժինը (78,3%) **գործազուրկներինն** է: Նրանց նվազման կարգով հաջորդում են **անկայուն եկամուտ ունեցողները** (20,5%), **սովորողները** (0,8%) և **մշտական աշխատանք ունեցողները** (0,4%): Ընդ որում, գործազուրկներն ամենաբարձր (**83,5%**) տեսակարար կշիռն ունեն սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, իսկ ամենացածրը (**76,1%**)՝ սպանությունների պարագայում: Ուշագրավ է նաև, որ մշտական աշխատանք ունեցողներն ու սովորողներն **աչքի չեն ընկնում** սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարմամբ:

4.2. Քրեաիրավական առանձնահատկությունները.

- ✓ Նախ, ի տարբերություն սոցիալ-ժողովրդագրականների, քրեաիրավական առանձնահատկությունները բնորոշ են միայն հանցանք (տվյալ դեպքում՝ բռնությամբ զուգորդված) կատարած անձանց: Այդ առումով հատուկ ուշադրության է արժանի, այսպես կոչված, **կրիմինալոգիական** (փաստացի՝ անկախ դատվածությունից կամ դրա մարված կամ հանված լինելուց) **ռեցիդիվի** վերաբերյալ հարցը:
- ✓ Մասնավորապես, ՀՀ-ում բռնությամբ զուգորդված առավել տարածված և վտանգավոր **ամեն չորրորդ** հանցանքը կատարվում է նախկինում քրեաիրավական որևէ արգելք խախտած անձի կողմից (տե՛ս աղյուսակ 8):

Աղյուսակ 8

Տեղեկություններ ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների քրեական անցյալի վերաբերյալ (%)

	Սպանութ.	Առողջ. վն. պատճ.	Սեքս. բն. բռնի գործ.	Խուլիգ.	Ընդամենը բռն. կատ.
Նախկ. հանց. կատ.	25,3	19,4	34,6	16,5	24,0
Նախկ. հանց. չկատ.	74,7	80,6	65,4	83,5	76,0

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ նշված հանցանքները կատարած անձանց **գերակշիռ մասը** (76,0%) նախկինում չի կատարել քրեորեն պատժելի որևէ արարք:

Կրկնահանգագործների տեսակարար կշիռը, սակայն, բավականին բարձր է (**24,0%**):

Ուշագրավ է նաև, որ նախկինում հանցանք կատարածների մասնաբաժինն **ամենամեծն է** (34,6%) սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, **իսկ ամենափոքրը՝** խուլիգանությունների (16,5%) պարագայում:

- ✓ Կրիմինալոգիական առումով կարևոր նշանակություն ունի նաև քննարկվող հանցանքները միանձնյա և խմբի կազմում կատարելու վերաբերյալ տվյալների վերլուծությունը (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Տեղեկություններ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների խմբային բնույթի վերաբերյալ (%)

	Սպանութ.	Առողջ. վն. պատճ.	Սեքս. բն. բռնի գործ.	Խուլիգ.	Ընդամենը բռն. կատ.
Միանձն.	89,0	96,5	87,8	85,7	89,7
Խմբի կազմում որից՝	11,0	3,5	12,2	14,3	10,3
չափ-րի	88,1	59,0	87,0	76,7	77,6
անչափ-րի	0,0	13,1	0,0	5,3	4,6
խառը	11,9	27,9	13,0	18,0	17,8

Ներկայացված աղյուսակի վերլուծությունից կարելի է հետևություն անել, որ ՀՀ-ում քննարկվող հանցանքները հիմնականում (**89,7%**) կատարվում են միանձնյա: Խմբի կազմում կատարվում են ընդամենը դրանց **10,3%-ը**: Ընդ որում, դրանց 77,6%-ը կատարվում են **միայն չափահասներից**, 17,8%-ը՝ **անչափահասների մասնակցությամբ** (խառը), և միայն 4,6%-ը՝ **միայն անչափահասներից** կազմված խմբերի կողմից:

Բացի այդ, խմբի կազմում առավել հաճախ (**89,7%**) կատարվում են խուլիգանությունները: Դրանց նվազման կարգով հաջորդում են սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (**12,2%**), սպանությունները (**11,0%**) և դիտավորությամբ առողջությանը վնասի պատճառումները (**89,7%**):

Ուշագրավ է նաև, որ միայն անչափահասներից կազմված խմբերը դիտավորությամբ առողջությանը վնասի պատճառումներ կատարում են առավել հաճախ (**13,1%**), քան խուլիգանություններ (**5,3%**): Ավելին, նշված անձանցից կազմված խմբերն **աչքի չեն ընկնում** սպանություններ և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելով:

4.3. Բարոյահոգեբանական առանձնահատկությունները.

- ✓ ՀՀ-ում բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարողներին հիմնականում **բնորոշ** բարոյահոգեբանական հատկություններն են կոնֆլիկտայնությունը, հուզական անկայունությունը, թուլականությունը, հակվածությունը բացասական ազդեցությանը, իմպուլսիվությունը, դյուրագրգիռությունը, ներքին արգելակման անբավարարությունը, չափազանց ներշնչողականությունը, ագրեսիվությունը, գերիշխելու, ուրիշներին ենթարկեցնելու ձգտումը և դրանց հետ կապված այլ հատկությունները:
- ✓ Նշված անձանց (վերջին հանցագործության հետ չկապված) **ագրեսիվությունն** առավելապես դրսևորվել է մերձավորների կամ մերձավոր ազգականների նկատմամբ (**42,8%**): Նրանց հաջորդել են հանցավորի հասակակիցները և գործընկերները (**15,6%**), պատահական անձինք (**9,3%**), ընդհանուր առմամբ բոլորը (**6,8%**), ընտանի և թափառական կենդանիները

(3,7%): Ընդ որում, հիշատակված ագրեսիվությունը գլխավորապես արտահայտվել է ուրիշներին ենթարկեցնելու, նրանց նկատմամբ գերիշխելու ձգտման, ծեծի, մարմնական վնասվածքներ հասցնելու, կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի մեջ:

- ✓ ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների անձնային առանձնահատկությունների շարքում հարկ է ընդգծել նաև դյուրագրգռությունը, բռնկվողությունը և հուզական անկայունությունը (27,9%), անընդհատ պաշտպանվելու հակվածությունը (18,4%), նեղացկոտությունը (12,8%), իմպուլսիվությունը (11,5%), շրջապատին, այլ անձանց, միջավայրը մեղադրելու հակվածությունը (9,6%), անձի հակասոցիալական ուղղվածությունը (8,3%), տարատեսակ հատկությունների համադրությունը (7,8%) և հոգեկան տհասությունը (3,7%):
- ✓ Քննարկվող կատեգորիայի անձանց բնորոշ են հոգեբանական, երբեմն նաև՝ սոցիալական **օտարվածությունը**, բարոյական և իրավական նորմերի յուրացման հետ կապված **բարդությունները**: Նրանք համարում են, որ այլ, իրենց կարծիքով՝ վատ մտադրություններ ունեցող մարդկանցից հարկավոր է պաշտպանվել ցանկալի է՝ առաջինը նրանց վրա հարձակվելով: Այսինքն՝ բռնությամբ զուգորդված հանցանք կատարողներին հաճախ բնորոշ է նաև անձամիջյան հարաբերությունների վերաբերյալ **խեղաթյուրված պատկերացումը**:
- ✓ Հետաքրքրարժան է նաև քննարկվող հանցանքները կատարող անձանց **վերաբերմունքն օրենքներին, իրավական նորմերի պահանջներին**: Այսպես, ընդունելի համարելով որոշ իրավակարգավորումներ, վեր-

ջիններս հաճախ մերժում են մյուսները՝ դրանք գնահատելով որպես անարդար, իրենց շահերին չհամապատասխանող: Ավելին, նրանցից շատերը համարում են, որ կոնկրետ իրավիճակից ելնելով՝ որոշակի իրավական արգելքներ (այդ թվում՝ քրեաիրավական) կարելի է նաև անտեսել, շրջանցել:

4.4. Կենսաֆիզիոլոգիական առանձնահատկությունները.

- ✓ ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարող անձանց բնութագրող նշված առանձնահատկությունները նախ և առաջ կարևորվում են որպես նրանց **սոցիալականացումը բարդացնող** գործոններ: Բանն այն է, որ ֆիզիկական արատները, քրոնիկ ծանր հիվանդությունները և հիվանդագին այլ վիճակները խիստ սահմանափակում են մարդու կրթություն ստանալու, մասնագիտական պատրաստում անցնելու, աշխատանքի տեղավորվելու, կենցաղը կազմակերպելու և բնականոն կենսագործունեություն ծավալելու հետ կապված այլ հնարավորությունները: Որոշակի **հոգեբարավմաբիկ ազդեցություն** ունենալով՝ դրանք կարող են նաև էապես բարդացնել միջանձնային շփումները, շրջապատի հետ փոխհարաբերությունները:
- ✓ Քննարկվող կատեգորիայի անձանց բնորոշ կենսաֆիզիոլոգիական առանձնահատկությունների շարքում կարելի է առանձնացնել՝ զարգացման վաղ շրջանի պաթոլոգիաների դրսևորումները (**27,2%**), գիշերային վախերը (**18,1%**), լոգոնևրոզը (**6,0%**) և հիպերդինամիկ խանգարումները (**3,4%**): Մյուսների մոտ հիվանդագին նման վիճակներ չեն հայտնաբերվել:

- ✓ Քննարկվող կատեգորիայի անձանց 17,2%-ի **ժառանգականությունը** ծանրաբեռնված է եղել ալկոհոլամոլությամբ, 7,1%-ինը՝ շիզոֆրենիայով, 3,5%-ինը՝ էպիլեպսիայով: Մյուսների մոտ հոգեկան առողջության նման խնդիրներ չեն հայտնաբերվել:
- ✓ ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների զգալի մասը (**շուրջ 35%-ը**) տառապել է մեղսունակությունը չբացառող հոգեկան տարբեր շեղումներով (անոմալիաներով): Դրանց շարքում առավել տարածվածը ալկոհոլամոլությունն է (**37,5%**), որին հաջորդում են փսիխոպատիան (**20,9%**), գանգուղեղային վնասվածքների մնացորդային երևույթները (**13,8%**), կենտրոնական նյարդային համակարգի օրգանական հիվանդությունները (**9,1%**), թեթև դեբիլության աստիճանի օլիգոֆրենությունը (**7,6%**), թմրամոլությունը (**6,4%**), շիզոֆրենիան (**2,9%**) և էպիլեպսիան (**1,8%**): Նշված խանգարումներով տառապողների միայն **11,2%-ն** է համապատասխան փորձաքննությունների արդյունքներով ճանաչվել անմեղսունակ:

5. Հանցավոր վարքագծի (այդ թվում՝ բռնությամբ զուգորդված) զարգացման մեխանիզմում առանձնահատուկ է նաև **հարբեցողության** հանցածին նշանակությունը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հարբածությունը զգալիորեն թուլացնում է ներքին արգելքները, զսպող մեխանիզմները և խախտում ինքնատիրապետումը: Ավելին, հարբածության (զլխավորապես՝ ալկոհոլային) վիճակում հանցանք (հատկապես՝ բռնությամբ զուգորդված) կատարած անձինք հաճախ պնդում են, որ ոչինչ չեն հիշում կատարվածի մասին:

Հատկապես ակոհոլը և թմրեցնող նյութերը, ինչպես հայտնի է, քայքայիչ ներգործություն ունեն մարդու օրգանիզմի վրա և պարբերական ու մեծաքանակ գործածման պարագայում կարող են հանգեցնել անգամ նրա կենտրոնական նյարդային համակարգի ախտահարման: Մասնագետները պնդում են, որ դրանց ազդեցության տակ մարդն ավելի դյուրագրգիռ, ագրեսիվ, կոպիտ, անզուսպ և անկաշկանդ է դառնում, թուլանում, իսկ երբեմն նույնիսկ դադարում են գործել ներքին արգելակման գործընթացները¹:

Պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ-ում բռնությամբ զուգորդված հանցանքները բավականին հաճախ կատարվում են հենց հարբածության վիճակում (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10

ՀՀ-ում ոչ սթափ վիճակում բռնությամբ հանցանք կատարողների տեսակարար կշիռը (%)

	Սպանութ.	Առողջ. վն. պատճ.	Սեքս. բն. բռնի գործ.	Խուլիգ.	Ընդամենը բռն. կատ.
Ակ.հարբ. վիճակում	22,5	20,4	30,3	29,3	25,6
Թմր.հարբ. վիճակում	0,5	0,1	0,0	0,1	0,2
Սթափ վիճակում	77,0	79,5	69,7	70,6	74,2

Ներկայացված տվյալներից հետևում է, որ ՀՀ-ում հարբած վիճակում կատարվում է բռնությամբ զուգորդված հանցագործությունների **25,8%**-ը: Ընդ որում, դրանց գերակշիռ

¹ Տե՛ս, օրինակ՝ **Бородин С.В., Побегайло Э.Ф.** Криминологическая характеристика умышленных убийств. М., 1981, էջ 22-23:

մասը (**99,2%-ը**) կատարվում է ակոհոլի և ընդամենը **0,8%-ը՝** թմրեցնող նյութերի ազդեցության տակ:

Բացի այդ, առավել հաճախ (**30,3%**) հարբած վիճակում են կատարվում սեքսուալ բնույթի բռնի գործողությունները: Վերջիններիս հաջորդում են խուլիգանությունները (**29,4%**), սպանությունները (**23,0%**), դիտավորությամբ առողջությանը վնասի պատճառումները (**20,5%**): Ուշագրավ է, որ թմրանյութային հարբածության վիճակում կատարված սեքսուալ բնույթի բռնի գործողություններ չեն արձանագրվել:

6. Բռնությամբ կատարվող հանցագործությունների պատճառների մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու, դրանք կատարողների անձնային առանձնահատկությունները հնարավորինս հստակ նկարագրելու, ինչպես նաև դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունն ապահովելու նկատառումներով կարևորվում է նաև որոշակի հատկանիշներով նշված **հանցանքները կատարողների դասակարգումը** (նրանց տիպերի առանձնացումը): Բանն այն է, որ հանցանք (այդ թվում՝ բռնությամբ զուգորդված) կատարած բոլոր անձինք, մի կողմից, տարբերվում են իրարից ժողովրդագրական, հոգեբանական, իրավական և այլ հատկանիշներով, այդ նույն հատկանիշներով կարող են նաև նմանվել և ներառվել ընդհանուր առանձնահատկություններով բնութագրվող տարատեսակ կայուն խմբերում:

Հանցագործների տիպաբանության հիմնախնդիրն արդեն վաղուց տարբեր հետազոտողների (այդ թվում՝ քրեագետների) ուշադրության կենտրոնում է¹: Ներկայումս առավել

¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ՝ **Ферри Э.** Уголовная социология. М., 2009, էջ 147-165, **Антонян Ю. М.** Криминология. Избранные лекции, էջ 90:

տարածված և ընդունված մոտեցումները հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել բոնությամբ հանցանք կատարողների հետևյալ **տիպերը**.

- 1) **ըստ հակասոցիալական ուղղվածության և արժեքային կողմնորոշումների՝** ա) այլ անձի և նրա կարևորագույն բարիքների նկատմամբ բացասական-արհամարհական վերաբերմունք ունեցողներ, բ) որոշակի նորմատիվ իրավակարգավորումների և իրավական պարտականությունների նկատմամբ հակասոցիալական, անհատապաշտական վերաբերմունք ունեցողներ,
- 2) **ըստ հակասոցիալական ուղղվածության խորության և կայունության՝** ա) **պատահական** (առաջին անգամ հանցանք կատարողներ, որոնց նախորդող վարքագիծն ընդհանուր առմամբ դրական է բնութագրվում), բ) **անկայուն** (առաջին անգամ հանցանք կատարողներ, ովքեր նախկինում աչքի են ընկել ոչ հանցավոր իրավախախտումներով կամ հակաբարոյական արարքներով), գ) **իրադրութային** (հանցանքը որոշակի իրադրության, անբարենպաստ ներանձնային կամ այլ հանգամանքների ազդեցության տակ կատարողներ), դ) **չարամիտ** (ովքեր նախկինում կատարած հանցանքի համար չեն ենթարկվել քրեական պատասխանատվության կամ ազատազրկման հետ կապված պատժի) և ե) **առանձնապես չարամիտ** (ովքեր նախկինում կատարված մեկ կամ ավելի հանցանքների համար դատապարտվել են ազատազրկման հետ կապված պատժի)¹:

Տիպաբանական նման դասակարգման տեսական և գործնական նշանակությունն առաջին հերթին այն է, որ վեր-

¹ Տե՛ս նաև՝ **Антонян Ю.М., Еникеев М.М., Эминов В.Е.** Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 18:

ջինս հնարավորություն է տալիս հստակ տարանջատելու համապատասխան նախականիսիչ ներգործությունը պատժիչից, լուծելու որոշակի քննչական խնդիրներ, բացահայտելու և վերլուծելու հանցավոր վարքագծի դրսևորման առանձին տեսակները, ինչպես նաև բացատրելու այդ վարքագիծը՝ այն դրսևորողների անձը բնութագրող որոշակի ընդհանրական, տիպային առանձնահատկությունները հաշվի առնելով:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Адоньева А.Н. Мотивы девиантного и преступного насильственного поведения женщин // Вестник Ставропольского государственного университета. 2008. № 59, с. 84-90.
2. Антонян Ю.М., Еникеев М.М., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М.: Юристъ, 1996, –336 с.
3. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
4. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
5. Аракелян С.В. Семейно-бытовые убийства. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2009, –160 с.
6. Бакин А.А. Социальное и биологическое в личности насильственного преступника-рецидивиста / Вестник Санкт-Петербургского университета МВД России. 2009. № 2 (42), с. 90-96.
7. Бидова Б.Б., Умарова М.А. Биофизиологические признаки личности и их значение в криминологическом портре-

- те преступника // ПРАВО И ГОСУДАРСТВО: теория и практика. 2022. № 11(115), с. 208-210.
8. Бородин С.В., Побегайло Э.Ф. Криминологическая характеристика умышленных убийств. М.: Изд-во ВНИИ МВД СССР, 1981, –51 с.
 9. Ефремов А.Б. Сущность и типология антиобщественного образа жизни несовершеннолетних, совершающих насильственные преступления // Человек: преступление и наказание. 2007. № 1, с. 130-133.
 10. Липский В.Н. Насильственная преступность несовершеннолетних лиц с психическими аномалиями как общесоциальная и криминологическая проблема // Вестник Санкт-Петербургского университета МВД России. 2008. № 3 (39), с. 118-123.
 11. Лунеев В.В. Мотивация преступного поведения. М.: Наука, 1991, –383 с.
 12. Ферри Э. Уголовная социология. М.: ИНФРА-М, 2009, – 664 с.

§1.4. Բռնությամբ կատարվող հանցագործությունից տուժողի կրիմինալոգիական բնութագիրը

Հայաստանի Հանրապետությունում բռնությամբ կատարվող հանցագործությունների (հատկապես՝ առողջությանը դիպավորությամբ վնասի պատճառումների և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների) կրիմինալոգիական հիմնական առանձնահատկություններից մեկը դրանց լատենտայնության բարձր մակարդակն է: Դա գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ տուժողները, որպես կանոն, չեն դի-

մում իրավապահ մարմիններին: Արդյունքում՝ հանցավոր բռնությունից փաստացի տուժողների թիվը մի քանի անգամ գերազանցում է պաշտոնապես գրանցվածներին: Տվյալ հանգամանքը վկայում է քննարկվող հանցագործությունների վիկտիմալոգիական կանխարգելման հատուկ նշանակության և կարևորության մասին:

1. Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում, ցանկացած մարդ կարող է տուժել հանցավոր բռնությունից: Դա չի նշանակում, սակայն, որ նման ներգործությունից տուժող յուրաքանչյուրն օժտված է բարձր վիկտիմայնությամբ: Հակառակը՝ մասնագետների կարծիքով, քիչ չեն այն դեպքերը, երբ տուժողների վարքագիծը և անձնային հատկությունները որևէ վճռորոշ նշանակություն չեն ունենում նրանց նկատմամբ կատարվող հանցավոր արարքի զարգացման մեխանիզմում: Հետևաբար, բոլոր տուժողների մոտ վիկտիմայնության պարտադիր առկայության մասին խոսելու համար հիմքեր չկան¹:

2. Մեր երկրի իրավապահ մարմինների ուշադրությունը հիմնականում կենտրոնացած է հանցագործությունները (տվյալ դեպքում՝ բռնությամբ զուգորդված) բացահայտելու և հանցանք կատարողներին մերկացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների վրա: Տուժողների անձը, հանցագործությանը նախորդած նրանց վարքագիծը բնութագրող առանձնահատկությունները շատ հաճախ անտեսվում են: Նրանք պարզապես դիտարկվում են որպես քրեական դատավարության մասնակից, հանցագործության, այն կատարողի մասին տեղեկատվության աղբյուր: Հանցավորության դեմ պայքարի բազմամյա փորձը, սակայն, վկայում է, որ

¹ Տե՛ս նաև՝ **Полубинский В.И.** Виктимология и профилактика правонарушений. Омск, 1990, էջ 24:

հանցավոր վարքագծի (հատկապես՝ բռնությամբ զուգորդված) զարգացման մեխանիզմում ոչ պակաս ազդեցիկ նշանակություն ունեն հենց տուժողների անձնային և այլ առանձնահատկությունները:

3. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների **վիկտիմալոգիական** ուսումնասիրության հիմնական խնդիրներն են՝

- քննարկվող հանցանքների կատարմանը նպաստող հանգամանքների բացահայտումը՝ հաշվի առնելով տուժողի գործոնը,
- այն անձանց վարքագծի և կյանքի պայմանների վերլուծությունը, որոնց նկատմամբ բռնություն է գործադրվում, ովքեր ենթարկվում են ահաբեկման, ծաղրուծանակի,
- տուժող դառնալու գործընթացի, դրա զարգացման մեխանիզմի հետազոտությունը, և նշված տուժողի անձը բնութագրող առանձնահատկություններն ուսումնասիրելու միջոցով դրա հնարավոր կանխատեսումը,
- այն պատճառների վերհանումը, որոնցով պայմանավորված, տուժողները չեն հաղորդում հանցավորի՝ բռնությամբ զուգորդված հանցագործությանը նախորդած հակաիրավական արարքների մասին,
- տուժողի վրա ներազդելով քննարկվող հանցագործությունները կանխարգելելու հնարավոր միջոցների որոնումը և այլն:

4. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններից տուժողների սեռի, տարիքի և զբաղվածության վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները տե՛ս աղյուսակ 11-ում:

**ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններից
տուժողների բնութագիրը (%)**

Սեռը		Տարիքը		Զբաղվածությունը			
Տղամ.	Կին	Չափ.	Անչափ.	Գործազ.	Թոշակառ.	Ծառայ.	Սովոր.
74,5%	25,5%	97,6%	2,4%	10,8%	3,0%	4,2%	4,3%

- ✓ Ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններից **գլխավորապես տուժում են տղամարդիկ**: Մասնավորապես, արական սեռի ներկայացուցիչների մասնաբաժինը կազմում է **74,5%**, իսկ իգական սեռի ներկայացուցիչներինը՝ **25,5%**:
- ✓ Առավել հաճախ (**56,4%**) նշված հանցավոր արարքներից տուժում են 25-39 տարեկանները: Նրանց հաջորդում են 40-49 (**17,3%**), 50 և ավելի (**14,2%**), 19-24 (**9,7%**) և մինչև 18 (**2,4%**) տարեկանները: Խիստ մտահոգիչ է, որ նշված հանցագործությունների հետևանքով զոհվածների ընդհանուր թվի **0,4%**-ն անչափահասներ են:
- ✓ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններից բավականին հաճախ (**10,8%**) տուժում են գործազուրկ կամ եկամտի մշտական աղբյուր չունեցող անձինք: Նրանց հաջորդում են տարբեր կրթական հաստատությունների սովորողները (**4,3%**), ծառայողները (**4,2%**) և թոշակառուները (**3,0%**): Նշված հանցագործություններից մյուս տուժողները (**77,7%**) հանրօգուտ աշխատանքով, ձեռնարկատիրական գործունեու-

թյամբ, գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք են, զինձառայողները, հաշմանդամները և այլն:

5. Բռնությամբ կատարվող հանցագործությունների վիկ-տիմալոգիական առանձնահատկությունների առումով ուշադ-րության արժանի է ոչ միայն դրանցից տուժողների անձը, այլև **հանցավորի հետ նրանց փոխհարաբերությունները** բնութագրող տեղեկությունները:

Մասնավորապես, հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում բացարձակ մեծամասնություն են այն դեպ-քերը, երբ բռնությամբ կատարվող հանցագործություններից տուժում են հանցավորի հետ լավ ծանոթ անձինք (ներկա կամ նախկին ամուսինները կամ ընտանիքի այլ անդամները, ազգականները, բարեկամները, հարևանները, ընկերները, գործընկերները և այլն): Դեպքերի **ընդամենը 1/5-ի** պարա-գայում է, որ հանցավորները ոտնձգություն են կատարում անձանոթների նկատմամբ (տե՛ս աղյուսակ 12): Ընդ որում, վերջիններիս նկատմամբ առավել հաճախ կատարվում են բռնությամբ զուգորդված խուլիգանական դրդումներով հան-ցանքներ:

Աղյուսակ 12

ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններից տուժողների փոխհարաբերությունները հանցավորի հետ (%)

Ամուսին, զու-գընկեր	Ազգական, բա-րեկամ	Հարևան, ծանոթ, գործընկեր	Անծանոթ
15,3%	25,2%	39,5%	20,0%

6. Քննարկվող հանցագործություններից տուժողների կազմում որոշ չափով առանձնանում են անզգույշ, հակաբա-րոյական կամ սադրիչ վարքագիծ դրսևորելով իրենց նկատ-

մամբ բռնությամբ զուգորդված հանցանք կատարելուն նպաստողները (տե՛ս աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Տեղեկություններ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններից տուժողների վարքագծի վերաբերյալ (%)

Վիրավորանք, սպառնալիքներ	Մարմնական վնասվածքներ	Ընդհան. բնույթի պրովոկացիա	Ծեծ, դաժան վերաբերմունք
46,1%	14,7%	10,8%	9,6%

- ✓ Ներկայացված աղյուսակից հետևում է, որ ընդամենը **18,8%** դեպքերում է, որ տուժողները չեն դրսևորել որևէ անզգույշ, հակաբարոյական կամ սադրիչ վարքագիծ, որը կարող էր նպաստել իրենց նկատմամբ բռնությամբ զուգորդված հանցանքի կատարմանը:

7. ՀՀ-ում բռնությամբ զուգորդված հանցագործությունների վիկտիմալոգիական նշանակալի առանձնահատկություններից մեկն այն է, որ նշված հանցանքները, որպես կանոն, կատարվում են կա՛մ պատահական, արագընթաց հարաբերություններից **հանկարծակի ծագած վեճի**, կա՛մ միջանձնային **երկարամյա կոնֆլիկտային** հարաբերությունների սրացման հետևանքով:

Այդ առումով ուշարժան են նաև իրենց նկատմամբ բռնությամբ կատարված հանցանքին նախորդած կոնֆլիկտային իրավիճակին **տուժողների արձագանքի** վերաբերյալ տեղեկությունները (տե՛ս աղյուսակ 14-ը):

Տեղեկություններ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությանը նախորդած կոնֆլիկտին տուժողների արձագանքի վերաբերյալ (%)

Փորձել են հաշտվել	Դիմել են իր. մարմ., դատ.	Դիմել են այլ անձանց օգնությ.	Դրսևորել են այլ վարքագիծ
27,5%	20,4%	15,7%	36,4%

- ✓ Ներկայացված աղյուսակից կարելի է հետևություն անել, որ, արձագանքելով ստեղծված կոնֆլիկտային իրավիճակին, բռնությամբ զուգորդված հանցագործությունից տուժողները բավականին հաճախ (**27,5%**) փորձել են հաշտվել վիճաբանողի հետ, սակայն տարբեր հանգամանքների ուժով դա նրանց չի հաջողվել:
- ✓ Ավելի հազվադեպ նրանք դիմել են իրավապահ մարմիններին, դատարան (**20,4%**), ինչպես նաև այլ անձանց (ազգականների, բարեկամների, հարևանների, ընկերների, ծանոթների և այլն) օգնությանը (**15,7%**):
- ✓ Առավել հաճախ (**36,4%**) նշված հանցագործություններից տուժողները դրսևորել են այլ վարքագիծ՝ ներքաշվել են վիճաբանության մեջ և խորացրել այն, գործադրել են բռնություն, սպառնալիքներ, հայհոյախառն արտահայտություններ, ծաղրուծանակ և այլն:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
2. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.

3. Аракелян С.В. Семейно-бытовые убийства. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2009, –160 с.
4. Грудинин Н.С., Ястрибова Д.М. Общие направления виктимологической профилактики насильственной преступности // Nauka-rastudent.ru. 2016. № 08 (032) / [Электронный ресурс] — Режим доступа. — URL: <http://nauka-rastudent.ru/32/3611/>:
5. Качурова Е.С. Понятие и типы виктимности при изучении насильственных преступлений, совершаемых в местах лишения свободы // Академический юридический журнал. 2007. № 4(30), с. 44-46.
6. Качурова Е.С., Репецкая А.Л. Виктимологическая характеристика потерпевшего от насильственных преступлений, совершенных в местах лишения свободы // Криминологический журнал ОГУЭП. 2008. № 2(8), с. 17-21.
7. Мусатова Е.Е. К вопросу криминологической характеристики корыстно-насильственных преступлений, совершаемых в отношении женщин // Человек: преступление и наказание. 2008. № 4, с. 113-115.
8. Поличенкова Л.С. Виктимологические аспекты профилактики насильственной преступности // Научные горизонты. 2019. № 10(26), с. 119-123"
9. Полубинский В.И. Виктимология и профилактика правонарушений. Омск: Изд-во ВШМ МВД СССР, 1990, –110 с.
10. Полубинский В.И., Ситковский А.Л. Теоретические и практические основы криминальной виктимологии: монография. – М.: ВНИИ МВД России, 2006, –291 с.
11. Ривман Д.В., Устинов В.С. Виктимология. – М.: Юридический центр Пресс, 2000, –332 с.

12. Телегина Е.Г. Виктимологическая характеристика личности потерпевшего от женской насильственной преступности // Вестник Нижегородской правовой академии. 2016. № 9, с. 62-64.

§1.5. Բռնությամբ կատարվող հանցագործություններին նպաստող գործոնները

Կրիմինալոգիայի հիմնական և առավել բարդ խնդիրներից մեկը հանցավորության պատճառների բացահայտումն է: Դարեր շարունակ քրեագետները փորձում են պատասխանել հարցին, թե ինչո՞ւ են մարդիկ հանցանքներ (նաև՝ բռնությամբ զուգորդված) կատարում: Գիտության տվյալ ճյուղի ողջ պատմությունը, ըստ էության, հենց նշված հարցին պատասխան գտնելու շարունակական որոնումն է, որը, ինչպես արդարացիորեն նշում է Գ.Ա. Ավանեսովը, «հավիտենական» խնդիր է¹:

Այդ կապակցությամբ քրեագետները բազմաթիվ փորձեր են կատարել սահմանելու հանցավորության ընդհանուր պատճառի հասկացությունը: Մասնավորապես, տեսաբանների մի խումբ համարում է, որ ցանկացած հասարակությունում հանցավորության ընդհանուր պատճառը օբյեկտիվ սոցիալական հակասություններն են²: Մյուսների կարծիքով, որը, թերևս, առավել համոզիչ է, չի կարող գոյություն ունենալ որևէ մեկ՝ միմիայն հանցավորությանը բնորոշ պատճառ, քանզի

¹ Տե՛ս **Аванесов Г.А.** Криминология и социальная профилактика. М., 1980, էջ 170:

² Տե՛ս, օրինակ՝ Криминология / Под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. М., 1995, էջ 76:

սոցիալական տվյալ բացասական երևույթին նպաստող գործոնները բազմազան են և տարաբնույթ¹:

Այդուհանդերձ, հանցավորությունն առանց որևէ բացառության թողնելը կնշանակի ընդհանրապես հրաժարվել կրիմինալոգիայից՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղից:

1. Վերջին տարիներին տարբեր ոլորտների մասնագետներ առավել հաճախ են սկսել հրաժարվել «պատճառ» եզրույթից և համապատասխան երևույթների պատճառական բացատրությունից՝ գերադասելով բացահայտել ուսումնասիրության որոշակի օբյեկտի առաջացմանը, գոյությանը և զարգացմանը **նպաստող գործոնները** և դրանց միջև **համահարաբերակցությունը** (կոռելյացիոն փոխկապակցվածությունը): Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Բանն այն է, որ գոյություն ունեցող տարբեր համակարգերի և դրանց տարրերի միջև փոխադարձ կապերը չափազանց բարդ են և բազմազան: Շատ դժվար է (իսկ երբեմն՝ անհնար) փոխազդեցությունների ողջ համակցությունից առանձնացնել պատճառահետևանքային որոշակի և հստակ կապեր:

Ուստի, պատահական չէ, որ ժամանակակից քրեագետների մեծ մասն արդեն վաղուց² հրաժարվել է հանցավորության «պատճառների» անվերջ փնտրտուքից՝ գերադասելով

¹ Տե՛ս, օրինակ՝ Криминология. Учебник для юридических вузов / Под ред. А.И. Долговой. М., 1997, էջ 180, **Гилинский Я.И.** Социально-экономическое неравенство как криминогенный фактор (от К. Маркса до С. Олькова) // Экономика и право / Ред. А. Заостровцев. СПб.: Наука, 2009, էջ 169-188:

² Տե՛ս, օրինակ՝ **Winfree L., Abadinsky H.** Understanding Crime. Theory and Practice. Chicago, 1996, էջ 9-11, **Kennedy D.M.** Pulling Levers: Chronic Offenders, High-Crime Settings, and a Theory of Prevention // Val. Univ. Law Rev., Vol. 31, 1997, էջ 67:

կենտրոնանալ բացասական այդ երևույթին **նպաստող գործոնների** բացահայտման վրա:

2. Հանցավորության և դրա առանձին դրսևորումների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) վիճակի, կառուցվածքի և շարժընթացի վրա ազդեցություն ունեցող գործոնների բացահայտումը **կրիմինալոգիայի կարևորագույն խնդիրներից** է: Ավելին, առանց նշված գործոնների մասին պատկերացում ունենալու հնարավոր չէ որևէ պետության կամ հասարակության ադեկվատ, համարժեք և անհրաժեշտ արձագանքումը բացասական այդ երևույթներին¹:

3. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների առաջացումը, գոյությունը, դրանց վիճակի, կառուցվածքի և շարժընթացի փոփոխությունները պայմանավորված են **ինչպես ընդհանուր հանցավորությանը**, այնպես էլ դրա տվյալ տեսակին բնորոշ **առանձնահատուկ** գործոններով: Այլ կերպ ասած՝ քննարկվող հանցագործությունների դետերմինանտները, կազմելով ընդհանուր հանցավորության դետերմինացման հիմնախնդիրների մի մասը, միևնույն ժամանակ բնութագրվում են որպես յուրահատուկ հանցածին գործոններ:

4. Կրիմինալոգիայում **բռնությունն** առավել հաճախ բացատրում են հետևյալ **հիմնական գործոնների** ազդեցությամբ՝

- այն կարող է սոցիալ-մշակութային բնույթ կրել, այսինքն՝ պայմանավորված լինել մարդկանց միջև փոխհարաբերությունների էության մասին **կարծրադիր պայային** պատկերացումներով, որոնք կապված են ան-

¹ St'ya նաև՝ **Гилинский Я.** Объяснение преступности // Предупреждение преступности. Криминологический журнал. Казахстанская криминологическая ассоциация, 2002, № 2, էջ 79:

ծի դաստիարակության առանձնահատկությունների, այլ անձանց ընդօրինակելու հետ, ինչը որոշակի իրավիճակում կանխորոշում է բռնության՝ որպես խնդիր լուծելուն ուղղված վարքագծի հնարավոր միակ տարբերակի ընտրությունը,

- այլ անձանց նկատմամբ բռնություն գործադրելը կարող է լինել անհատի **սեփական կենսափորձի** (նախկինում ևս նմանատիպ իրավիճակներում այլ անձանց նկատմամբ բռնություն գործադրելու, այդ կերպ առաջացած խնդիրները լուծելու) արդյունք, որի պարագայում ևս առանձնահատուկ նշանակություն է տրվում քննարկվող վարքագծի ունիվերսալությանը,
- բռնությամբ զուգորդված վարքագիծը կարող է կապված լինել **«մանկական տրավմայի»**, վաղ տարիքում վատ վերաբերմունքի արժանացած լինելու հետ, ինչն անհատին հետագայում մղում է այլ անձանց վրա իր մանկական բարդությունները տեղափոխելու և այդ կերպ «իրեն հասցված հարվածներին պատասխան տալու»,
- այն կարող է պայմանավորված լինել նաև անհատի **բացասական անձնային առանձնահատկություններով**, որոնք ոչ ադեկվատ դաստիարակության կամ դրա բացակայության, շրջապատի անբարենպաստ ազդեցության հետևանք են և այլն¹:

5. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններին նպաստող գործոններն աչքի են ընկնում բազմազանությամբ: Դրանց շարքում հարկ է առանձնացնել հետևյալները՝

¹ **Марцинечко А.С.** Детерминанты насильственной преступности в семье в отношении женщин // Вестник Калининградского юридического института МВД РФ, 2008, № 2(16), էջ 73:

- աղքատության անբարենպաստ ազդեցությունը, գործազրկության մակարդակի աննախադեպ աճը և հասարակության սոցիալ-տնտեսական կտրուկ շերտավորումը, բևեռացումը,
- կոնֆլիկտայնության բարձր մակարդակը, դրա օրեցօր խորացումը և այն մեղմելու գործուն միջոցների բացակայությունը,
- առկա վիճակի բարելավման, անվտանգ և կանխատեսելի ապագա ունենալու կապակցությամբ երկրի բնակչության զգալի մասի թերահավատությունը,
- դարերի ընթացքում ձևավորված ավանդական արժեքների քայքայումը, ընտանիքի դերի նվազումը, դրա արդյունքում օտարապաշտ և անբարենպաստ արժեքային կողմնորոշումների ձևավորումն ու տարածումը,
- հաղորդակցության զանգվածային միջոցների անբարենպաստ ազդեցությունը, հասարակությունում առկա բացասական, արատավոր բազմաթիվ երևույթների նկատմամբ երկրի բնակչության հանդուրժողականությունը,
- սոցիալական վերահսկողության գոյություն ունեցող համակարգի փլուզումը և արևմտյան կենսակերպի պաշտամունքի տարածումն ու դրա հետ կապված՝ բարքերի ազատականացումը,
- հասարակությունում բարոյահոգեբանական անբարենպաստ մթնոլորտի ձևավորումը և խորացումը, տազանապայնության անընդհատ ավելացումը և դրանով պայմանավորված՝ հասարակական հարաբերությունների ապակայունացումը,
- երկրի բնակչության իրավագիտակցության մակարդակի, իրավապահ համակարգի նկատմամբ վստա-

հույան կտրուկ նվազումը, ինչպես նաև զինվածության մակարդակի բարձրացումը,

- տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր-մշակութային բնույթի ճգնաժամային տարբեր երևույթների խորացումը և դրանք հաղթահարելու հեռանկարի բացակայությունը և այլն:

6. Հանցավոր վարքագծի (այդ թվում՝ բռնությամբ զուգորդված) զարգացման մեխանիզմում կարևոր դեր ունեն ոչ միայն արտաքին գործոնները, այլև, այսպես կոչված, **ներքին դեպերմիանսները՝ շարժառիթները**, որոնք պայմանավորում են կոնկրետ իրավիճակում անհատի կողմից վարքագծի այս կամ այն տարբերակի ընտրությունը: Ակնհայտ է, որ առանց հանցագործության դրդապատճառի մասին հստակ պատկերացում ունենալու հնարավոր չէ խոսել ո՛չ հանցավոր վարքագծի պատճառների և պայմանների, ո՛չ այն դրսևորող անձին ուղղելու, վերասոցիալականացնելու, ինչպես նաև նրա կողմից նոր հանցանքների կատարումը կանխելու մասին:

Ի. Ա. Պետինն արդարացիորեն նշում է, որ հանցավոր ոտնձգությունների շարժառիթները բացահայտելու օրենսդրական պահանջները պատշաճ չկատարելու պարագայում անհնար կդառնա քրեական և քրեադատավարական օրենսդրությունների նպատակների իրականացումը, իսկ բռնությամբ զուգորդված հանցավոր վարքագծի դրսևորման համար նշանակվող պատիժները կլինեն չհիմնավորված և անարդար: Ուստի նշված խնդրի լուծումն անհրաժեշտ է սկսել հանցավոր քննարկվող վարքագծի մոտիվացման բացահայտումից¹:

¹ См'у **Петин И.А.** Механизм преступного насилия. СПб., 2004, էջ 169-170:

6.1. Մոտիվացումը մարդուն առնչվող բազմազան ներքին և արտաքին գործոնների համակարգ է, որոնք շարժառիթի (մոտիվի) հետ ազդում են նրա կողմից վարքագծի որոշակի տարբերակ ընտրելու վրա¹: Ընդ որում, մարդկային վարքագծի մոտիվացման հիմնախնդիրները հոգեբանների ուշադրության կենտրոնում են դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսից:

Ինչ վերաբերում է **հանցավոր վարքագծի մոտիվացմանը**, ապա մասնագիտական գրականության մեջ այն սահմանվում է որպես **հոգեբանական գործընթաց, որը բաղկացած է կանխատեսվող հակաիրավական վարքագծի նախընտրելիությունը և կոնկրետ իրավիճակում դրա իրականացման հնարավորությունը կանխորոշող գործոնների գիտակցումից, առանձնացումից, գնահատումից և համեմատությունից՝ հաշվի առնելով դրա հավանական հետևանքները**²:

6.2. Մոտիվացումը անձի բարոյահոգեբանական կառուցվածքի միջուկն է, որն ինտեգրում է նրա շարժառիթները, պահանջմունքները, հետաքրքրությունները, ակտիվությունը և այլն: Այսինքն՝ այն **ավելի լայն** հասկացություն է, քան շարժառիթը (մոտիվը):

Քրեագետները համարում են, որ մոտիվացման հասկացությունն ունի հետևյալ երեք նշանակությունը՝

¹ Տե՛ս նաև **Алтунина И.Р.** Мотивы и мотивация социального поведения. Учебное пособие. М.: Издательство Московского психолого-социального института, 2006:

² Տե՛ս, օրինակ՝ **Дубовик О. Л.** Проблема принятия решения о совершении преступления в криминологической науке // Вопросы борьбы с преступностью. М., 1975. Вып. 10, էջ 27-28, **Кузнецова Н. Ф.** Проблемы криминологической детерминации / Под ред. и с предисловием В.Н. Кудрявцева. М., 1984, էջ 26:

1) մոտիվացումը կայուն դրդումների համակարգի միջոցով անձի ինքնակառավարման մեթոդ է,

2) այն հանցագործության շարժառիթի ձևավորման, զարգացման և հետագայում փաստացի հանցավոր արարքներով կենսագործման գործընթաց է,

3) դրա հասկացությունն օգտագործվում է այս կամ այն անձին (նրա վարքագծի այս կամ այն դրսևորմանը) բնորոշ շարժառիթների համակցությունը բնութագրելու համար¹:

6.3. Հանցավոր գործունեությունը հաճախ դասակարգում են երկու տեսակի, որոնք բաղկացած են՝ 1) **կամային** և 2) **իմպուլսիվ** արարքներից: Վերջիններիս տակ քրեական իրավունքի գիտության մեջ ընդունված է հասկանալ հանկարծակի առաջացած դիտավորությամբ կատարվող հանցավոր արարքները, որոնց պարագայում բացակայում է մոտիվացումը: Մինչդեռ նման պնդմանը դժվար է համաձայնել:

Բանն այն է, որ թեև ոչ այնքան որոշակիորեն, բայց հենց նման արարքներն են բացահայտում մարդու իրական դեմքը, նրա թաքնված էությունը, շարժառիթները, արժեքային կողմնորոշումները, նպատակները և այլն: Այսինքն՝ մարդը չի կարող հենց այնպես, հանկարծակի ցանկանալ վնաս պատճառել մեկ ուրիշին, բռնություն գործադրել նրա նկատմամբ, եթե ներքուստ հակված չլինի դրան²:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ կոնկրետ հանցանք կատարելու **լրիվ հանկարծակի առաջացած դիտավորություն, որպես այդպիսին, լինել չի կարող**: Այսինքն՝ եթե շարժառիթները չդիտարկենք անհատի ամբողջ կյանքի հետ

¹ Տե՛ս, օրինակ՝ **Кудрявцев В. Н.** Генезис преступления. Опыт криминологического моделирования. М., 1998, էջ 39:

² Տե՛ս նաև **Петин И.А.** Механизм преступного насилия, էջ 175-176:

փոխկապակցված, ապա կարելի է հանգել անհեթեթ հետևության, որ ցանկացած դրդապատճառ առաջանում է ակնթարթորեն՝ որոշակի իրադրության ազդեցության տակ: Նման հետևությունը կնշանակի նաև, որ շարժառիթները չունեն անձնային արմատներ, ինչին, բնականաբար, չի կարելի համաձայնել¹:

6.4. Բռնությամբ հանցանք կատարողների մոտիվացիոն առանձնահատկություններն ընդգրկում են նրանց ներաշխարհի, ներքին «Ես»-ի բազմաթիվ և տարատեսակ դրսևորումներ: Մասնավորապես, դրանց շարքում նախ և առաջ կարելի է առանձնացնել բռնությամբ զուգորդված հանցավոր վարքագիծը պայմանավորող հոգեկան երևույթների մի քանի խումբ: Դրանք են՝ շարժառիթները, պահանջմունքները, հակումները, հետաքրքրությունները, հայացքները, համոզմունքները և արժեքային կողմնորոշումները:

6.5. Մարդու վարքագծի **շարժառիթները** որոշվում են նրա պահանջմունքներով՝ որոշակի բարիքի բացակայության վիճակով²: Այսինքն՝ մարդու **պահանջմունքներն** արտացոլում են նրա կախվածությունն արտաքին աշխարհից, ինչ-որ բանի կարիքը: Վերջին հաշվով հենց դրանք են վարքագծի որոշակի դրսևորումների (այդ թվում՝ հանցավոր) մեծամասնության ներքին պատճառը: Այդ առումով առանձին ուշադրության են արժանի հատկապես այն պահանջմունքները, որոնք բավարարված չեն և հ հանցավոր ոտնձգության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործության) իրական դրդումն են³:

¹ Տե՛ս նաև **Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е.** Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 145:

² Տե՛ս նաև **Ильин Е.П.** Мотивация и мотивы. СПб., 2000, էջ 26:

³ Տե՛ս նաև **Кудрявцев В.Н.** Генезис преступления. Опыт криминологического моделирования. М., 1998, էջ 40:

Միևնույն ժամանակ, շեղվող վարքագծի, այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործության դրդապատճառ կարող են հանդիսանալ ինչպես սոցիալական և բարոյական առումով **ընդունելի** (օրինակ՝ ճանաչված, հարգված լինելու կամ անվտանգ ապրելու և այլն), այնպես էլ հասարակական նորմերին **հակասող** (օրինակ՝ այլ անձանց նկատմամբ բռնանալու, ցանկացած եղանակով ինքնահաստատվելու, ուրիշներին գերիշխելու և այլն) պահանջմունքները¹:

Վարքագծի շարժառիթի առաջացման համար անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան պահանջմունքն **արդիականանա**, թաքնված, պասիվ ձևից **փոխակերպվի** բացահայտի և ակտիվի: Ընդ որում, պահանջմունքի բավարարման ձգտումը, որպես կանոն, առաջանում է արտաքին որոշակի հանգամանքների ազդեցության տակ: Այլ կերպ ասած՝ պահանջմունքի արդիականացումը անձի և այն իրադրության փոխազդեցության արդյունք է, որում վերջինս հայտնվել է և պետք է գործի²:

6.6. Պահանջմունքները սերտորեն փոխկապակցված են **հակումների** հետ: Վերջիններս դժվար կառավարվող և հուզական հիմք ունեցող ձգտումներ են, որոնք հիմնականում կենսաբանական բնույթի են: Հոգեբանները հաշվարկել են մարդկային զգացմունքների ավելի քան 100 տեսակ, որոնցից շատերը կարող են հանդիսանալ բռնությամբ զուգորդված հանցավոր վարքագծի մոտիվացման ակտիվ բաղադրատարրեր (օրինակ՝ վրդովմունքը, փառասիրությունը, վախկոտությունը, վրեժխնդրությունը, խանդը և այլն)³:

¹ Տե՛ս նաև **Барановский Н.А.** Социальные и личностные детерминанты отклоняющегося поведения. Минск, 1993, էջ 101:

² Տե՛ս նաև **Кудрявцев В.Н.** Генезис преступления. Опыт криминологического моделирования, էջ 55:

³ Տե՛ս նաև Механизм преступного поведения. М., 1981, էջ 52-53:

6.7. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների հիմնական **շարժառիթներն են** շահադիտական մղումները, վրեժը, խանդը, նախանձը, խուլիգանական դրդումները: Մինչդեռ դրանք ինքնին, առանձին վերցրած, դեռ բավարար չեն վարքագծի հանցավոր տարբերակն ընտրելու համար: Պահանջվում են նաև այլ խթաններ: Օրինակ՝ ինքնահաստատվելու, սեփական անձի առավելությունն ընդգծելու, շրջապատի նկատմամբ գերիշխելու ձգտումները և այլն:

7. Վարքագծի հանցավոր (այդ թվում՝ բռնությամբ զուգորդված) տարբերակի ընտրությունը պայմանավորված է նաև մի շարք այլ գործոններով, որոնցից հարկ է առանձնացնել անձի **բարոյական և իրավական դիրքորոշումը**, նրա **արժեքային կողմնորոշումների**, կյանքի նկատմամբ **հայացքների ու պատկերացումների** համակարգը: Մասնավորապես, ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարող անձանց բնորոշ են վարքագծի այնպիսի կարծրատիպեր, ինչպիսիք են՝

- բռնությունը որպես նպատակին հասնելու սովորական միջոց համարելու հակվածությունը,
- այլ անձի վարքագծին ագրեսիվորեն, դաժանորեն արձագանքելու թույլատրելիությամբ առաջնորդվելը,
- մեկ ուրիշի կյանքի, առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, նրա ֆիզիկական ազատության, պատվի և արժանապատվության նկատմամբ անտարբերությունը,
- վարքագծի գոյություն ունեցող իրավական և բարոյական նորմերի անտեսումը և այլն:

7.1. Միևնույն ժամանակ, նշված անձանց մեծ մասի մեջ **շարժ թույլ է զարգացած** ինքնաքննադատական վերաբերմունքը սեփական վարքագծի գնահատմանը: Անգամ դատա-

պարտումից հետո երկար ժամանակ անց իրենց հանցավոր վարքագիծը գնահատելիս նրանք փորձում են գտնել արդարացնող շատ փաստարկներ՝ հիմնականում հղում կատարելով կյանքի անբարենպաստ պայմաններին: Մասնավորապես, դրսևորած հանցավոր վարքագիծը նրանք հաճախ փորձում են բացատրել հասարակությունում տեղ գտած լարվածությամբ, տագնապայնությամբ կամ ընտանեկան-կենցաղային հարաբերություններում գոյություն ունեցող կոնֆլիկտային իրավիճակով պայմանավորված որոշակի խնդիրներից և մտահոգություններից ազատվելու ձգտմամբ:

8. ՀՀ-ում բռնությամբ հանցանք կատարողների մոտիվացման ձևախեղման վրա որոշակի ազդեցություն է ունենում նաև **ալկոհոլի և թմրանյութերի** օգտագործումը: Դրանց բացասական ներգործության էությունն այն է, որ վերջիններս զգալիորեն թուլացնում են կոնկրետ անձանց ներքին արգելակման գործընթացները: Ալկոհոլ կամ թմրանյութ գործածողները դառնում են առավել անկաշկանդ, անզուսպ և անկարգապահ, ինչի արդյունքում նրանց սովորական վարքագծի մոտիվացման համակարգը խաթարվում է՝ նպաստելով բռնության գործադրման հավանականության մեծացմանը:

9. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններին նպաստող գործոնների համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում **միջանձնային կոնֆլիկտը**, որը հանգեցնում է քննարկվող հանցավոր վարքագծի դրսևորմանը:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել «կոնֆլիկտ» հասկացության տարբեր սահմանումներ: Այդ կապակցությամբ առավել ընդհանրական մոտեցումն այն է, որ կոնֆլիկտը դիտարկվում է որպես օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հակասությունների դրսևորում, որն արտահայտվում է կողմերի (կոնկրետ մարդկանց) առճակատման մեջ:

Հետևաբար, **սոցիալական կոնֆլիկտ** ասելով՝ հարկ է հասկանալ մի գործընթաց, որում երկու կամ ավելի անհատներ կամ մարդկանց խմբեր հնարավորություն են փնտրում խանգարելու մեկը մյուսին հասնել որոշակի նպատակի կամ կանխելու հակառակորդի շահերի բավարարումը կամ պարտադրելու նրան փոխել իր հայացքները կամ սոցիալական դիրքորոշումները¹:

9.1. Մասնագետներն առանձնացնում են *կոնֆլիկտային իրադրությունների* որոշակի խմբեր, որոնք, որպես կանոն, նախորդում են բռնությամբ կատարվող հանցագործություններին և առաջանում են՝

- իրականության վերաբերյալ անձի սոցիալական պատկերացումների անադեկվատության հիման վրա,
- որպես սեփական հնարավորությունների գերազնահատման կամ մյուսների կողմից դրանց թերազնահատման արդյունք,
- անձնական հարաբերությունների հողի վրա,
- տեղեկատվության անբավարարության արդյունքում,
- որպես անձի համար կենսական նշանակություն ունեցող վարքագծի մի քանի դրսևորումներից մեկն ընտրելու անհրաժեշտության արդյունք,
- որպես անձի սոցիալական ձգտումների և իր համար գնահատելի այլ մարդկանց համոզմունքների անադեկվատության արդյունք:

¹ St'ս նաև Социальные конфликты: Экспертиза, прогнозирование, технология разрешения. Вып.1. М., 1991, էջ 27, **Запрудский Ю.Г.** Социальный конфликт. Ростов, 1992, էջ 54, Юридическая конфликтология. М., 1995, էջ 6:

Ընդ որում, նշված բոլոր դեպքերում կոնֆլիկտի լուծման բնույթը կախված է անձի հայացքների ուղղվածությունից և նրա արժեքային կողմնորոշումներից: Այդ է պատճառը, որ ոմանք փորձում են լուծել այն օրինական, իսկ մյուսները՝ ապօրինի եղանակով (այդ թվում՝ բռնությամբ զուգորդված հանցանք կատարելով)¹:

9.2. Իրավակիրառ գործունեության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ՀՀ-ում բռնությամբ կատարող հանցագործություններին նպաստող միջանձնային կոնֆլիկտները դասակարգելու ըստ հետևյալ հատկանիշների՝

- կոնֆլիկտին մասնակից **սուբյեկտների** (ամուսինների, ծնողների և զավակների, ազգականների, հարևանների, ծանոթների միջև և այլն),
- բուն կոնֆլիկտի **բովանդակության** (հայացքների, դիրքորոշումների, ձգտումների, զգացմունքների, պահանջմունքների անհամապատասխանություն, մյուս կողմի վարքագծին անադեկվատ արձագանքում, անձնական կյանքին կողմնակի անձանց միջամտություն և այլն),
- կոնֆլիկտի **դրսևորման ոլորտի** (ընտանեկան, կենցաղային, աշխատանքային հարաբերություններ և այլն),
- կոնֆլիկտի **առաջացման փուլերի** (արդիականացում, կոնֆլիկտային հարաբերությունների ձևավորում, հասունացում, գազաթնակետ, հանգուցալուծում):

9.3. Հարկ է նշել, որ միջանձնային կոնֆլիկտին հաճախ կարող է նախորդել, այսպես կոչված, **թաքնված (լարենդրային)** փուլը, որի պարագայում, ըստ էության, բացակայում են

¹ Ст'ю Механизм преступного поведения. М., 1981, էջ 84-85:

միայն բախվող կողմերի վարքագծի արտաքին դրսևորումները՝ որոշակի գործողությունները: Վերջինս, իր հերթին, ներառում է կոնֆլիկտի զարգացման հետևյալ **ենթափուլերը**¹

- օբյեկտիվ կոնֆլիկտային իրավիճակի առաջացում,
- սուբյեկտներից մեկի կողմից իր այն շահերի և պահանջմունքների գիտակցում, որոնք անհամատեղելի են մյուս կողմի շահերին և պահանջմունքներին կամ հակասում են դրանց,
- իր շահերի և պահանջմունքների բավարարման խոչընդոտների կամ արգելքների գիտակցում (այս ենթափուլը կարող է վերաբերել կողմերից յուրաքանչյուրին),
- սուբյեկտներից մեկի կողմից իր շահերը կոնկրետ գործողություններով պաշտպանելու պատրաստակամության ձևավորում¹:

Ընդ որում, նշված ենթափուլերից անգամ վերջինի պարագայում դեռ վաղ է խոսել կոնֆլիկտի՝ որպես կոնկրետ մարդկանց առճակատման սկսված լինելու մասին: Դրա համար անհրաժեշտ է, որ **սկսվեն կողմերի**² մեկը մյուսի դեմ ուղղված բացահայտ գործողություններ: Վերջիններս, իրենց հերթին, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

1) **պաշտպանողական** (երբ կողմերից մեկը փորձում է պահպանել դիրքերի առկա հարաբերակցությունը, ինչպես նաև պաշտպանել իր շահերը, որոնք մինչ այդ անխոչընդոտ իրագործվել են),

2) **հարձակողական** (երբ կողմերից մեկը ձգտում է փոխել այդ պահին առկա դիրքերի հարաբերակցությունը, ինչպես նաև առաջ մղել մինչ այդ չիրագործված իր շահերը)²:

¹ Տե՛ս նաև Юридическая конфликтология, էջ 61:

² Տե՛ս նաև Юридическая конфликтология, էջ 65:

9.4. Սուբյեկտներից մեկի կողմից մյուսի նկատմամբ բռնություն գործադրելու պատրաստականությունը կարող է կախված լինել ինչպես **ֆրուստրացման**¹ ուժգնությունից, այնպես էլ տարատեսակ նպաստող (սադրող) գործոնների (այդ թվում՝ գոյություն ունեցող կոնֆլիկտային հարաբերությունների) ազդեցության **տևականությունից**:

Մասնավորապես, քրեագետները հատուկ ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ բռնությամբ հանցանք կատարողների գերակշիռ մասի կենսագրության մեջ էական դեր ունեն հենց ֆրուստրացնող գործոնները: Այդ կապակցությամբ նրանք նշում են, որ մարդիկ, ովքեր մանկության տարիներին հաճախ են ենթարկվել բռնության, հետագայում (դառնալով մեծահասակ), ավելի մեծ հավանականությամբ են դառնում բռնարարներ (այդ թվում՝ բռնությամբ հանցանք կատարողներ)²:

9.5. Միջանձնային կոնֆլիկտի զարգացման մեխանիզմում էական նշանակություն ունի նաև հակառակորդի նկատմամբ ներգործության այնպիսի միջոցը, ինչպիսին **սպառնալիքն**³ է: Դրանում արտահայտվող պայմանները հիմնականում վերաբերում են կոնֆլիկտի **կա՛մ առարկային, կա՛մ**

¹ **Ֆրուստրացումը** (լատիներեն՝ *frustratio* – անհաջողություն, խաբկանք, ծրագրերի խոչընդոտում) բնութագրվում է որպես իրական կյանքում կամ երևակայության մեջ նպատակադրումների չիրականացման կամ կարիքների չբավարարման պատճառով առաջացած հոգեկան վիճակ: Այն արտահայտվում է ապրումների և վարքի բնութագրական առանձնահատկություններով և պայմանավորված է օբյեկտիվորեն անհաղթահարելի կամ սուբյեկտիվորեն այդպես ընկալվող դժվարություններով, որոնք առաջանում են խնդրի լուծման կամ նպատակի ճանապարհին:

² Տե՛ս, օրինակ՝ **Widom C.S.** Child Abuse, Neglect, and Violent Criminal Behavior // *Criminology*, 1989. Vol. 27. № 2:

³ Սպառնալիքի էությունը և դրսևորման ձևերը մանրամասն քննարկվում են սույն աշխատության §1.1-ի կետ 5-ի շրջանակներում:

դրա միջանկյալ որևէ մասին: Օրինակ՝ «եթե դու չդադարես հարբեցողությամբ զբաղվել, ապա ...», «եթե դու շարունակես այդպես հագնվել, ապա ...», «եթե փողերս չվերադարձնես, ապա ...», «չեմ ցանկանում քեզ տեսնել, չքվի՛ր աչքիցս, թե չէ ...», «դու իրավունք չունես իմ ներկայությամբ խոսելու, լռի՛ր, թե չէ ...» և այլն:

Ի տարբերություն անմիջական բախման, երբ կոնֆլիկտի կողմերից մեկը հարձակվում է, իսկ մյուսը՝ պաշտպանվում, սպառնալիքը, որպես կանոն, **կենտրոնացվում է պայքարի մասնավոր** պահերի վրա: Օրինակ՝ «եթե ձեռքդ չքաշես, ապա ...», «եթե մեկ անգամ էլ ինձ հարվածես, ապա ...», «եթե ինձ մոտենաս, ապա ...» և այլն¹:

Միևնույն ժամանակ, սպառնալիքները կարող են գործադրվել ինչպես անմիջական բախման, այնպես էլ վեճի լուծմանն ուղղված բանակցությունների ընթացքում: Այդ կապակցությամբ կոնկրետ դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված բանակցությունների ընթացքում **«ընդհանուր լեզու գտնելու» անհնարինությունը** (կապված իրար ընդառաջելու՝ կողմերի ցանկության բացակայության հետ), նպաստում է կոնֆլիկտի սրացմանը: Ընդ որում, անհամաձայնությունն այդ դեպքերում, որպես կանոն, արտահայտվում է կոպիտ, անհարգալից, ագրեսիվ տոնայնությամբ և ուղեկցվում սպառնալիքների գործադրմամբ ու արհամարհական վերաբերմունքով, ինչն իր հերթին նպաստում է կոնֆլիկտային հարաբերությունների խորացմանը²:

Բացի այդ, սպառնալիքը կարելի է գնահատել որպես **պայքարի առավել սուր ձևին** (անմիջական բախմանը) **ան-**

¹ Տե՛ս նաև Юридическая конфликтология, էջ 68:

² Տե՛ս նաև՝ **Кудрявцев С.В.** Межличностный конфликт как причина насильственного преступления. Автореф. дис. канд. психолог. наук. М., 1989, էջ 17:

ցում կապարելու յուրատեսակ միջանկյալ փուլ: Բանն այն է, որ սպառնալիքը ներառում է ինչպես մյուս կողմին ներկայացվող՝ որոշակի վարքագիծ դրսևորելու պայմանը, այնպես էլ դրա չկատարման դեպքում հակառակորդին առավել էական վնաս պատճառելու մտադրության բարձրաձայնումը: Այսպես, օրինակ՝ ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործություններին հաճախ նախորդում են հետևյալ սպառնալիքները՝ «ես քեզ հիմա ցույց կտամ ...», «դեռ կտեսնենք, թե ով՝ ում ...», «հիմա դու կստանաս ...», «դու միայն փորձիր ...» և այլն:

9.6. Միջանձնային կոնֆլիկտի զարգացման մեխանիզմում դրսևորվող **պայքարի շարժընթացը** ամենաընդհանուր գծերով և հակիրճ կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝

- կոնֆլիկտի բռնկման ժամանակ կողմերը հրաժարվում են փոխադարձ զիջումներից կամ նրանցից ոչ մեկը չի փորձում խուսափել բախումից և սկսվում է հակամարտությունը,
- կոնֆլիկտը, որպես կանոն, ձգձգվող բնույթ է ձեռք բերում, իսկ կոնկրետ բախման ավարտը դեռ չի նշանակում, որ ստեղծված իրավիճակը վերանում է, և հետագայում այդ կոնֆլիկտն ավելի ուժգին է բորբոքվում,
- հակամարտության ընթացքում մեկումեջ իրար են հաջորդում սուր և համեմատաբար հանգիստ փուլերը, այսինքն՝ ակտիվ առճակատումը և, այսպես կոչված, «լռության» շրջանը,
- հաճախ կրկնվող նույնանման դրվագները, կենցաղային վեճերը, ընդհարումները, գժտությունները, կարծես, տեղի են ունենում նույն սցենարով, իսկ ժամանակավորապես մարելով՝ դրանք չեն վերացնում

- հակասությունների իրական (հաճախ՝ թաքնված) պատճառը,
- հակադրությունն ավելի ուժգին է դառնում և սրվում, կոնֆլիկտն ահագնանում է և խորանում՝ հասնելով գագաթնակետին (այդ թվում՝ վերաճելով բռնությամբ զուգորդված հանցագործության):

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Առաքելյան Ս.Վ. Բռնությամբ կատարվող հանցագործություններին նպաստող գործոնները Հայաստանի Հանրապետությունում // Գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 146-159:
2. Kennedy D.M. Pulling Levers: Chronic Offenders, High-Crime Settings, and a Theory of Prevention // Val. Univ. Law Rev., Vol. 31, 1997, p. 67.
3. Widom C.S. Child Abuse, Neglect, and Violent Criminal Behavior // Criminology, 1989. Vol. 27. № 2, p. 251-271.
4. Winfree L., Abadinsky H. Understanding Crime. Theory and Practice. Chicago, 1996, p. 9-11.
5. Аванесов Г.А. Криминология и социальная профилактика. М.: Изд-во Акад. МВД СССР, 1980, –526 с.
6. Алтунина И.Р. Мотивы и мотивация социального поведения. Учебное пособие. М.: Изд-во МПСИ, 2006, –144 с.
7. Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М.: Юристъ, 1996, –336 с.
8. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
9. Аракелян С.В. Истоки и особенности детерминации насильственного преступного поведения в РА // Բանբեր

Երևանի համալսարանի: Իրավագիտություն, 2013, թիվ 141.3, с. 17-33.

10. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
11. Аракелян С.В. Семейно-бытовые убийства. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2009, –160 с.
12. Барановский Н.А. Социальные и личностные детерминанты отклоняющегося поведения. Минск: НАН Беларуси, 1993, –208 с.
13. Гилинский Я. Объяснение преступности // Предупреждение преступности. Криминологический журнал. Казахская криминологическая ассоциация, 2002, № 2, с. 70-85.
14. Гилинский Я.И. Социально-экономическое неравенство как криминогенный фактор (от К. Маркса до С. Олькова) // Экономика и право / Ред. А. Заостровцев. СПб.: Наука, 2009, с. 169-188.
15. Дубовик О.Л. Проблема принятия решения о совершении преступления в криминологической науке // Вопросы борьбы с преступностью. М., 1975. Вып. 10, с. 25-46.
16. Запрудский Ю.Г. Социальный конфликт. Ростов н/Д: Ростовский университет, 1992, –120 с.
17. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб.: Питер, 2002, – 512 с.
18. Криминология / Под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. М.: Юрист, 1995, –450 с.
19. Криминология. Учебник для юридических вузов / Под ред. А.И. Долговой. М.: НОРМА, 2000, –784 с.

20. Кузнецова Н.Ф. Проблемы криминологической детерминации / Под ред. и с предисловием В.Н. Кудрявцева. М.: Изд-во Моск. ун-та, 1984, –208 с.
21. Кудрявцев В.Н. Генезис преступления. Опыт криминологического моделирования. М.: ФОРУМ-ИНФРА, 1998, –215 с.
22. Кудрявцев С.В. Межличностный конфликт как причина насильственного преступления. Автореф. дис. канд. Психолог. наук. М., 1989, –20 с.
23. Марцинечко А.С. Детерминанты насильственной преступности в семье в отношении женщин // Вестник Калининградского юридического института МВД РФ, 2008, № 2(16), с. 73.
24. Механизм преступного поведения. М.: Наука, 1981, –248 с.
25. Петин И.А. Механизм преступного насилия. СПб.: Юрид. центр Пресс, 2004, –340 с.
26. Социальные конфликты: Экспертиза, прогнозирование, технология разрешения. Вып.1. М.: ИСПАН, 1991, –281 с.
27. Юридическая конфликтология. М.: Изд-во ИГиП РАН, 1995, –316 с.

§1.6. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելումը

«Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելում» հասկացության բովանդակության բացահայտումը և վերլուծությունը հանցավորության քննարկվող դրսևորման դեմ պայքարի հիմնական խնդիրներից են: Դրանց լուծումից է զգալի չափով կախված այդ պայքարի կազմակերպման և իրականացման արդյունավետությունը:

Հարկանշական է, որ մասնագետները տարբեր կերպ են բնութագրում նշված հասկացության բովանդակությունը: Այդ իմաստով նախ և առաջ աչքի է զարնում համապատասխան տերմինաբանության տարատեսակությունը. «հանցագործությունների կանխում», «հանցագործությունների պրոֆիլակտիկա», «հանցագործությունների կանխում և պրոֆիլակտիկա», «հանցագործությունների նախականիում», «հանցագործությունների խափանում» և այլն:

Միևնույն ժամանակ, դրանք բոլորն առավել ընդհանրական՝ **«հանցագործությունների կանխարգելում»** հասկացության բաղկացուցիչ մասերն են, որոնք, ի թիվս այլնի, ներառում են նաև նախապատրաստվող կամ փորձի փուլում (կատարման ընթացքի մեջ) գտնվող հանցագործությունների խափանմանը, հանցավորությանը նպաստող գործոնների բացառմանը, վերացմանը կամ չեզոքացմանն ուղղված համապատասխան միջոցները: Ուստի քննարկվող երևույթի բնութագրման նպատակով առաջարկվում է օգտագործել հենց նշված հասկացությունը:

1. Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) կանխարգելման համակարգի հիմնական նպատակը ոչ թե բացասական այդ երևույթի վերացումն է և արմատախիլ անելը, այլ դրա նկատմամբ **վերահսկողությունը**, այն որոշակի **սահմաններում պահելը**, վերջինիս **մակարդակը և հանրային վրանգավորությունը նվազեցնելը**: Բացի այդ, նշված համակարգը ենթադրում է նաև փոխկապակցված ու փոխալայմանավորված այնպիսի միջոցների մշակում և իրականացում, որոնք անհրաժեշտ են հանցագործություններին նպաստող (կամ հանցածին) համապատասխան գործոնների վրա ներազդելու համար:

Միևնույն ժամանակ, հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) կանխարգելման համակարգը կոչված է լուծելու **այլ կարևոր խնդիրներ**, որոնց շարքում են՝

- հանցանք կատարած անձանց ուղղումը և վերասոցիալականացումը, ինչպես նաև նրանց կողմից նոր հանցանքների կատարման կանխումը,
- մարդկանց գիտակցության վրա բացասական տարբեր երևույթների ազդեցության մեղմումը,
- աճող սերնդի՝ բարոյական և իրավական նորմերի պահանջներին համապատասխան դաստիարակումը,
- նախապատրաստության կամ կատարման փուլում (ընթացքի մեջ) գտնվող հանցագործությունների խափանումը և այլն:

2. Հանցագործությունների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) կանխարգելումը բարդ, բազմակողմանի և բազմաբովանդակ գործընթաց է, որի բաղկացուցիչ տարրերը **դասակարգվում են** տարբեր հիմքերով: Մասնավորապես, ընդունված է առանձնացնել կանխարգելիչ միջոցների հետևյալ տեսակները.

- **ըստ նպատակադրության մակարդակի՝** 1) ընդհանուր-սոցիալական (կամ ընդհանուր) և 2) հատուկ-կրիմինալոգիական (կամ հատուկ),
- **կախված կիրառման մասշտաբից՝** 1) համապետական (սոցիալական մեծ խմբերին վերաբերող), 2) առանձին օբյեկտներին կամ սոցիալական խմբերին ուղղված և 3) անհատական,
- **ըստ բովանդակության՝** 1) տնտեսական, 2) քաղաքական, 3) սոցիալական, 4) կազմակերպակառավարչա-

կան, 5) մշակութային-դաստիարակչական և 6) իրավական,

- **ըստ նորմատիվ ակտերով կարգավորման բնույթի՝** 1) դատավարական կամ արտադատավարական, 2) արգելող, 3) սահմանափակող և 4) պարտավորեցնող,
- **ըստ սուբյեկտի՝** 1) պետության կողմից իրականացվող, 2) իրավապահ և արդարադատության մարմինների կողմից իրականացվող, 3) հասարակության կամ առանձին անձանց կողմից իրականացվող,
- **ըստ իրականացման փուլերի՝** 1) վաղ (կամ՝ նախականիում), 2) անմիջական և 3) ռեցիդիվի կանխում՝

3. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման համակարգը պետք է ներառի նաև մեր երկրում իրականացվող այն գործունեությունը, որն ուղղված է հետևյալ խնդիրների հետևողական լուծմանը՝

- քննարկվող հանցագործությունների սուբյեկտիվ (ներքին) պատճառների ու դրանց բացասական ազդեցության աստիճանական չեզոքացում և ուղղփակում,
- բռնությամբ հանցանք կատարելուն նպաստող արտաքին պայմանների ազդեցության չեզոքացում, ինչպես նաև նշված հանցավոր արարքների կատարումը խոչընդոտող, դրա հնարավորությունը բացառող պայմանների ստեղծում,
- անձի բարոյական ձևավորման, ժողովրդավարական ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխան նրա դաստիարակության ապահովում,

¹ Տե՛ս նաև **Саркисов Г.С.** Социальная система предупреждения преступности. Ереван, 1975, էջ 68:

- մարդու ներդաշնակ զարգացմանը, նրա սոցիալապես օգտակար հատկությունների ավելացմանը նպաստող հետաքրքրությունների և պահանջմունքների ձևավորման խթանում,
- ողջամիտ բոլոր պահանջմունքների բավարարման օրինական հնարավորությունների առավելագույն չափով ընդլայնում,
- հասարակության բոլոր անդամների ընդհանուր կրթական և մշակութային մակարդակի բարձրացում,
- բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելմանը հասարակության գործուն և արդյունավետ մասնակցությունն ապահովող պայմանների ստեղծում:

4. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման ընդհանուր-սոցիալական միջոցները.

4.1. Հասարակության դրական զարգացումը, դրա սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական և այլ ինստիտուտների կատարելագործումը, հանցավորությունը սնուցող ճգնաժամային երևույթների և անհամաչափությունների վերացումը կամ չեզոքացումն անմիջական ազդեցություն են ունենում մարդկանց կենսագործունեության տարբեր ոլորտների վրա՝ օբյեկտիվորեն նպաստելով նաև հանցագործությունների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) կանխարգելմանը: Այլ կերպ ասած՝ *թեև ընդհանուր-սոցիալական բնույթի միջոցները հակահասարակական երևույթների (այդ թվում՝ հանցավորության և դրա առանձին դրսևորումների) դեմ պայքարի անմիջական նպատակ չեն հետապնդում, սակայն դրանց իրականացումը, վերջին հաշվով, դրական ազդեցու-*

թյուն է ունենում նաև նշված երևույթների կանխարգելման վրա:

Այսպես, օրինակ՝ տնտեսական բարեփոխումները բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման անմիջական նպատակ չեն հետապնդում: Դրանց իրականացումը, սակայն, նպաստում է հասարակության կյանքից հանցածին մեծ նշանակություն ունեցող բացասական այնպիսի երևույթների դուրսմղմանը կամ դրանց ծավալների նվազեցմանը, ինչպիսիք են՝ չքավորությունը, գործազրկությունը, մանկական անօթևանությունը, ընտանեկան անբարեկեցությունը, կենցաղում առկա լարվածությունը և այլն:

4.2. Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) կանխարգելման ընդհանուր-սոցիալական միջոցներն իրենց բնույթով, ներքին բովանդակությամբ և նշանակությամբ բազմազան են ու տարատեսակ: Ըստ նշված հատկանիշների, մասնավորապես, դրանք կարելի է դասակարգել հետևյալ տեսակների՝ *սոցիալական, տնտեսական, քաղաքական, կազմակերպական, դաստիարակչական, մշակութային, գաղափարախոսական, իրավական և այլն*: Դրանք նախ և առաջ ուղղված են այնպիսի նպատակների իրագործմանը, ինչպիսիք են մարդկանց կյանքի նյութական պայմանների բարելավումը, երկրի բնակչության բոլոր շերտերի իրավագիտակցության, կրթական, մշակութային և հոգևոր մակարդակների բարձրացմանը, առկա հասարակական հարաբերությունների կատարելագործմանը: Բնականաբար, նշված նպատակների իրագործումն, իր հերթին, *նախադրյալներ է ստեղծում հանցագործությունների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) արդյունավետ կանխարգելման համար*:

4.3. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման **փնտրեսական բնույթի ընդհանուր-սոցիալական** միջոցների մշակման և կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը պայմանավորված են այն հանգամանքով, որ երկրի տնտեսության անկայունությունը, որպես դրա հետևանք՝ բնակչության կենսամակարդակի նվազումը, գործազրկության ծավալների աճը, բիզնեսի հանցավոր տեսակների (հատկապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության և մարմնավաճառության հետ կապված) ընդլայնումը հանցածին լուրջ ազդեցություն են ունենում հանցավորության և դրա առանձին դրսևորումների որակական և քանակական ցուցանիշների վրա:

Հետևաբար, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրական գործընթացների զարգացման, սեփականության արդարացի բաշխման և վերաբաշխման, ֆինանսական համակարգի ամրապնդման, դրամի արժեզրկման մակարդակի նվազեցման, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների այլ բաղադրիչների կատարելագործման ապահովումը վերջին հաշվով, անկասկած, կնպաստեն նաև երկրի տնտեսական վիճակի հետ կապված հանցածին գործոնների ազդեցության նվազեցմանը:

4.4. Քննարկվող հանցագործությունների կանխարգելման **քաղաքական բնույթի ընդհանուր-սոցիալական** միջոցները գլխավորապես հանգում են հետևյալին. պետական տարբեր ինստիտուտների զարգացումն ու կատարելագործումը, ժողովրդավարության հիմքերի ամրապնդումը, իշխանության բոլոր թևերի հստակ տարանջատումն ու դրանց ամրապնդումը, բացասական տարատեսակ երևույթներին և գործընթացներին հակազդելու քաղաքական կամքի դրսևորումը, անկասկած, բարենպաստ ազդեցություն կարող են

ունենալ հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) դեմ պայքարի արդյունավետության բարձրացման վրա: Մասնավորապես, այդ առումով պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից պետք է լինեն երկրում բռնության բոլոր դրսևորումների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը և դրանց արդյունավետորեն հակազդելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

4.5. Սոցիալական ոլորտում հարկ է կարևորել ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման **ընդհանուր բնույթի** այն միջոցները, որոնք ուղղված են հասարակության կտրուկ շերտավորման վերացմանը: Մասնավորապես՝ ցածր եկամուտ ունեցողներին աջակցության ցուցաբերմանը, ընտանիքի հիմքերի ամրապնդմանը, անձի սոցիալականացման պատշաճ պայմանների ստեղծմանը և նրա սոցիալական օտարացման հաղթահարմանը, գործազրկության ու հարկադրված միգրացիայի բացասական հետևանքների սահմանափակմանը, կարիքավորներին բնակարանով ապահովելու խնդրի լուծմանը, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև զբաղվածության կենտրոնների ցանցի ընդլայնմանը և դրանց գործունեության արդյունավետության ապահովմանը, հասարակության անդամների կենցաղային պայմանների բարելավմանը, նրանց նյութական-կենցաղային պահանջունքների բավարարման օրինական հնարավորությունների ընդլայնմանը և այլն:

Դրա հետ մեկտեղ՝ առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել կենցաղում միջանձնային շփման մշակույթի ձևավորմանը, որն էապես կնպաստի կենցաղային տարբեր կոնֆլիկտների սոցիալապես ընդունելի լուծմանը, հետևա-

բար՝ նաև բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելմանը: Ընդ որում, իրավունքի նորմերում հնարավոր չէ գտնել հետևյալ հարցերի պատասխանները. ինչպե՞ս լուծել կենցաղային կոնֆլիկտը և հնարավո՞ր է արդյոք այն կանխել: Այդ առումով որոշակի խորհուրդներ (կանոններ) են պարունակում հոգեբանների աշխատությունները, որոնք կիրառելի են նաև ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման կապակցությամբ: Խոսքը հետևյալ կանոնների մասին է՝

- առաջացած անախորժությունը հարթելու նպատակով պետք չէ այլ անձանց ներկայությամբ իրար դիտողություն անել և կոնկրետ վարքագծի պատճառներ պարզել,
- վիճաբանող կողմերը պետք է ձգտեն հասկանալ մեկը մյուսի դիրքորոշումը, չմերժեն այն կտրուկ և միանգամից, հնարավորություն տան դիմացինին արտահայտվելու, ներկայացնելու հիմնավորումներ,
- կոնֆլիկտի խորացմանը, լարվածության ավելացմանը նպաստող հնարավոր քննադատությունից և անցանկալի արտահայտություններից խուսափելու համար սեփական սխալը պետք է ընդունել արագ և վճռականորեն,
- վիճաբանության ընթացքում խոսակցությունը պետք է վարել կոշտ, սակայն ոչ թե կոպիտ, անտաշ, այլ բարիդրացիական և հանգիստ տոնով¹:

4.6. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման ***գաղափարախոսական բնույթի ընդ-***

¹ Տե՛ս, օրինակ՝ **Ершов А.А.** Личность и коллектив (Межличностные конфликты в коллективе, их разрешение). Л., 1976, էջ 28-29:

հանուր-սոցիալական միջոցները նախ և առաջ իրականացվում են մարդկանց քաղաքացիական գիտակցության ընդհանուր մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքական-լուսավորչական և մշակութային-դաստիարակչական որոշակի միջոցառումների կենսագործմամբ: Այդ առումով, մասնավորապես, կարևոր նշանակություն ունի մարդկային շփման միջավայրից անազնվության, անկարգապահության, անպատասխանատվության, հանրային շահերի, ընտանիքի անդամների, կոլեկտիվի ճակատագրի նկատմամբ անտարբերության հետ կապված հակահասարակական հայացքներն ու կողմնորոշումները դուրս մղելը:

Քննարկվող միջոցառումների շարքին կարելի է դասել նաև օրենքների և իրավական այլ ակտերի պահանջների կատարման անհրաժեշտության քարոզչությունը, ինչպես նաև դասախոսությունների, սեմինարների, զեկուցումների, քննարկումների, հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ մամուլում ելույթների ձևով իրավագետների, դատավորների, դատախազների, քննիչների, հետաքննիչների, փաստաբանների և այլ մասնագետների կողմից իրականացվող զանգվածային-բացատրական աշխատանքը:

4.7. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման **ընդհանուր-սոցիալական** միջոցների շղթայում հարկ է կարևորել նաև դրա **իրավական** օղակը: Ընդ որում, խոսքը տվյալ դեպքում ոչ թե անմիջականորեն քննարկվող հանցագործությունների կանխարգելմանն ուղղված, այլ հասարակական այլ հարաբերություններ (ընտանեկան, աշխատանքային և այլն) կարգավորող օրենսդրության կատարելագործման մասին է: Բանն այն է, որ նշված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում առկա թե-

րությունները, հակասությունները և բացթողումները կարող են նշանակալի հանցաձին ազդեցություն ունենալ:

5. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման **հատուկ-կրիմինալոգիական միջոցները**.

5.1. Կանխարգելման հատուկ-կրիմինալոգիական միջոցները, ի տարբերություն ընդհանուր-սոցիալականների, ինչպես արդեն նշվել է, բնութագրվում են այն բանով, որ **ուղղակիորեն, անմիջականորեն** ուղղված են հանցավորության և դրա առանձին դրսևորումների դեմ պայքարին: Դրանց գլխավոր առանձնահատկությունը հանցագործություններին նպաստող գործոնների բացահայտման և վերացման, ուղեփակման կամ չեզոքացման համար նախատեսված լինելն է: Միննույն ժամանակ, հատուկ-կրիմինալոգիական կանխարգելումը ներառում է նաև նախապատրաստվող և ընթացքի մեջ գտնվող (սկսված, սակայն դեռ չավարտված) հանցագործությունների խափանումը:

5.2. Հանցագործությունների կանխարգելման հատուկ միջոցները նույնպես կարող են տնտեսական, սոցիալական, մշակութային, դաստիարակչական, կազմակերպական կամ իրավական բնույթ կրել: Դրանց հիմնական առանձնահատկությունը, սակայն, հետևյալն է՝

- դրանք, ի տարբերություն կանխարգելման ընդհանուր միջոցների, անմիջականորեն ուղղված են հանցավորության պատճառների և պայմանների հաղթահարմանը, ինչպես նաև հանցանք կամ դրա փորձ կատարած և այն անձանց վրա ներգործելուն, ովքեր հանցավոր վարքագիծ դրսևորելու հակում ունեն,
- քննարկվող միջոցների պարագայում, ի տարբերություն ընդհանուր-սոցիալականների, գերակայում են

հարկադրանքի տարրերը, քանզի հանցագործության մեջ մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելը, նրանց նկատմամբ պատիժ նշանակելը և այն իրականացնելն առանց դրա անհրազործելի են,

- կանխարգելման հատուկ-կրիմինալոգիական միջոցների կիրառման մասշտաբներն ու արդյունքները, ընդհանուր-սոցիալականների համեմատ, առավել սահմանափակ են, ինչը նախ և առաջ պայմանավորված է դրանց առջև դրված վերոհիշյալ կոնկրետ խնդիրներով¹:

5.3. Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման խնդիրները լուծվում են բազմաթիվ պետական և ոչ պետական, մասնագիտացված և ոչ մասնագիտացված սուբյեկտների կողմից:

5.3.1. Հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման ոչ մասնագիտացված սուբյեկտների շարքում նախ և առաջ հարկ է առանձնացնել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններին: Այդ առումով վերջիններիս առանձնահատկությունն այն է, որ դրանք ձևավորում են հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման նորմատիվ-իրավական հիմքը, սահմանում են տվյալ գործունեության այլ սուբյեկտների իրավասությունը և լիազորությունները, իրականացնում են դրա ֆինանսական, նյութատեխնիկական, կադրային և այլ ռեսուրսային ապահովումը, պլանավորումը, դրա նկատմամբ վերահսկողությունը և այլն:

¹ Տե՛ս նաև **Саркисов Г.С.** Социальная система предупреждения преступности, էջ 73-74:

Հատուկ կանխարգելման ոչ մասնագիտացված սուբյեկտների շարքին կարելի է դասել նաև տարատեսակ հասարակական կազմավորումները (քաղաքական կուսակցությունները, շարժումները, հիմնադրամները, կրոնական կազմակերպությունները և այլն), դպրոցների ծնողական խորհուրդները (կոմիտեները), բարեգործական կազմակերպությունները, սոցիալական, բժշկահոգեբանական կենտրոնները և այլն:

5.3.2. Մեկ այլ խումբ են կազմում հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) *հատուկ-կրիմինալոգիական կանխարգելման մասնագիտացված սուբյեկտները*: Դրանց բոլորի ընդհանուր բնութագրական գիծը հենց հանցավորության դեմ պայքարելու համար նախատեսված լինելն է: Ընդ որում, դա նաև նշված սուբյեկտների միակ կամ հիմնական գործառույթն է կամ հիմնականներից մեկը:

Տվյալ խումբը նույնպես ներառում է թե՛ պետական (դատական և իրավապահ մարմիններ), թե՛ ոչ պետական (հասարակական կարգի պահպանության հանրային կետեր, կամավորական ժողովրդական ջոկատներ, ձեռնարկություններում հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովներ և այլն) մի շարք սուբյեկտների:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ***մասնագիտացված պետական սուբյեկտների*** տարբերակիչ հատկանիշը դրանց պատկանելությունն է երկրի արդարադատության և իրավապահայան համակարգերի մարմինների թվին: Այդպիսիք են դատական, դատախազական, քննչական, ինչպես նաև ոստիկանության, ազգային անվտանգության և քրեական արդարադատության իրականացմանը նպաստող այլ մարմինները: Դրանք առավելապես կոչված են իրականացնելու հանցավորության հատուկ կանխարգելման նպատակային

ուղղվածություն ունեցող և իրավական բնույթ կրող միջոցառումներ: Մասնավորապես.

- ✓ **«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի** հոդված 2-ի դրույթներին համապատասխան՝ պետական կառավարման համակարգի տվյալ մարմնի հիմնական խնդիրներից է մարդու անվտանգությունը, հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականիսումը, կանխումը և խափանումը, հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննության կատարումն ապահովելը: ՀՀ ոստիկանության մարմինները կոչված են իրականացնելու հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) հատուկ-կրիմինալոգիական կանխարգելմանն ուղղված մեծածավալ և բազմատեսակ աշխատանքներ:

Միևնույն ժամանակ, կազմակերպական առումով կարելի է առանձնացնել նշված մարմինների՝ ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելմանն ուղղված գործունեության հետևյալ հիմնական փուլերը՝

- այն անձանց բացահայտում և հաշվառում, որոնց վարքագիծն ու անձնային առանձնահատկությունները վկայում են նրանց կողմից քննարկվող հանցանքները կատարելու հավանականության մասին,
- նշված անձանց անհատական առանձնահատկությունների, ապրելակերպի, անմիջական սոցիալական միջավայրի (շրջապատի) և կապերի, վարքագծի՝ անցյալում և ներկայում եղած դրսևորումների, նրանց զբաղվածության և կենցաղի ուսումնասիրություն,
- այդ անձանց հավանական վարքագծի կանխատեսում և նախականիսչ համապատասխան միջոցների գի-

տականորեն հիմնավորված պլանավորում և իրականացում,

- քննարկվող հանցագործությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներում համապատասխան այլ սուբյեկտների հետ համագործակցության ապահովում:

- ✓ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի դրույթներին համապատասխան՝ քննչական տվյալ պետական մարմնի լիազորություններն են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով¹ իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումն ու իրականացումը:

Այս սուբյեկտների կանխարգելիչ աշխատանքն իրականացվում է քրեական վարույթ նախաձեռնելով, նախաքննություն իրականացնելով, հանցանք կատարած անձանց բացահայտելով, նրանց մեղքն ապացուցելով և այլն: Ընդ որում, նշված գործառույթներն իրականացնելով՝ քննիչները կանխարգելիչ ազդեցություն են ունենում թե՛ կոնկրետ հանցանքները կատարողների (մասնավոր կանխարգելում), թե՛ կատարվող նախաքննության մասին իմացող այլ անձանց (ընդհանուր կանխարգելում) վրա:

Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 185-ի 1-ին մասի դրույթներին համապատասխան՝ կոնկրետ հանցագործությունների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) վերաբերյալ

¹ ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 181-ի դրույթներին համապատասխան՝ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի, իսկ այլ հանցանքների վերաբերյալ վարույթներով՝ քննչական կոմիտեի քննիչները:

մինչդատական վարույթի ընթացքում քննիչի¹ վրա պարտավորություն է դրված միջոցներ ձեռնարկել՝ պարզելու հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները և անհրաժեշտության դեպքում համապատասխան պաշտոնատար անձին կամ իրավաբանական անձի ղեկավարին ներկայացնել այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագիր: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այդ միջնորդագիրը ենթակա է պարտադիր քննարկման, որի արդյունքների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հաղորդվում է այն ուղարկած մարմնին կամ պաշտոնատար անձին:

- ✓ Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) կանխարգելումը՝ որպես լուծման ենթակա խնդիր, ենթադրվում է նաև **դատախազության** գործունեության գրեթե բոլոր ուղղությունների պարագայում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության հոդված 176-ի դրույթներին համապատասխան՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝
 - հարուցում է քրեական հետապնդում,
 - հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ,
 - դատարանում պաշտպանում է մեղադրանքը,
 - բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,
 - հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ,

¹ Նշված իրավակարգավորմամբ նման պարտավորություն է դրված նաև դատախազի վրա:

- օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Այդ առումով, վերականգնելով մարդկանց խախտված քաղաքական, աշխատանքային, գույքային և այլ իրավունքները՝ դատախազությունը նպաստում է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ բնույթի բացասական այն գործոնների ազդեցության նվազեցմանը, որոնք կարող են հանգեցնել հանցանքի կատարման: Բացի այդ, մինչդատական քրեական վարույթի, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելով և դատարանում մեղադրանքը պաշտպանելով ու դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելով՝ տվյալ կառույցն էական ներդրում է ունենում հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) կանխարգելման գործում:

- ✓ Քննարկվող հանցագործությունների (նաև՝ ընդհանրապես հանցավորության) դեմ պայքարին էապես նպաստում է նաև **դատարանների** գործունեությունը: Այդ կապակցությամբ հարկ է հատուկ ընդգծել դատական վարույթի հրապարակայնության կարևոր նշանակությունը: Բանն այն է, որ քննարկվող հանցագործությունների պարագայում տվյալ սկզբունքի իրագործումը ենթադրում է, մասնավորապես, երկրի բնակչության ուշադրության կենտրոնում գտնվող դատական գործընթացների ընթացքի և արդյունքների ժամանակին և պատշաճ լուսաբանումը: Ընդ որում, այդ առումով համապատասխան տեղեկատվությունը հրապարակելիս շեշտը պետք է դրվի ոչ թե բռնությամբ կատարված կոնկրետ հանցանքի սենսացիոն մանրա-

մասների, այլ տվյալ հանցագործությանը նպաստած գործոնների և դրա կանխման չօգտագործված հնարավորությունների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատաքննության ընթացքում նույնպես պետք է բացահայտվեն բռնությամբ կատարված այս կամ այն հանցանքին նպաստող գործոնները՝ դատարանի կողմից պարտադիր պետք է պարզաբանվեն հետևյալ հանգամանքները՝

- ամբաստանյալի մեջ հակահասարակական կողմնորոշման ձևավորումը (այն ամենը, ինչը հանդիսացել է նրա հանցավոր վարքագծի սուբյեկտիվ գործոն),
- տվյալ հանցանքը կատարելու դիտավորության ձևավորմանը (այն կատարելու մտադրության առաջացմանը) անմիջականորեն նպաստած գործոնները,
- բացասական տարատեսակ գործոնների ազդեցությունը հեշտացրած հանգամանքները (օրինակ՝ ընտանեկան-կենցաղային տևական վեճերը, հարբեցողությունը և այլն),
- կենսական կոնկրետ իրավիճակի հանցածին նշանակություն ունեցած հանգամանքները (օրինակ՝ սուր կոնֆլիկտային հարաբերությունները, տուժողի սադրիչ վարքագիծը և այլն):

- ✓ Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) հատուկ կանխարգելման գործում առանձնահատուկ դերակատարություն ունեն նաև **քրեակատարողական (պալիժներ կատարող) հիմնարկները և մարմինները**: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 13-ով նախատեսված իրավակարգավորումներին համապատասխան՝ այդպիսիք են քրեակատարողական հիմնարկները, ՀՀ արդարադա-

տության նախարարության պրոբացիայի ծառայությունը, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործող կայազորային կարգապահական մեկուսարանները և կարգապահական գումարտակները: Նշված սուբյեկտների գործունեության հիմնական նպատակներն են՝ դատապարտյալների վերասոցիալականացումը, նրանց իրավահպատակ վարքագծի ձևավորումը և նոր հանցագործությունների կանխումը:

6. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելմանը հասարակության մասնակցությունը.

6.1. Հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) դեմ պայքարի բազմամյա փորձը վկայում է, որ պետական իշխանության որևէ մարմին, կանխարգելիչ որևէ միջացառում չի կարող վերջնական դրական արդյունքի հասնել, եթե դրանք չհենվեն հասարակության և դրա առանձին ներկայացուցիչների լայն աջակցության վրա: Այսինքն՝ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի գործում բավարար չեն միայն դրա համար հատուկ նախատեսված սուբյեկտների ջանքերը: Ավելին, հանցավորության մտահոգիչ որակական և քանակական ցուցանիշների, բացասական միտումների նկատմամբ հասարակության անտարբերության պարագայում դրան հակազդելու առումով հնարավոր չէ ակնկալել որևէ դրական փոփոխություն:

6.2. Հանցագործությունների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) կանխարգելմանը նպաստող հասարակական կառույցների շարքում նախ և առաջ հարկ է առանձնացնել քաղաքացիական հասարակության առաջնային օղակները՝ **ընտանիքը, աշխատանքային և ուսումնական կոլեկտիվները:** Դրանք ունակ են անմիջականորեն ներազդելու մարդու, նրա կենսապայմանների վրա, խափանելու հակահասարակական

(ոչ հանցավոր) վարքագծի վերաճումը հանրորեն վտանգավոր (հանցավոր) արարքի, կանխելու հանցագործությունների ռեցիդիվը և այլն:

6.3. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման գործում առանձին անհատների մասնակցության առումով հարկ է հատուկ ընդգծել հանցավորի ***ամուսնու, ընտանիքի այլ անդամների և հարևանների*** կարևոր դերն ու նշանակությունը:

Բանն այն է, որ հենց նշված սուբյեկտներն են գլխավորապես առնչվում ընտանեկան-կենցաղային հարաբերությունների ոլորտում հանցածին գործոնների ձևավորման և հետագա զարգացման գործընթացին: Ուստի, գտնվելով կոնֆլիկտային հարաբերությունների «էպիկենտրոնում»՝ նրանք կարող են զգալի ազդեցություն ունենալ դրանց վրա: Վերջինս էլ, իր հերթին, կարող է լինել ինչպես կառուցողական (կոնֆլիկտը սոցիալապես ընդունելի եղանակով մեղմող, չեզոքացնող, հանգուցալուծող), այնպես էլ ապակառուցողական (կոնֆլիկտի սրացման հանգեցնող, այն սոցիալապես անընդունելի, իսկ երբեմն՝ նույնիսկ հանցավոր եղանակով հանգուցալուծող) բնույթի:

6.4. ՀՀ-ում բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելմանը հասարակության ներգրավման արդյունավետությունն ապահովելու նպատակով, արտասահմանյան տարբեր երկրների օրինակով, անհրաժեշտ է մշակել և կենսագործել նաև որակապես նոր ձևեր ու եղանակներ: Մասնավորապես.

✓ Առաջավոր մի շարք երկրների դրական փորձը հաշվի առնելով՝ կարելի է ստեղծել հանցագործություններից կամ այլ իրավախախտումներից ***պաշտպանվելու նպատակ հետապնդող հասարակական լոկալ միավորումներ***, որոնց գոր-

ծունեությունը պետք է ուղղված լինի նաև տուժողների հետ տարվող աշխատանքներին: Օրինակ՝ ծնողների և ուսուցիչների միավորումները, որոնք ձևավորվում են երեխաներին սեռական ոտնձգություններից կամ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունից պաշտպանելու նպատակով և այլն¹:

- ✓ Օգտակար կարող է համարվել նաև հանցագործությունների (այդ թվում՝ բռնությամբ կատարվող) կանխարգելման՝ Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Դանիայում, Շվեդիայում, Նիդերլանդներում և եվրոպական այլ երկրներում գործող **հանրային խորհուրդների** ստեղծումը: Դրանց հիմնական խնդիրներից են՝ հանցավորության վիճակի և միտումների ուսումնասիրությունը, դրան նպաստող գործոնների բացահայտումը, անբարենպաստ ընտանիքներին նյութական, հոգեբանական օգնության ցուցաբերումը և այլն²:
- ✓ ԱՄՆ-ում նույնպես լայնորեն կիրառվում է հանցավորության (այդ թվում՝ բռնությամբ կատարվող հանցագործությունների) կանխարգելման գործընթացին հասարակության և հատկապես՝ ոչ պետական (հասարակական) կազմակերպությունների ներգրավումը: Դրանց շարքում առանձնահատուկ դերակատարություն ունեն, օրինակ՝ **բժշկական կազմակերպությունները, կանանց իրավունքների պաշտպանության**

¹ Տե՛ս նաև **Иншаков С.М.** Зарубежная криминология: Учебное пособие. М.: ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 217:

² Տե՛ս նույն տեղում, էջ 218:

կենտրոնները, սոցիալական աշխատողների, հոգեբանների և հոգեբույժների միավորումները և այլն¹:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Առաքելյան Ս.Վ. Հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում անցումային շրջանում // Պետություն և իրավունք, 2002, թիվ 4(18), էջ 17-24:
2. Абызов Р.М., Ботвин И.В. Предупреждение бытовой насильственной преступности органами внутренних дел: проблемы и пути решения // Научный вестник Омской академии МВД России. 2021. № 4(83), с. 301-305.
3. Аветисян С.А., Ключкова А.Л. Предупреждение насильственной преступности несовершеннолетних // Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2023. № 10 (161), с. 101-106.
4. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
5. Аракелян С.В. Основные направления борьбы с насильственной преступностью в Республике Армения // Գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Եր., ԵՊՀ հրատ., 2012, с. 159-180.
6. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
7. Бакин А.А. Взаимодействие органов внутренних дел с общественностью в вопросах профилактики насильствен-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 257-258:

- ной преступности // Вестник Санкт-Петербургского университета МВД России № 3(43), с. 88-95.
8. Буз С.И. Зарубежный опыт профилактики насильственной преступности // Вестник Краснодарского университета МВД России. 2018. № 3(41), с. 37-41.
 9. Быкасов А.А. Актуальные вопросы профилактики насильственной преступности в семьях России // Право и общество в условиях глобализации: перспективы развития. Сб. науч. тр. / Под ред. В.В. Бехер, Н.Н. Лайченко-вой. Саратов, 2016. Вып. 4., –400 с.
 10. Ершов А.А. Личность и коллектив (Межличностные конфликты в коллективе, их разрешение). Л.: Знание, 1976, –40 с.
 11. Жиров Р.М., Нинчиева Т.М. Виктимологическая профилактика и предупреждение насильственной преступности // Право и государство: теория и практика. 2022. № 12 (216), с. 266-269
 12. Изаксон Р.А. Некоторые аспекты предупреждения насильственной преступности // Вестник Восточно-Сибирского института МВД России. 2023. № 3 (106), с. 122–132.
 13. Иншаков С.М. Зарубежная криминология: Учебное пособие. М.: ИНФРА. М-НОРМА, 1997, –374 с.
 14. Одинокая А.Б., Фабрика Т.А. К вопросу об актуальности предупреждения насильственной преступности // Юридический факт. 2022. № 195, с. 10-12.
 15. Петрушко Ю.А. Криминологическая характеристика рецидива насильственной преступности и проблемы ее предупреждения // Евразийский Союз Ученых (ЕСУ). 2015. № 10(19), с. 87-90.

16. Саркисов Г.С. Социальная система предупреждения преступности. Ереван: Айастан, 1975, –159 с.
17. Сорокун Н.С., Ермакова О.В. Предупреждение насильственной преступности в подростково-молодежной среде // Алтайский юридический вестник. 2022. № 3(39), с. 85-90.
18. Федорова А.В. Криминологическая характеристика и направления предупреждения насильственной преступности в современных условиях // Вопросы студенческой науки. 2020. № 1(41), с.100-103.
19. Шитиков Ф.В. Проблемы формирования системы предупреждения насильственной преступности в современной России // Наукосфера. 2021. №6(2), с. 249-252.

ԳԼՈՒԽ 2

ԲՈՒՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§2.1. Սպանությունների բնութագիրը

Անհիշելի ժամանակներից սպանությունը համարվում է մարդու դեմ ուղղված ամենածանր և առավել խիստ պատժվող հանցավոր արարքը: Թեև սպանությունների (և սպանության փորձերի) մասնաբաժինը համեմատաբար փոքր է Հայաստանի Հանրապետությունում գրանցված թե՛ ընդհանուր հանցավորության, թե՛ բռնությամբ կատարված հանցագործությունների կառուցվածքում, սակայն դրանց հանրային վրանգավորությունը, ինչպես հայտնի է, որոշվում է ոչ այնքան տարածվածությամբ, որքան պատճառվող վնասակար հետևանքների ծանրությամբ: Բանն այն է, որ քննարկվող հանցագործության արդյունքում առաջացող հետևանքները հնարավոր չէ փոխհատուցել, քանի որ մարդկային կյանքի կորուստն անդառնալի է և անփոխարինելի:

Այլ կերպ ասած՝ անկախ քրեորեն պատժելի արարքների ընդհանուր համակցության մեջ սպանությունների և սպանության փորձերի ոչ բարձր տեսակարար կշռից, դրանց կանխարգելումը միշտ եղել և շարունակում է մնալ և՛ կրիմինալոգիայի՝ որպես գիտության, և՛ իրավապահպան գործունեության առավել արդիական, նշանակալի ու կարևոր խնդիրներից մեկը:

1. ՀՀ-ում կատարվող սպանությունների **որակական և քանակական** հիմնական ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 15-ում:

**Սպանությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը
ՀՀ-ում 2019-2023 թթ.**

Հանցատեսակ	2019	2020	2021	2022	2023	Ընդ.
Սպանություններ	77	89	107	104	120	497
Դրանցից՝ սպանության փորձեր	30	39	47	46	65	227
<i>Ընդ. բռնությամբ կապ. հանցագործություններ</i>	<i>1 508</i>	<i>1 437</i>	<i>1 372</i>	<i>1 515</i>	<i>1 815</i>	7 647
<i>Ընդամենը գրանցված հանցագործություններ</i>	<i>26 850</i>	<i>26 468</i>	<i>30 245</i>	<i>37 612</i>	<i>40 666</i>	161 841

1.1. Ներկայացված աղյուսակից հետևում է, որ.

- ✓ 2019-2023 թթ. ՀՀ-ում գրանցված ընդհանուր հանցավորության կառուցվածքում սպանությունների և սպանության փորձերի մասնաբաժինը **0,3%** է, իսկ բռնությամբ կատարվող հանցագործությունների կառուցվածքում՝ **6,49%**:
- ✓ Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված սպանությունների և դրանց փորձերի առավել մեծ թիվն արձանագրվել է **2023** (120), իսկ ամենափոքրը՝ **2019** (77) թվականին:
- ✓ Քննարկվող հանցագործությունների շարժընթացն այդ ժամանակահատվածում բնութագրվում է անհամաչափությամբ: Մասնավորապես՝ 2019-2021 թթ. արձանագրվել է դրանց **անընդհապ աճ**, 2022 թվականին՝ **ոչ էական նվազում**, իսկ 2023 թվականին՝ **կտրուկ աճ**:
- ✓ Բացարձակ ցուցանիշներով 2019-2023 թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների և սպանության փորձերի **առավելագույն աճը**, նախորդող տարվա համեմատ,

արձանագրվել է 2021 (+18), իսկ **նվազագույնը՝** 2020 (+12) թվականին:

- ✓ Ինչ վերաբերում է քննարկվող հանցագործությունների նվազմանը, ապա այն, նախորդող տարվա համեմատ, ինչպես արդեն նշվել է, արձանագրվել է միայն 2022 (3) թվականին:

2. ՀՀ-ում կատարվող սպանությունների (այդ թվում՝ սպանության փորձերի) կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանց **տարածաշրջանային առանձնահատկությունների** բացահայտումը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված սպանություններն ըստ մարզերի և Երևան քաղաքի (%)

Վարչատարածքային միավոր	Մասնաբաժին
Երևան	40,08
Արագածոտն	3,58
Արարատ	10,33
Արմավիր	5,78
Գեղարքունիք	4,68
Լոռի	8,67
Կոտայք	10,60
Շիրակ	7,43
Սյունիք	3,46
Վայոց ձոր	1,92
Տավուշ	3,47
Ընդամենը ՀՀ	100,0

2.1. Ներկայացված աղյուսակից, մասնավորապես, հետևում է, որ.

- ✓ ՀՀ-ում սպանություններ **առավել հաճախ** (ընդհանուր թվի 40,08%-ը) կատարվում են Երևանում: Դրան ըստ

նվազման **հաջորդում են** Կոտայքը (10,6%), Արարատը (10,33%), Լոռին (8,67%), Շիրակը (7,43%), Արմավիրը (5,78%), Գեղարքունիքը (4,68%), Արագածոտնը (3,58%), Տավուշը (3,47%) և Սյունիքը (3,46%): Այդ առումով **առավել ցածր** տեսակարար կշռով աչքի է ընկնում Վայոց ձորը (1,92%):

- ✓ ՀՀ-ում 2019-2023 թթ. սպանությունների **մեծ մասը** (70,37%) գրանցվել է մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում (Արագածոտնում, Արարատում, Արմավիրում և Կոտայքում), որտեղ բնակվում է երկրի բնակչության 65,5%-ը:
- ✓ **100 հազար բնակչի** հարաբերակցությամբ քննարկվող հանցագործությունների գործակիցների հաշվարկի պարագայում, սակայն, իրավիճակն այլ է: Մասնավորապես՝ առաջին դիրքում Կոտայքն է (36,8), որին հաջորդում են Երևանը (31,9), Արարատը (31,7), Լոռին (30,7), Վայոց ձորը (30,6), Շիրակը (24,3), Տավուշը (22,6), Սյունիքը (21,9), Արմավիրը (21,7), Արագածոտնը (19,5) և Գեղարքունիքը (14,4):

3. Հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում սպանությունների մեծ մասը **կենցաղային** բնույթ է կրում: Ընդ որում, դրանց, ինչպես արդեն նշվել է, հաճախ նախորդում է միջանձնային կոնֆլիկտը: Բացի այդ, ՀՀ-ում կատարվող սպանություններին նպաստող գործոնները հիմնականում պայմանավորված են ընտանեկան-կենցաղային հարաբերությունների ոլորտի առանձնահատկություններով: Վերջիններիս **դրդապատճառները**, որպես կանոն, վրեժը, խանդը, նախանձը, զայրույթը և թշնամանքն են:

Պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված բոլոր սպանությունների զանգվա-

ծում ընտանեկան-կենցաղային հարաբերությունների ոլորտում կատարվածների մասնաբաժինը **շուրջ 33%** է: Այսինքն՝ Հայաստանում մոտավորապես ամեն երրորդ սպանություն կատարվում է միջանձնային հարաբերությունների հենց նշված ոլորտում:

4. Քննարկվող հանցագործությունները բնութագրող էական ցուցանիշ է դրանց կատարման **եղանակների** բնույթը: Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում սպանությունների կատարման մանրակրկիտ նախապատրաստված, բարդացված, հնարամիտ, խորամանկորեն մտածված, քողարկված եղանակները **շատ հազվադեպ** են հանդիպում: Ավելին՝ քննարկվող հանցանքը կատարողների գործողությունների նախապատրաստվածության առումով առկա է հետևյալ պատկերը. **առանց վարքագծի նախապես մտածված** ծրագրի կատարվել է սպանությունների 60,1%-ը, իսկ **նախնական պլանավորմամբ**՝ 27,8%-ը: Մնացած դեպքերում հանցագործության եղանակի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:

Բացի դրանից, վերը հիշատակված հանցագործությունների **հետքերը թաքցնելու** ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվել գրանցված դեպքերի ընդամենը 12,7%-ի պարագայում: Միևնույն ժամանակ, քրեական համապատասխան գործերի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ հանցանքը կատարելու վայրում հանցավորը **հետքեր չի թողել** դեպքերի ընդամենը 17,6%-ի պարագայում:

4.1. Սպանությունների եղանակները, սակայն, հիմնականում բնութագրվում են դրանք կատարելիս կիրառվող գործիքների և միջոցների վերաբերյալ տվյալներով: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 17-ում:

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված սպանությունների դասակարգումն ըստ հանցանքը կատարելիս կիրառվող գործիքի (%)

Հանցագործության գործիք	Սպանություններ
Հրազեն	43,4
Սառը զենք	1,67
Պայթուցիկ նյութ և պայթեցման սարք	6,47
Այլ նշանակության առարկա	48,4
Ընդ. զենքի կամ այլ առարկ. գործադրմամբ	100,0

Ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ 2019-2023 թթ. ՀՀ-ում հանցագործության որևէ գործիքի կիրառմամբ սպանությունները, որպես կանոն, կատարվել են **հրազենի կամ որպես զենք օգտագործվող այլ նշանակության առարկաների** գործադրմամբ: Դրանց ընդհանուր մասնաբաժինը **91,8%** է: Բացի դրանից, զենքի, պայթուցիկ նյութերի և սարքերի կամ որպես զենք օգտագործվող այլ նշանակության առարկաների գործադրմամբ կատարված սպանությունների կառուցվածքում՝

- ✓ **զերակայում են** որպես զենք օգտագործվող այլ նշանակության առարկաների (փայտ, քար, մետաղյա ծող, կացին, լինգ, մուրճ, պտուտակ և այլն) գործադրմամբ կատարվածները, որոնց մասնաբաժինը **48,4%** է,
- ✓ դրանց ոչ զգալիորեն զիջում են հրազենի (որպես կանոն՝ ողորկափող որսորդական) գործադրմամբ կատարված սպանությունները, որոնց մասնաբաժինը **43,4%** է,
- ✓ վերջիններիս հաջորդում են պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքերի (**6,47%**) և սառը զենքի (**1,67%**) գործադրմամբ կատարվածները:

Միևնույն ժամանակ, պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքերի կիրառման պարագայում սպանությունների **ավելի քան 70%-ն** ընդհատվել է հանցավորժի փուլում: Դա գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցավորները չեն ունեցել նշված նյութերի կամ սարքերի հետ վարվելու բավականաչափ հմտություններ և կարողություններ:

Առանձին մտահոգության տեղիք են տալիս հրազենի և սառը զենքի գործադրման դեպքերը: Ընդ որում, **48,3%** դեպքերում դրանք պահվում են հանցավորի մոտ օրինական հիմքերով, **34,5%** դեպքերում՝ ապօրինաբար, իսկ **17,2%** դեպքերում՝ վերցվում են երրորդ անձից:

Հարկ է նշել նաև, որ որպես զենք օգտագործվող այլ նշանակության առարկաները հիմնականում վերցվում են **սպանության կատարման վայրից**: Մինչդեռ հրազենը, սառը զենքը, պայթուցիկ նյութերը և պայթուցիկ սարքերն առավել հաճախ նախապես են պատրաստվում կամ հարմարեցվում հանցանք կատարելու համար:

Հետևաբար, երկրի բնակչության զգալի մասի մոտ հրազենի և մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված այլ առարկաների կամ միջոցների առկայությունը ՀՀ-ում կատարվող սպանություններին նպաստող **առավել էական գործոններից** է: Այլ կերպ ասած՝ քննարկվող հանցագործությունների զգալի մասը կարող էր տեղի չունենալ, եթե որոշակի իրադրությունում հանցավորի ձեռքի տակ չլինեք զենք կամ որպես այդպիսին օգտագործվող այլ առարկա:

4.2. Բավականին հաճախ (սպանությունների շուրջ **20%-ի** պարագայում) հանցավորը դիմում է **ֆիզիկական ուժի** գործադրման, որը դրսևորվում է ձեռքերով, ոտքերով հարվածներ հասցնելու, բարձրությունից հրել-նետելու միջոցով մարմ-

նական վնասվածքներ հասցնելով, ինչպես նաև խեղդելով, ջրահեղձ անելով և այլն: Մասնավորապես, ֆիզիկական ուժ գործադրելիս գլխավորապես կիրառվել է **մարմնական վնասվածքների պարճառումը** (83,2%), իսկ շատ ավելի հազվադեպ՝ **խեղդումը** (13,6%) և **ջրահեղձ անելը** (3,2%):

5. Սպանությունների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանց կատարման **վայրի** և **ժամանակահատվածի** վերաբերյալ ցուցանիշների վերլուծությունը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակներ 18-ում և 19-ում:

Աղյուսակ 18

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված սպանությունների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու վայրի (%)

	Սպանություններ	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Փողոց, պուրակ, այգի	44,6	49,5
Ռեստորան, բար, սրճարան	1,8	4,6
Բնակարան, առանձնատուն	38,2	26,8
Հանրակացարան	1,3	2,6
Շենքի շքամուտք, նկուղ	1,6	2,2
Ավտոմեքենա, ավտոտնակ	3,9	3,6
Այլ վայր	8,6	10,7
Ընդամենը	100,0	100,0

5.1. Ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ սպանություններն **առավել հաճախ** կատարվել են փողոցներում, պուրակներում, այգիներում (44,6%) և բազմաբնակարան շենքերի բնակարաններում, առանձնատներում (38,2%),

- ✓ նշված վայրերին **ըստ նվազման** հաջորդել են ավտոմեքենաները, ավտոտնակները (3,9%), ռեստորանները, բարերը, սրճարանները (1,8%), բազմաբնակարան շենքերի շքամուտքերը, նկուղները (1,6%) և հանրակացարանները (1,3%),
- ✓ **մնացած դեպքերում** (8,6%) սպանությունները կատարվել են այլ վայրերում:

Աղյուսակ 19

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված սպանությունների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու ժամանակի (%)

	Սպանություններ	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Առավոտ (ժ. 05:00-09:00)	5,0	3,4
Ցերեկ (ժ. 10:00-16:00)	17,7	16,3
Երեկո (ժ. 17:00-22:00)	23,2	30,1
Գիշեր (ժ. 23:00-04:00)	25,3	23,8
Ժամն անհայտ է	28,8	26,4
Ընդամենը	100,0	100,0

5.2. Տվյալ աղյուսակից հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ սպանությունները, **ի տարբերություն** բռնությամբ կատարվող այլ հանցագործությունների, **առավել հաճախ** կատարվում են գիշերով (25,3%),
- ✓ դրանց **ըստ նվազման** հաջորդում են երեկոյան (23,2%), ցերեկվա (17,7%) և առավոտյան (5,0%) ժամերին կատարված սպանությունները,
- ✓ քննարկվող հանցագործությունների **շուրջ կեսը** (48,5%) կատարվում է երեկոյան և գիշերվա ժամերին,
- ✓ խնդրահարույց է, որ գրանցված դեպքերի 28,8%-ի պարագայում հանցանքի կատարման ժամը **ֆիքսված չէ**:

6. Սպանությունների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանք **կադա-րողների անձը** բնութագրող հատկանիշների վերլուծությունը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 20

Տեղեկություններ ՀՀ-ում 2019-2023 թթ. սպանություն և սպանու-թյան փորձ կատարած անձանց վերաբերյալ (%)

	Սպանություններ	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Սեռ՝		
արական	94,6	94,2
իգական	5,4	5,8
Տարիք՝		
14-15 տ.	0,7	1,3
16-17 տ.	2,8	4,8
18-24 տ.	16,9	21,5
25-29 տ.	17,1	19,0
30-49 տ.	47,6	42,8
50 և ավելի տ.	14,9	10,6
Սոցիալական վիճակ՝		
գործազուրկ	76,1	78,3
մշտ. աշխ. ունեցող	0,5	0,4
սովորող	0,6	0,8
ոչ մշտ. վաստակ ունեցող	22,8	20,5
Վիճակ՝		
ալկ. հարբ.	22,5	25,6
թմրանյութ. հարբ.	0,5	0,2
սթափ	77,0	74,2
Քրեական անցյալ՝		
նախկ. հանց. չկատ.	74,7	82,4
նախկ. հանց. կատ.	25,3	18,6
Միանձնյա	89,0	89,7
Խմբի կազմում	11,0	10,3
Այդ թվում՝		
չափահասների	88,1	77,6
անչափահասների	0,0	4,6
խառը	11,9	17,8
Ընդամենը	100,0	100,0

6.1. Ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ ՀՀ-ում 2019-2023 թվականներին սպանություն և սպանության փորձ կատարած անձանց կառուցվածքում.

- ✓ Գերակայում են **արական սեռի** ներկայացուցիչները, որոնց մասնաբաժինը 94,6% է: Մտահոգիչ է, սակայն, վերջին տարիներին կանանց և աղջիկների կողմից քննարկվող հանցանքները կատարելու դեպքերի ավելացումը:
- ✓ Մեծահասակների (չափահասների) տեսակարար կշիռը 96,5% է: Ընդ որում, հանցավոր **առավել ակտիվ** վարքագիծ են դրսևորել 30-49 տարեկանները (47,6%), որոնց ըստ նվազման **հաջորդում են** 25-29 տարեկանները (17,1%), 18-24 տարեկանները (16,9%), 50 և ավելի տարեկանները (14,9%), 16-17 տարեկանները (2,8%) և 14-15 տարեկանները (0,7%):
- ✓ Բավականին **մեծ** է գործազուրկներ (76,1%) և ոչ մշտական վաստակ ունեցողների (22,8%) թիվը: Մշտական աշխատանք ունեցողների և ուսումնական տարբեր հաստատություններում սովորողների տեսակարար կշիռն ընդհանուր առմամբ 1,1% է:
- ✓ **Զգալի է** հարբած վիճակում հանցանք կատարողների մասնաբաժինը (23,0%): Ընդ որում, նրանց շարքում **գերակայում են** ակոհոլային հարբածության վիճակում գտնվողները (97,8%): Հատկանշական է, որ գրանցված դեպքերի շուրջ 21%-ի պարագայում հարբած վիճակում է գտնվել թե՛ հանցավորը, թե՛ տուժողը:

- ✓ **Նախկինում հանցանք կատարած անձանց** տեսակարար կշիռը բավականին մեծ է՝ 25,3%¹: Հատկանշական է, որ նրանք բոլորը սպանությանը նախորդած հանցագործությունների համար ենթարկված են եղել քրեական պատասխանատվության: Ընդ որում, հանցանքներից վերջինը (սպանությունը) կատարելու պահի դրությամբ նրանք **դատվածություն** են ունեցել: Այսինքն՝ առկա է եղել քրեաիրավական ռեցիդիվ: Ավելին՝ նրանց մեծ մասը նախկինում դատապարտվել է **ոչ թե սպանության, այլ ուրիշ** հանցագործության, մասնավորապես՝ գողության (28,3%), դիտավորությամբ առողջությանը ծանրության տարբեր աստիճանի վնաս պատճառելու (17,7%), խուլիգանության (17,4%), ավազակության կամ կողոպուտի (8,5%) և սեռական որևէ հանցագործության (2,4%) համար: Այլ խոսքով՝ սպանություն կատարողների կազմում **նախկինում ևս** սպանություն կատարելու համար դատապարտվածների մասնաբաժինն ընդամենը 25,7% է:
- ✓ **Գերակայում են** հանցանքը միանձնյա կատարողները, որոնց մասնաբաժինը 89,0% է: Այսինքն՝ հիշատակված ժամանակահատվածում ՀՀ-ում խմբի կողմից կատարվել է միայն **ամեն 10-րդ** սպանությունը: Ընդ որում, դրանք առավել հաճախ կատարվել են **նվազագույն թվով** հանցակիցների (երկու համակատարողի) կողմից: Բացի դրանից, քննարկվող սպանությունների 88,1%-ը կատարվել է **բացառապես չա-**

¹ ՀՀ-ում սպանություն կատարողների կազմում ավանդաբար զգալի տեսակարար կշիռ ունեն նախկինում դատապարտված անձինք, որոնք պատիժ են կրել ազատազրկման վայրում:

փահասներից, իսկ 11,9%-ը՝ **խառը** (նաև անչափահասների մասնակցությամբ) բաղկացած խմբի կազմում: Այսինքն՝ ՀՀ-ում բացառապես անչափահասներից բաղկացած խմբերի կողմից սպանություններ, ի տարբերություն բռնությամբ կատարվող այլ հանցագործությունների, չեն կատարվում:

7. Սպանությունների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանցից **փողների անձը** բնութագրող հատկանիշների վերլուծությունը: Այդ կապակցությամբ առանձնակի ուշադրության է արժանի նաև ապագա մարդասպանի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը՝ ինչպես սպանությանը նախորդած ժամանակահատվածում, այնպես էլ դրա կատարման պահին: Մասնավորապես.

- ✓ Դեպքերի **80%-ից ավելի** պարագայում ՀՀ-ում կատարված սպանություններից տուժել են հանցավորին ծանոթ, իսկ երբեմն նաև նրա հետ փոխկապակցված անձինք (ամուսինները, զուգընկերները կամ նախկին ամուսինները կամ զուգընկերները, ընտանիքի այլ անդամներ, բարեկամները, մտերիմները, հարևանները և այլն): Ընդ որում, անծանոթները, որպես կանոն, տուժել են խուլիգանական դրդումներով սպանություններից:
- ✓ Քննարկվող հանցագործություններից տուժողների ընդհանուր թվում մեծամասնություն են **արական** սեռի (84,1%), **չափահաս** (95,6%) անձինք, որոնց շարքում բավականին մեծ է **գործազուրկների** (13,6%), **ծառայողների** (10,2%), **կենսաթոշակառուների** (6,7%),

բուհերի և կրթական այլ հաստատությունների **սովորողների** (6,4%) թիվը:

- ✓ Առանձնակի ուշադրության են արժանի այն տուժողները, որոնք անզգույշ, սադրիչ կամ հակաբարոյական վարքագծով նպաստել են սպանության կատարմանը: Այսպես, նրանք ապագա հանցագործի նկատմամբ հաճախ գործադրել են՝ **վիրավորական** արարքներ (36,9%), **մարմնական վնասվածքների** պատճառումներ (14,2%), ընդհանուր բնույթի **սադրանքներ** (10,8%), **ծեծ** կամ **դաժան վերաբերմունք** (9,6%), **սպառնալիքներ** (7,5%) և այլն:
- ✓ Հետաքրքրարժան են նաև ստեղծված կոնֆլիկտային իրավիճակին տուժողների կողմից արձագանքելու վերաբերյալ տեղեկությունները: Այսպես, նրանք շատ հազվադեպ են (**18,7% դեպքերում**) դիմել իրավասու մարմիններին (ոստիկանություն, դատախազություն, դատարան): Հատկանշական է նաև, որ բավականին հաճախ (**26,2% դեպքերում**) տուժողները փորձեր են կատարել հաշտվելու մյուս կողմի (ապագա մարդասպանի) հետ, սակայն դա նրանց չի հաջողվել:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
2. Антонян Ю.М. Психология убийства. М.: Юристъ, 1997, –304 с.
3. Аракелян С.В. Криминологическая характеристика лица, совершившего убийство в Республике Армения // Բան-

բեր Երևանի համալսարանի: Իրավագիտություն, 2015, թիվ 2 (17), էջ 17-23:

4. Аракелян С.В. Некоторые виктимологические аспекты убийств, совершаемых в сфере семейно-бытовых отношений в Армении // Պետություն և իրավունք, 1999, թիվ 2, էջ 68-73:
5. Аракелян С.В. Общая криминологическая характеристика убийств, совершаемых в сфере семейно-бытовых отношений в Армении // Իրավագիտության հարցեր, 1998, թիվ 4, էջ 81-91:
6. Аракелян С.В. О понятии убийства в сфере семейно-бытовых отношений // Պետություն և իրավունք, 1998, թիվ 3, էջ 72-77:
7. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоныана. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
8. Аракелян С.В. Семейно-бытовые убийства. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоныана. Ереван: ЕГУ, 2009, –160 с.
9. Артюшина О.В. Причины и условия убийства с особой жестокостью // Вестник Казанского юридического института МВД России. 2011. № 1 (3), –8 с.
10. Бородин С.В., Побегайло Э.Ф. Криминологическая характеристика умышленных убийств. М.: Изд-во ВНИИ МВД СССР, 1981, –51 с.
11. Варыгин А.Н., Григорян З.М. О некоторых причинах и условиях убийств, совершаемых несовершеннолетними // Юридическая наука. 2012. № 2, с. 95-100.
12. Гитинова М.М. Криминологический анализ лиц, осужденных за убийство // Право: история и современность. 2018. № 3, с. 76-81.

13. Семенюк Р.А. Криминологическая характеристика лиц, совершающих убийства в состоянии опьянения (по материалам Алтайского края) // Гражданское общество и правовое государство. 2015. Т. 2, с. 92-94 с.

§2.2. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների բնութագիրը

Առողջությունը, ինչպես և կյանքը, մարդու կարևորագույն բարիքներից է, առանց որի բազմաթիվ այլ բարիքներն ու արժեքներն իմաստազրկվում են: Բանն այն է, որ հենց մարդու առողջությունն է ապահովում նրա առավելագույն սոցիալական ակտիվությունը, նպաստում վերջինիս կարողությունների և հմտությունների զարգացմանն ու կատարելագործմանը: Ավելին, մարդու առողջությանը վնասի պատճառումն էական թե՛ ֆիզիկական և թե՛ բարոյական ու նյութական վնաս է հասցնում: Հետևաբար, մարդկանց առողջության պաշտպանության ապահովումը ցանկացած առաջադեմ պետության կողմից իրականացվող իրավական (այդ թվում՝ քրեաիրավական) քաղաքականության հիմնական առաջնահերթություններից է:

1. ՀՀ-ում առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների **որակական և քանակական** հիմնական ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում:

Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը ՀՀ-ում 2019-2023 թթ.

Հանցատեսակ	2019	2020	2021	2022	2023	Ընդ.
Առողջությանը վնասի պատճառումներ	1 112	1 024	976	933	1 062	5 107
Դրանցից՝ ծանր վնասի պատճ.	231	224	218	265	240	1 178
Ընդ. բռնությամբ կատար. հանցագործություններ	1 508	1 437	1 372	1 515	1 815	7 647
Ընդամենը գրանցված հանցագործություններ	26 850	26 468	30 245	37 612	40 666	161 841

1.1. Ներկայացված աղյուսակից հետևում է, որ.

- ✓ 2019-2023 թթ. ՀՀ-ում գրանցված ընդհանուր հանցավորության կառուցվածքում առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների մասնաբաժինը **3,15%** է, իսկ բռնությամբ կատարվող հանցագործությունների կառուցվածքում՝ **66,8%**: Միևնույն ժամանակ, առողջության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունների կառուցվածքում առողջությանը դիտավորությամբ ծանր վնասի պատճառումների մասնաբաժինը **23,1%** է:
- ✓ Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների առավել մեծ թիվն արձանագրվել է **2019** (1 112), իսկ ամենափոքրը՝ **2022** (933) թվականին:
- ✓ Քննարկվող հանցագործությունների շարժընթացն այդ ժամանակահատվածում բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. 2019-2022 թվականներին արձանագրվել է դրանց **անընդհապ նվազում**, իսկ 2023 թվա-

կանին, 2022 թվականի համեմատ՝ **կտրուկ աճ**, որը բացարձակ թվերով կազմել է **+129**:

1.2. Հարկ է նշել, որ քննարկվող հանցագործությունների կրիմինալոգիական բնութագրի վերաբերյալ որոշակի պատկերացում կարելի է կազմել նաև դրանց՝ ըստ պատճառովող վնասի ծանրության աստիճանի դասակարգման հետ կապված ցուցանիշներն ուսումնասիրելով: Մասնավորապես, արձանագրված դեպքերի **կեսից ավելիի** (52,4%) պարագայում տուժողների առողջությանը դիտավորությամբ պատճառվել է թեթև վնաս: Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնասի պատճառումների տեսակարար կշիռը **զգալիորեն փոքր է** (24,5%), իսկ ծանր վնասի պատճառումներինը՝ **ավելի փոքր** (ինչպես արդեն նշվել է՝ 23,1%):

2. ՀՀ-ում առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանց **տարածաշրջանային առանձնահատկությունների** բացահայտումը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներն ըստ մարզերի և Երևան քաղաքի (%)

Վարչատարածքային միավոր	Մասնաբաժին
Երևան	42,6
Արագածոտն	3,5
Արարատ	7,2
Արմավիր	6,7
Գեղարքունիք	6,3
Լոռի	10,8
Կոտայք	7,6

Շիրակ	6,3
Սյունիք	4,2
Վայոց ձոր	0,9
Տավուշ	3,6
«Զվարթնոց» օդանավակայան	0,3
Ընդամենը ՀՀ	100,0

2.1. Ներկայացված աղյուսակից, մասնավորապես, հետևում է, որ.

- ✓ ՀՀ-ում առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները, ինչպես և սպանությունները **առավել հաճախ** (ընդհանուր թվի 42,6%-ը) կատարվում են Երևանում: Վերջինիս ըստ նվազման **հաջորդում են՝** Լոռին (10,8%), Կոտայքը (7,6%), Արարատը (7,2%), Արմավիրը (6,7%), Գեղարքունիքը (6,3%), Շիրակը (6,3%), Սյունիքը (4,2%), Տավուշը (3,6%) և Արագածոտնը (3,5%): Այդ առումով, ինչպես և սպանությունների պարագայում **առավել ցածր** տեսակարար կշռով աչքի է ընկնում Վայոց ձորը (0,9%): Բացի դրանից, առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներ, ի տարբերություն սպանությունների, թեև **շատ հազվադեպ** (0,3%), բայց արձանագրվել են նաև «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում:
- ✓ ՀՀ-ում 2019-2023 թթ. առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների (ինչպես որ սպանությունների պարագայում էր) **մեծ մասը** (67,6%) գրանցվել է մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում (Արագածոտնում, Արարատում, Արմավիրում և Կոտայքում), որտեղ բնակվում է երկրի բնակչության 65,5%-ը:
- ✓ **100 հազար բնակչի** հարաբերակցությամբ քննարկվող հանցագործությունների գործակիցների հաշվար-

կի պարագայում, սակայն, ինչպես և սպանությունների դեպքում էր, իրավիճակն այլ է: Մասնավորապես՝ **առաջին դիրքում** Լոռին է (431,1), որին **ըստ նվազման** հաջորդում են Երևանը (372,4), Կոտայքը (277,5), Սյունիքը (275,4), Տավուշը (258,8), Արարատը (256,5), Գեղարքունիքը (250,8), Արագածոտնը (242,7), Արմավիրը (235,3), Շիրակը (234,5) և Վայոց ձորը (160,6):

3. Պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների ընդհանուր զանգվածում, ինչպես և սպանությունների պարագայում, ընտանեկան-կենցաղային հարաբերությունների ոլորտում կատարվածների մասնաբաժինը բավականին մեծ է՝ **25,8%**:

4. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները բնութագրող էական ցուցանիշներ են նաև դրանք կատարելիս կիրառվող գործիքների վերաբերյալ տվյալները: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 23-ում:

Աղյուսակ 23

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների դասակարգումն ըստ հանցանքը կատարելիս կիրառվող գործիքի (%)

Հանցագործության գործիք	Սպանություններ
Հրազեն	4,8
Սառը զենք	0,8
Պայթուցիկ նյութ և պայթեցման սարք	0,0
Այլ նշանակության առարկա	94,4
Ընդ. զենքի կամ այլ առարկ. գործադրմամբ	100,0

4.1. Ներկայացված աղյուսակից, մասնավորապես, հետևում է, որ.

- ✓ 2019-2023 թվականներին ՀՀ-ում հանցագործության որևէ գործիքի կիրառմամբ առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները հիմնականում կատարվել են **որպես զենք օգտագործվող այլ նշանակության առարկաների** (փայտ, քար, մետաղյա ձող, կացին, լինգ, մուրճ, պտուտակ և այլն) գործադրմամբ: Դրանց մասնաբաժինը **94,4%** է (սպանությունների պարագայում այն զգալիորեն փոքր էր՝ 48,4%):
- ✓ Վերջիններիս **էապես զիջում են** հրազենի (գլխավորապես՝ ողորկափող որսորդական) գործադրմամբ առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները, որոնց մասնաբաժինը **4,8%** է (սպանությունների պարագայում այն զգալիորեն մեծ էր՝ 43,4%):
- ✓ Դրանց **հաջորդում են** առողջությանը սառը զենքի գործադրմամբ վնաս պատճառելու դեպքերը, որոնց մասնաբաժինը չնչին է՝ **0,8%** (սպանությունների պարագայում այն ևս բավականին փոքր էր՝ 1,67%):
- ✓ Հատկանշական է, որ պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքերի գործադրմամբ առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներ քննարկվող ժամանակահատվածում **չեն արձանագրվել** (սպանությունների պարագայում դրանց գործադրմամբ կատարված հանցանքների մասնաբաժինը 6,47% էր):

4.2. Հարկ է նշել, որ առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները մեծ մասամբ կատարվում են **ֆիզիկական ուժի** գործադրմամբ, որը գլխավորապես դրսևորվում է ձեռքերով, ոտքերով հարվածներ հասցնելու, բարձրությունից հրել-նետելու միջոցով ծանրության տարբեր աստիճանի

մարմնական վնասվածքներ հասցնելով: Մասնավորապես, դրանց մասնաբաժինը քննարկվող հանցագործությունների ավելի քան **60%-ն** է (սպանությունների պարագայում այն շուրջ 20% էր):

5. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանց կատարման **վայրի** և **ժամանակահատվածի** վերաբերյալ ցուցանիշների վերլուծությունը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակներ 24-ում և 25-ում:

Աղյուսակ 24

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու վայրի (%)

	Առողջությանը դիտ. վն. պատճ.	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Փողոց, պուրակ, այգի	70,4	49,5
Ռեստորան, բար, սրճարան	1,2	4,6
Բնակարան, առանձնատուն	18,0	26,8
Հանրակացարան	0,2	2,6
Շենքի շքամուտք, նկուղ	0,4	2,2
Ավտոմեքենա, ավտոտնակ	1,0	3,6
Այլ վայր	8,8	10,7
Ընդամենը	100,0	100,0

5.1. Ներկայացված աղյուսակից, մասնավորապես, հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները **գլխավորապես** կատարվել են փողոցներում, պուրակներում, այգիներում (70,4%), որոնց զգալիորեն զիջում են բազմաբնակարան շենքերի բնակարանները և առանձնատները (18,0%),

- ✓ նշված վայրերին **ըստ նվազման** հաջորդել են ռեստորանները, բարերը, սրճարանները (1,2%), ավտոմեքենաները, ավտոտնակները (1,0%), բազմաբնակարան շենքերի շքամուտքերը, նկուղները (0,4%) և հանրակացարանները (0,2%),
- ✓ **մնացած դեպքերում** (8,8%) առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները կատարվել են այլ վայրերում:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցագործությունների պարագայում (ինչպես և սպանությունների դեպքում) **քաղաքներում առկա կենսապայմաններն առավել հանցածին** նշանակություն ունեն, քան այլ բնակավայրերում գոյություն ունեցողները: Մասնավորապես, քաղաքներում և քաղաքատիպ ավաններում կատարվել է առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների **74,3%-ը** (սպանությունների դեպքում՝ 80%-ից ավելին):

Աղյուսակ 25

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու ժամանակի (%)

	Առողջությանը դիտ. վն. պատճ.	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Առավոտ (ժ. 05:00-09:00)	2,3	3,4
Ցերեկ (ժ. 10:00-16:00)	16,9	16,3
Երեկո (ժ. 17:00-22:00)	36,5	30,1
Գիշեր (ժ. 23:00-04:00)	23,6	23,8
Ժամն անհայտ է	20,7	26,4
Ընդամենը	100,0	100,0

5.2. Տվյալ աղյուսակից հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումները, ինչպես և բռնությամբ կատարվող այլ հանցագործությունները, **առավել հաճախ** կատարվում են երեկոյան (36,5%),
- ✓ վերջիններիս **ըստ նվազման** հաջորդում են գիշերվա (23,6%), ցերեկվա (16,9%) և առավոտյան (2,3%) ժամերին կատարվածները,
- ✓ ընդհանուր առմամբ երեկոյան և գիշերվա ժամերին կատարվում է քննարկվող հանցագործությունների **ավելի քան 60%-ը** (սպանությունների՝ 48,5%-ը),
- ✓ առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների **20,7%-ի** (բռնությամբ կատարվող բոլոր հանցագործությունների՝ 26,4%-ի) պարագայում հանցանքի կատարման ժամը **ֆիքսված չէ**:

6. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանք **կադարողների անձը** բնութագրող հատկանիշների վերլուծությունը (վիճակագրական համապատասխան ցուցանիշները տե՛ս աղյուսակ 26-ում):

Աղյուսակ 26

Տեղեկություններ ՀՀ-ում 2019-2023 թթ. առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառում կատարած անձանց վերաբերյալ (%)

	Առողջությանը դիտ. վն. պատճ.	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Սեռ՝		
արական	96,6	94,2
իգական	3,4	5,8
Տարիք՝		
14-15 տ.	2,9	1,3
16-17 տ.	9,9	4,8
18-24 տ.	25,3	21,5
25-29 տ.	17,0	19,0

30-49 տ.	35,6	42,8
50 և ավելի տ.	9,3	10,6
Սոցիալական վիճակ՝ գործազուրկ	76,4	78,3
մշտ. աշխ. ունեցող	0,3	0,4
սովորող	1,5	0,8
ոչ մշտ. վաստակ ունեցող	21,8	20,5
Վիճակ՝ ալկ. հարբ.	20,4	25,6
թմրանյութ. հարբ.	0,1	0,2
սթափ	79,5	74,2
Քրեական անցյալ՝ նախկ. հանց. չկատ.	80,6	82,4
նախկ. հանց. կատ.	19,4	18,6
Միանձնյա	96,5	89,7
Խմբի կազմում	3,5	10,3
Այդ թվում՝ չափահասների	59,0	77,6
անչափահասների	13,1	4,6
խառը	27,9	17,8
Ընդամենը	100,0	100,0

6.1. Վերը ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ ՀՀ-ում 2019-2023 թվականներին առողջությամբ ռիսկավորված վնասի պատճառով կատարած անձանց կառուցվածքում.

- ✓ Գերակայում են **արական սեռի** ներկայացուցիչները, որոնց մասնաբաժինը 96,6% է: Մտահոգիչ է, սակայն, վերջին տարիներին կանանց և աղջիկների կողմից նաև քննարկվող հանցանքները կատարելու դեպքերի ավելացումը:
- ✓ **Մեծահասակների** (չափահասների) տեսակարար կշիռը 87,2% է: Ընդ որում, ինչպես և սպանությունների պարագայում, հանցավոր **առավել ակտիվ** վարքագիծ են դրսևորել 30-49 տարեկանները (35,6%): Նրանց ըստ նվազման **հաջորդում են** 18-24 (25,3%), 25-29

(17,0%), 16-17 (9,9%), 50 և ավելի (9,3%) և 14-15 տարեկանները (2,9%):

- ✓ **Բավականին մեծ է** գործազուրկների (76,4%) և ոչ մշտական վաստակ ունեցողների (21,8%) թիվը: Մշտական աշխատանք ունեցողների և ուսումնական տարբեր հաստատություններում սովորողների տեսակարար կշիռն ընդհանուր առմամբ 1,8% է:
- ✓ **Զգալի է** հարբած վիճակում հանցանք կատարողների մասնաբաժինը (20,5%): Ընդ որում, նրանց շարքում **գերակայում են** ակոհոլային հարբածության վիճակում գտնվողները (99,5%): Հատկանշական է, որ գրանցված դեպքերի շուրջ 21%-ի պարագայում (ինչպես և սպանությունների դեպքում էր) հարբած վիճակում է գտնվել թե՛ հանցավորը, թե՛ տուժողը:
- ✓ **Նախկինում հանցանք կատարած անձանց** տեսակարար կշիռը բավականին մեծ է՝ 19,4%:
- ✓ **Գերակայում են** (ինչպես նաև բռնությամբ կատարվող մյուս հանցագործությունների պարագայում) հանցանքը միանձնյա կատարողները, որոնց մասնաբաժինը 96,5% է: Այսինքն՝ խմբի կողմից կատարվել է հիշատակված հանցագործությունների ընդամենը 3,5%-ը: Ընդ որում, դրանք առավել հաճախ կատարվել են **նվազագույն թվով** հանցակիցների (երկու համակատարողի) կողմից:
- ✓ Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների կեսից ավելին (59%) կատարվել է **բացառապես չափահասներից**, իսկ 27,9%-ը՝ **խառը** (նաև անչափահասների մասնակցությամբ) բաղկացած խմբի կազմում: **Բացառապես անչափահասներից** բաղկացած խմբերի կողմից կատարվել է քննարկվող հանցագոր-

ծությունների 13,1%-ը (նման խմբերի կողմից սպանությունների կատարման դեպքեր, ինչպես արդեն նշվել է, չեն արձանագրվել):

7. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանցից **տուժողների անձը** բնութագրող հատկանիշների վերլուծությունը: Մասնավորապես.

- ✓ Դեպքերի **80%-ից ավելի** պարագայում (ինչպես և սպանությունների դեպքում էր) քննարկվող հանցագործություններից տուժել են հանցավորին ծանոթ անձինք: Անծանոթներն այս դեպքում ևս, որպես կանոն, տուժել են խուլիգանական դրդումներով առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներից:
- ✓ Քննարկվող հանցագործություններից տուժողների ընդհանուր թվում (ինչպես և սպանությունների պարագայում էր) մեծամասնություն են **արական** սեռի (83,6%), **չափահաս** (97,5%) անձինք, որոնց շարքում բավականին մեծ մասնաբաժին ունեն **գործազուրկները** (16,3%), **ծառայողները** (12,1%), **սովորողները** (11,0%) և **կենսաթոշակառուները** (7,2%):
- ✓ Առանձնակի ուշադրություն են գրավում այն տուժողները, որոնք անզգույշ, սադրիչ կամ հակաբարոյական վարքագծով նպաստել են իրենց առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելուն: Այսպես, նրանք ապագա հանցագործի նկատմամբ հաճախ գործադրել են՝ **վիրավորական** արարքներ (46,2%), **մարմնական վնասվածքների** պատճառումներ (12,4%), ընդհանուր բնույթի **սադրանքներ** (11,3%), **ծեծ** կամ **դաժան վերաբերմունք** (10,1%), **սպառնալիքներ** (7,5%) և այլն:

Հետաքրքրարժան են նաև գոյություն ունեցող կոնֆլիկտային իրավիճակին քննարկվող հանցագործություններից տուժողների կողմից արձագանքելու վերաբերյալ տեղեկությունները: Այսպես, ինչպես և սպանությունների պարագայում, նրանք շատ հազվադեպ են դիմել իրավասու մարմիններին: Ավելի հաճախ փորձել են հաշտվել մյուս կողմի հետ, բայց տարատեսակ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ուժով դա նրանց չի հաջողվել: Հիմնականում, սակայն, առողջությանը դիտավորությանմբ վնասի պատճառումներից տուժողների արձագանքն այլ բնույթ է կրել: Մասնավորապես՝ նրանք ակտիվորեն հակադրվել են ապագա հանցավորին, ներքաշվել վիճաբանության մեջ, դիմել բռնության, սպառնալիքների, անպարկեշտ, վիրավորական խոսքերի և այլն:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Акопов В.И., Надтока Е.С. Криминологическая характеристика преступлений против жизни и здоровья (по материалам конкретного исследования) // Медицинская экспертиза и право. 2012. № 6, с. 16-24.
2. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
3. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
4. Будкина И.С. Факторы, влияющие на виктимизацию несовершеннолетних от насильственных преступлений против жизни и здоровья // Виктимология. 2020. № 1 (23), с. 38-46.

5. Бычков В.В. Динамика преступлений против здоровья // Расследование преступлений: проблемы и пути их решения. 2014. № 5, с. 37-47.
6. Киселев А.И., Егоров О.Н. Криминологическая характеристика преступлений против жизни и здоровья, совершаемых в учреждениях пенитенциарной системы // Вестник Челябинского государственного университета. Серия: Право. 2017. Т. 2. № 2, с. 61-69.
7. Мироненко С.Ю. Классификация и типология личности потерпевших от преступлений против жизни и здоровья // Виктимология. 2022. Т. 9. № 2, с. 175-181.
8. Мирошниченко Н.В., Максимов В.Ю. Насильственный способ совершения деяния и его проявления в преступлениях против жизни и здоровья личности // Гуманитарные и юридические исследования. 2020. № 4, с. 159-164.
9. Оганов А.А. Предупреждение насильственных преступлений против жизни и здоровья // Вестник Московского университета МВД России. 2009. № 6, с. 162-164.
10. Перцева А.Д. Классификация и типология личности потерпевших от преступлений против жизни и здоровья // Вестник науки. 2022. Т. 3. № 12 (57), с. 309-316.
11. Шмарион П.В. Криминологические особенности насильственных преступлений против жизни и здоровья, совершаемых в семье в отношении несовершеннолетних // Вестник Воронежского института МВД России. 2016. № 4, с. 92-96.

§2.3. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների բնութագիրը

Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների (ինչպես և սպանությունների) հանրային վրանգավորությունը պայմանավորված է ոչ այնքան (և ոչ միայն) դրանց տարածվածությամբ, որքան վերջիններիս պատճառած վնասակար հետևանքների ծանրությամբ: Այսպես, բրիտանացի քրեագետների գնահատմամբ՝ այդ հանցագործություններից տուժողների առողջությանը պատճառվող նյութական վնասի չափը (հիշատակված հանցավոր արարքների «գինը») տարեկան միջինը 73 հազար 487 ֆունտ ստերլինգ է¹: Ավելին, սեռական հանցագործությունները (հատկապես՝ բռնությամբ կատարվող) տուժողների մեջ առաջացնում են ծանր ապրումներ, որոնց անբարենպաստ ազդեցությունը կարող է ուղեկցել նրանց հետագա ամբողջ կյանքում՝ նպաստելով հոգեկան առողջության տարատեսակ խնդիրների և բացասական այլ հետևանքների (օրինակ՝ անպտղության, ինքնասպանությունների կամ դրանց փորձերի և այլն) առաջացմանը²:

Բացի դրանից, հարկ է նշել, որ բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների կրիմինալոգիական առանձնահատկություններից է նաև դրանց լատենտայնության բավականին բարձր մակարդակը, որը նախ և առաջ պայմանավորված է տուժողների՝ իրավասու մարմիններին դիմելու ցանկության բացակայությամբ: Փորձագիտական տարբեր

¹ Տե՛ս **Dubourg R., Hamed J., Thorns J.** The Economic and Social Costs of Crime against Individuals and Households – 2003/2004. London. Home Office. June, 2005, էջ 44:

² Տե՛ս նաև **Антонян Ю.М.** Особенности сексуальной преступности // Россия и современный мир, 2000, № 2, էջ 140:

գնահատականներով, քննարկվող հանցագործություններից տուժողների իրական թիվն անհամեմատ ավելի մեծ է, քան պաշտոնապես գրանցվածներինը¹:

1. ՀՀ-ում բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների **որակական և քանակական** հիմնական ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 27-ում:

Աղյուսակ 27

Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը ՀՀ-ում 2019-2023 թթ.

Հանցատեսակ	2019	2020	2021	2022	2023	Ընդ.
Սեռ. ազ. և սեռ. անձեռ. դեմ ուղղված հանցագ.	104	81	93	109	176	563
Դրանցից՝ սեքս. բն. բռնի գործող.	23	25	14	71	98	231
Ընդ. բռնությամբ կատար. հանցագործություններ	1 508	1 437	1 372	1 515	1 815	7 647
Ընդամենը գրանցված հանցագործություններ	26 850	26 468	30 245	37 612	40 666	161 841

1.1. Ներկայացված աղյուսակից հետևում է, որ.

- ✓ 2019-2023 թթ. ՀՀ-ում գրանցված ընդհանուր հանցավորության կառուցվածքում սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների մասնաբաժինը **0,34%** է, իսկ սեքս-

¹ Տե՛ս, օրինակ՝ **Журавлева Ю.В.** Виктимологическая профилактика изнасилований: Автореф. дис... канд. юрид. наук. М., 2007, էջ 3, **Каменева А.Н.** Дискуссионные вопросы ответственности за изнасилование по уголовному законодательству Российской Федерации и уголовным законодательствам зарубежных государств: Автореф. дис... канд. юрид. наук. М., 2009, էջ 3:

լալ բնույթի բռնի գործողություններինը՝ **0,14%**: Միևնույն ժամանակ, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում սեքսուալ բնույթի բռնի գործողությունների մասնաբաժինը **41,03%** է, իսկ բռնությամբ կատարվող հանցագործությունների կառուցվածքում՝ **3,02%**:

- ✓ Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների առավել մեծ թիվն արձանագրվել է **2023** (98), իսկ ամենափոքրը՝ **2021** (14) թվականին:
- ✓ Քննարկվող հանցագործությունների շարժընթացն այդ ժամանակահատվածում բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. 2020 թվականին, 2019-ի համեմատ, արձանագրվել է **չնչին աճ** (+2), 2021 թվականին, 2020-ի համեմատ՝ **էական նվազում** (-11), 2022 թվականին, 2021-ի համեմատ՝ **կտրուկ աճ** (+57), իսկ 2023 թվականին, 2022-ի համեմատ՝ **զգալի աճ** (+27):

2. ՀՀ-ում բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների կրիմինալոգիական բնութագրի առումով որոշակի նշանակություն ունի նաև դրանց **տարածաշրջանային առանձնահատկությունների** բացահայտումը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 28-ում:

¹ Օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, ինչպես արդեն նշվել է, 2022 թվականից ներառում են նաև բռնաբարությունները: Աղյուսակում մինչև 2021 թվականը ներկայացված տվյալները վերաբերում են բռնաբարություններին և բռնաբարության փորձերին:

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված բռնությանը կատարվող սեռական հանցագործություններն ըստ մարզերի և Երևան քաղաքի (%)

Վարչատարածքային միավոր	Մասնաբաժին
Երևան	35,9
Արագածոտն	4,2
Արարատ	10,1
Արմավիր	9,7
Գեղարքունիք	1,4
Լոռի	12,2
Կոտայք	5,5
Շիրակ	4,2
Սյունիք	6,3
Վայոց ձոր	0,9
Տավուշ	8,9
«Զվարթնոց» օդանավակայան	0,7
Ընդամենը ՀՀ	100,0

2.1. Ներկայացված աղյուսակից, մասնավորապես, հետևում է, որ.

- ✓ ՀՀ-ում բռնությանը կատարվող սեռական հանցագործությունները, ինչպես և սպանություններն ու առողջությանը դիտավորությանը վնասի պատճառումները **առավել հաճախ** (ընդհանուր թվի 35,9%-ը) կատարվում են Երևանում: Վերջինիս ըստ նվազման **հաջորդում են՝** Լոռին (12,2%), Արարատը (10,1%), Արմավիրը (9,7%), Տավուշը (8,9%), Սյունիքը (6,3%), Կոտայքը (5,5%), Գեղարքունիքը (6,3%), Արագածոտնը (4,2%) և Շիրակը (4,2%): Այդ առումով, ինչպես և սպանությունների ու առողջությանը դիտավորությանը վնասի պատճառումների պարագայում **առավել ցածր** տեսա-

կարար կշռով աչքի է ընկնում Վայոց ձորը (0,9%): Բացի դրանից, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, ինչպես և առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներ թեև **հազվադեպ** (0,7%), բայց արձանագրվել են նաև «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում:

- ✓ ՀՀ-ում 2019-2023 թթ. սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (ինչպես և սպանությունների ու առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների պարագայում էր) **մեծ մասը** (65,4%) գրանցվել է մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում (Արագածոտնում, Արարատում, Արմավիրում և Կոտայքում), որտեղ բնակվում է երկրի բնակչության 65,5%-ը:
- ✓ **100 հազար բնակչի** հարաբերակցությամբ քննարկվող հանցագործությունների գործակիցների հաշվարկի պարագայում, սակայն, ինչպես և սպանությունների ու առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների դեպքում էր, իրավիճակն այլ է: Մասնավորապես՝ **առաջին դիրքում** Տավուշն է (16,4), որին **ըսոր նվազման** հաջորդում են Լոռին (12,4), Սյունիքը (10,6), Արարատը (9,2), Արմավիրը (8,6), Երևանը (8,0), Արագածոտնը (7,5), Կոտայքը (5,1), Շիրակը (4,0), Վայոց ձորը (3,8) և Գեղարքունիքը (1,3): Այդ առումով կարելի է ենթադրել, որ մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում սեռական պահանջմունքները բավարարելու հնարավորություններն ավելի շատ են, ուստի դրանք բավարարելու համար բռնություն գործադրելու առիթներն էլ՝ ավելի քիչ:

3. Քննարկվող հանցագործությունների եղանակների և միջոցների կապակցությամբ նախ և առաջ հարկ է նշել, որ

դրանք կատարելիս տուժողի դիմադրությունը ճնշելու նպատակով զենք կամ որպես այդպիսին օգտագործվող այլ առարկա գործադրելու դեպքեր չեն արձանագրվել: Բռնությանը զուգորդված սեռական հանցագործությունները մեծ մասամբ կատարվում են **ֆիզիկական ուժի** գործադրմամբ, որը գլխավորապես դրսևորվում է ձեռքերով կամ ոտքերով հարվածներ հասցնելով, խեղդելով և կապկպելով: Դրանց մասնաբաժինը **82,4%** է: Երբեմն գործադրվում են ծեծի կամ մարմնական վնասվածք հասցնելու սպառնալիքներ (**15,7%**): Վերջիններս, որպես կանոն, կիրառվում են հենց տուժողի նկատմամբ: Հազվադեպ են տուժողի անօգնական վիճակն օգտագործելու դեպքերը (**1,9%**):

4. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունեն նաև դրանց կատարման **վայրի** և **ժամանակահատվածի** վերաբերյալ ցուցանիշները, որոնք արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակներ 29-ում և 30-ում:

Աղյուսակ 29

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու վայրի (%)

	Բռնությամբ կատ. սեռական հանց.	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Փողոց, պուրակ, այգի	11,9	49,5
Ռեստորան, բար, սրճարան	11,9	4,6
Բնակարան, առանձնատուն	38,1	26,8
Հանրակացարան	7,1	2,6
Շենքի շքամուտք, նկուղ	4,8	2,2
Ավտոմեքենա, ավտոտնակ	9,5	3,6
Այլ վայր	16,7	10,7
Ընդամենը	100,0	100,0

4.1. Ներկայացված աղյուսակից հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ բռնությամբ զուգորդված սեռական հանցագործությունները, ի տարբերություն բռնությամբ կատարվող հանցավոր այլ արարքների, **գլխավորապես** կատարվել են բազմաբնակարան շենքերի բնակարաններում կամ առանձնատներում (38,1%),
- ✓ նշված վայրերին **ըստ նվազման** հաջորդել են փողոցները, պուրակները, այգիները (11,9%), ռեստորանները, բարերը կամ սրճարանները (11,9%), ավտոմեքենաները, ավտոտնակները (9,5%), հանրակացարանները (7,1%) և բազմաբնակարան շենքերի շքամուտքերը, նկուղները (4,8%),
- ✓ **մնացած դեպքերում** (16,7%) բռնությամբ զուգորդված սեռական հանցագործությունները կատարվել են այլ վայրերում:

4.2. Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցագործությունների (ինչպես և սպանությունների ու առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների) պարագայում **քաղաքներում առկա կենսապայմաններն առավել հանցածին** նշանակություն ունեն, քան այլ բնակավայրերում գոյություն ունեցողները: Մասնավորապես, քաղաքներում և քաղաքատիպ ավաններում կատարվել է բռնությամբ զուգորդված սեռական հանցագործությունների **92,4%-ը** (դիտավորությամբ առողջությանը վնասի պատճառումների 74,3%-ը, իսկ սպանությունների 80%-ից ավելին):

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու ժամանակի (%)

	Բռնությամբ կատ. սեռական հանց.	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Առավոտ (ժ. 05:00-09:00)	3,8	3,4
Ցերեկ (ժ. 10:00-16:00)	7,5	16,3
Երեկո (ժ. 17:00-22:00)	24,5	30,1
Գիշեր (ժ. 23:00-04:00)	22,7	23,8
Ժամն անհայտ է	41,5	26,4
Ընդամենը	100,0	100,0

4.3. Տվյալ աղյուսակի վերլուծությունից, մասնավորապես կարելի է հետևություն անել, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ բռնությամբ զուգորդված սեռական հանցագործությունները, ինչպես և բռնությամբ կատարվող հանցավոր այլ արարքները, **առավել հաճախ** կատարվում են երեկոյան (24,5%),
- ✓ վերջիններիս **ըստ նվազման** հաջորդում են գիշերվա (22,7%), ցերեկվա (7,5%) և առավոտյան (3,8%) ժամերին կատարվածները,
- ✓ ընդհանուր առմամբ երեկոյան և գիշերվա ժամերին կատարվում է քննարկվող հանցագործությունների **47,2%-ը** (բռնությամբ կատարվող բոլոր հանցագործությունների՝ 53,9%-ը),
- ✓ բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների **41,5%-ի** (բռնությամբ կատարվող բոլոր հանցագործությունների՝ 26,4%-ի) պարագայում հանցանքի կատարման ժամը **ֆիքսված չէ**:

5. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանք **կապարողների անձը** բնութագրող հատկանիշների վերլուծությունը (վիճակագրական համապատասխան ցուցանիշները տե՛ս աղյուսակ 31-ում):

Աղյուսակ 31

Տեղեկություններ ՀՀ-ում 2019-2023 թթ. բռնությամբ սեռական հանցանք կատարած անձանց վերաբերյալ (%)

	Բռնությամբ կատ. սեռական հանց.	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Սեռ՝ արական իգական	98,9 1,1	94,2 5,8
Տարիք՝ 14-15 տ. 16-17 տ. 18-24 տ. 25-29 տ. 30-49 տ. 50 և ավելի տ.	0,5 3,2 25,0 22,9 42,0 6,4	1,3 4,8 21,5 19,0 42,8 10,6
Սոցիալական վիճակ՝ գործազուրկ մշտ. աշխ. ունեցող սովորող ոչ մշտ. վաստակ ունեցող	84,0 5,3 0,5 10,2	78,3 0,4 0,8 20,5
Վիճակ՝ ալկ. հարբ. թմրանյութ. հարբ. սթափ	30,4 0,5 69,1	25,6 0,2 74,2
Քրեական անցյալ՝ նախկ. հանց. չկատ. նախկ. հանց. կատ.	65,4 34,6	82,4 18,6
Միանձնյա Խմբի կազմում Այդ թվում՝ չափահասների անչափահասների խառը	87,8 12,2 87,0 5,9 7,1	89,7 10,3 77,6 4,6 17,8
Ընդամենը	100,0	100,0

5.1. Վերը ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ ՀՀ-ում 2019-2023 թվականներին բռնությամբ սեռական հանցանք կատարած անձանց կառուցվածքում.

- ✓ Գերակայում են **արական սեռի** ներկայացուցիչները, որոնց մասնաբաժինը 98,9% է: Ինչպես արդեն նշվել է, նույն պատկերն է նաև բռնությամբ կատարվող հանցավոր այլ արարքների պարագայում:
- ✓ **Մեծահասակների** (չափահասների) տեսակարար կշիռը 96,3% է: Ընդ որում, ինչպես և բռնությամբ կատարվող այլ հանցագործությունների պարագայում, հանցավոր **առավել ակտիվ** վարքագիծ են դրսևորել 30-49 տարեկանները (42,0%): Նրանց ըստ նվազման **հաջորդում են** 18-24 (25,0%), 25-29 (22,9%), 50 և ավելի (6,4%), 16-17 (3,2%) և 14-15 տարեկանները (0,5%):
- ✓ Բավականին **մեծ է** գործազուրկների (84,0%) և ոչ մշտական վաստակ ունեցողների (10,2%) թիվը: Մշտական աշխատանք ունեցողների և ուսումնական տարբեր հաստատություններում սովորողների տեսակարար կշիռն ընդհանուր առմամբ 5,8% է:
- ✓ **Զգալի է** հարբած վիճակում հանցանք կատարողների մասնաբաժինը (30,9%): Ընդ որում, նրանց շարքում **գերակայում են** ակոհոլային հարբածության վիճակում գտնվողները (98,4%): Հատկանշական է, որ գրանցված դեպքերի շուրջ 1/4-ի պարագայում հարբած վիճակում է գտնվել թե՛ հանցավորը, թե՛ տուժողը:
- ✓ **Նախկինում հանցանք կատարած անձանց** տեսակարար կշիռը կազմում է 34,6%: Համեմատության համար հարկ է նշել, որ բռնությամբ կատարվող բոլոր հանցագործությունների պարագայում նրանց մասնա-

բաժինն ընդամենը 18,6% է: Այսինքն՝ բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններում ռեցիդիվն առավել հաճախ է տեղի ունենում, ինչը խիստ մտահոգիչ է:

- ✓ **Գերակայում են** (ինչպես նաև բռնությամբ կատարվող մյուս հանցագործությունների պարագայում) հանցանքը միանձնյա կատարողները: Վերջիններիս մասնաբաժինը 87,8% է: Ուստի, խմբի կողմից կատարվել է քննարկվող հանցագործությունների ընդամենը 12,2%-ը: Ընդ որում, դրանք առավել հաճախ կատարվել են **նվազագույն թվով** հանցակիցների (երկու համակատարողի) կողմից:
- ✓ Բռնությամբ զուգորդված սեռական հանցագործությունների 87%-ը կատարվել է **բացառապես չափահասներից**, 7,1%-ը՝ **խառը** (նաև անչափահասների մասնակցությամբ), իսկ 5,9%-ը՝ **բացառապես անչափահասներից** բաղկացած խմբի կազմում:

6. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի նաև դրանցից **տուժողների անձը** բնութագրող հատկանիշների վերլուծությունը: Մասնավորապես.

- ✓ Դեպքերի **80%-ից ավելին** պարագայում (ինչպես և սպանությունների ու առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների դեպքում) քննարկվող հանցագործություններից տուժել են հանցավորին ծանոթ անձինք: Բացի դրանից, **96,3%** դեպքերում դրանցից տուժել է մեկ անձ:
- ✓ Քննարկվող հանցավոր արարքներից (ինչպես և բռնությամբ կատարվող մյուս հանցագործություններ

- րից) հիմնականում տուժում են չափահասները: Անչափահասների մասնաբաժինը տվյալ դեպքում **34,1%** է:
- ✓ Ի տարբերություն բնությանը կատարվող մյուս հանցագործությունների՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններից (այդ թվում՝ բռնաբարություններից) **գլխավորապես** (87,5%) տուժում են **իգական** սեռի ներկայացուցիչները:
 - ✓ Բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններից տուժողների ընդհանուր թվում մեծամասնություն են **գործազուրկները կամ եկամտի մշտական աղքատ չունեցողները** (89,9%): Մնացած 11,1%-ը բաժին է հասնում **ծառայողներին, սովորողներին և կենսաթոշակառուներին**: Ընդ որում, նրանց **70%-ից ավելին** իրենց նկատմամբ հանցանքը կատարելու պահին արդեն իսկ սեռական հարաբերությունների փորձառություն են ունեցել:
 - ✓ Առանձնակի ուշադրության են արժանի այն տուժողները, որոնք անզգույշ, սադրիչ կամ հակաբարոյական վարքագծով նպաստել են իրենց նկատմամբ բռնության գործադրմանը: Մասնավորապես, նրանք կազմում են բռնությամբ զուգորդված սեռական հանցագործություններից տուժողների **շուրջ 10%-ը**:
 - ✓ Հետաքրքրարժան են նաև հանցանքը կատարելու պահին **տուժողների վիճակի** վերաբերյալ հետևյալ տեղեկությունը. դեպքերի **45,2%-ի** պարագայում նրանք եղել են հարբածության (որպես կանոն, ակոհոլային) վիճակում:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Dubourg R., Hamed J., Thorns J. The Economic and Social Costs of Crime against Individuals and Households – 2003 / 2004. London. Home Office. June, 2005, –83 p.
2. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
3. Антонян Ю.М. Особенности сексуальной преступности // Россия и современный мир. 2000. № 2, с.140-146.
4. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
5. Давыдова А.А., Морозов Б.В. Виктимологическая характеристика негативного поведения жертв изнасилований // Вестник ЮУрГУ. 2008. № 18, с. 48-49.
6. Журавлева Ю.В. Виктимологическая профилактика изнасилований: Автореф. дис... канд. юрид. наук. М., 2007, –23 с.
7. Зиньковский А.К., Новиков Ю.Г. Социально-психологические и правовые особенности сексуального насилия (региональный аспект) // Человеческий фактор: проблемы психологии и эргономики. 2009. № 4, с. 86-87.
8. Каменева А.Н. Дискуссионные вопросы ответственности за изнасилование по уголовному законодательству Российской Федерации и уголовным законодательствам зарубежных государств: Автореф. дис... канд. юрид. наук. М., 2009, –26 с.
9. Кондратенкова А.С. Криминологическая характеристика личности преступника в насильственных преступлениях против половой свободы и половой неприкосновенности // Юридический факт. 2017. № 6 (6), с. 51-55.

10. Кулаков А.В. Насильственные действия сексуального характера, совершаемые в местах лишения свободы: детерминация и профилактика // Вестник Санкт-Петербургского университета МВД России. 2006. № 2 (30), с. 259-264.
11. Паршин Н.М., Телегина Е.Г. Насилие как фактор сексуальных преступлений, совершаемых в отношении несовершеннолетних // Научный вестник Омской академии МВД России. 2014. № 3 (54), с. 23-28.
12. Рогов А.В., Хачатурян С.Д. Личностные особенности осужденных, совершивших преступления против половой неприкосновенности и половой свободы личности // Вестник Владимирского юридического института. 2007. № 2 (3), с. 105-108.
13. Хрулев П.С. Потерпевший в насильственных половых преступлениях // Аллея науки. 2021. Т. 1. № 4 (55), с. 722-725.
14. Шестак С.В. Обстановка совершения изнасилований несовершеннолетними лицами // Теория и практика общественного развития. 2007. № 1, с.89-91.

§2.4. Խուլիգանությունների բնութագիրը

Հասարակական կարգի ապահովումը ցանկացած պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առաջնահերթ խնդիրներից է: Տվյալ բարիքի դեմ ուղղված առավել պարածված և վրանգավոր ոտնձգություններից է խուլիգանությունը, որի հանրային վրանգավորությունը պայմանավորված է ոչ միայն արձանագրվող դեպքերի քանակով, այլ նաև դրսևորման ձևերի բազմազանությամբ:

Փորձագիտական տարբեր գնահատականներով, խուլի-
զանական արարքներ կատարողները (հատկապես՝ անչա-
փահաս տարիքում) առավել մեծ հավանականությամբ են հե-
տագայում կյանքի հանցավոր ուղին ընտրում: Բացի դրանից,
խուլիզանության դրսևորումները բավականին հաճախ զու-
գորդվում են բռնությամբ կամ դա գործադրելու սպառնալիք-
ներով և նախորդում են մարդու կյանքի, առողջության, ազա-
տության, պատվի կամ արժանապատվության դեմ ուղղված
այս կամ այն հանցագործությանը: Միևնույն ժամանակ, խու-
լիզանության դիտարկումը բռնությամբ կատարվող հանցա-
գործությունների համակարգում պայմանավորված է դրանց
նպաստող գործոնների, ինչպես նաև դրանք կատարողների
անձը բնութագրող առանձնահատկությունների ընդհանրու-
թյուններով:

1. ՀՀ-ում կատարվող խուլիզանությունների **որակական
և քանակական** հիմնական ցուցանիշներն արտացոլված են
աղյուսակ 32-ում:

Աղյուսակ 32

**խուլիզանությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը
ՀՀ-ում 2019-2023 թթ.**

Հանցատեսակ	2019	2020	2021	2022	2023	Ընդ.
խուլիզանություններ	326	338	322	453	600	2 039
Դրանցից՝ զենքի գործադրմամբ	75	86	95	97	110	463
Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ	1 508	1 437	1 372	1 515	1 815	7 647
Ընդամենը գրանցված հանցագործություններ	26 850	26 468	30 245	37 612	40 666	161 841

1.1. Ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ.

- ✓ 2019-2023 թթ. ՀՀ-ում գրանցված ընդհանուր հանցավորության կառուցվածքում խուլիգանությունները զգալի մասնաբաժին ունեն՝ **1,25%**: Միևնույն ժամանակ, բռնությամբ կատարվող հանցագործությունների կառուցվածքում այն **26,7%** է:
- ✓ Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված խուլիգանությունների առավել մեծ թիվն արձանագրվել է **2023** (600), իսկ ամենափոքրը՝ **2021** (322) թվականներին:
- ✓ Քննարկվող հանցագործությունների շարժընթացն այդ ժամանակահատվածում բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. 2020 թվականին, 2019-ի համեմատ, արձանագրվել է դրանց **աճ** (+12), 2021 թվականին, 2020-ի համեմատ՝ **նվազում** (-16), 2022 թվականին, 2021-ի համեմատ՝ **կտրուկ աճ** (+131), իսկ 2023 թվականին, 2022-ի համեմատ՝ **առավել զգալի աճ** (+147):

2. ՀՀ-ում կատարվող խուլիգանությունների կրիմինալոգիական բնութագրի առումով որոշակի նշանակություն ունին նաև դրանց **տարածաշրջանային առանձնահատկությունների** բացահայտումը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 33-ում:

**ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված խուլիգանություններն ըստ
մարզերի և Երևան քաղաքի (%)**

Վարչատարածքային միավոր	Մասնաբաժին
Երևան	37,5
Արագածոտն	2,9
Արարատ	12,9
Արմավիր	5,4
Գեղարքունիք	7,5
Լոռի	9,4
Կոտայք	5,3
Շիրակ	7,6
Սյունիք	3,6
Վայոց ձոր	1,9
Տավուշ	4,3
«Զվարթնոց» օդանավակայան	1,7
Ընդամենը ՀՀ	100,0

2.1. Ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ.

- ✓ ՀՀ-ում խուլիգանությունները, ինչպես և սպանությունները, առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներն ու բռնությամբ զուգորդված սեռական հանցագործությունները **առավել հաճախ** (ընդհանուր թվի 37,5%-ը) կատարվում են Երևանում: Վերջինիս նվազման կարգով **հաջորդում են՝** Արարատը (12,9%), Լոռին (9,4%), Շիրակը (7,6%), Գեղարքունիքը (7,5%), Արմավիրը (5,4%), Կոտայքը (5,3%), Տավուշը (4,3%), Սյունիքը (3,6%), Արագածոտնը (2,9%) և Վայոց ձորը (1,9%): Բացի դրանից, խուլիգանություններ, ինչպես և առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներ և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, թեև

շատ **հազվադեպ** (1,7%), բայց արձանագրվել են նաև «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում:

- ✓ ՀՀ-ում 2019-2023 թթ. խուլիգանությունների, ինչպես և բռնությամբ կատարվող այլ հանցագործությունների **մեծ մասը** (64%) գրանցվել է մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում (Արագածոտնում, Արարատում, Արմավիրում և Կոտայքում), որտեղ բնակվում է երկրի բնակչության 65,5%-ը:

- ✓ **100 հազար բնակչի** հարաբերակցությամբ քննարկվող հանցագործությունների գործակիցների հաշվարկի պարագայում, սակայն, ինչպես և սպանությունների, առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների ու սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքում էր, իրավիճակն այլ է: Մասնավորապես՝ **առաջին դիրքում** Արարատն է (146,8), որին **ըստ նվազման** հաջորդում են Լոռին (119,0), Վայոց ձորը (105,2), Երևանը (104,7), Տավուշը (99,0), Գեղարքունիքը (94,7), Շիրակը (90,4), Սյունիքը (75,6), Արագածոտնը (65,4), Կոտայքը (61,8) և Արմավիրը (59,9): Փաստորեն, նշված գործակիցներով խուլիգանությունները, ինչպես և բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունները, ի տարբերություն սպանությունների և առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների, **առավել տարածված են մայրաքաղաքից հեռու** գտնվող մարզերում: Մասնավորապես, այդ վայրերում համապատասխան գործակիցը միջին հաշվարկով կազմում է 97,3, իսկ մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում՝ 87,7:

3. Խուլիգանությունները բնութագրող էական ցուցանիշներ են նաև դրանք կատարելիս գործադրվող միջոցների վե-

րաբերյալ տեղեկությունները: Մասնավորապես, աղյուսակ 32-ից հետևում է, որ ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված բոլոր **խուլիգանությունների 22,7%-ը** կատարվել է զենքի (այդ թվում՝ որպես զենք օգտագործվող այլ առարկաների) գործադրմամբ: Ընդ որում, վերջիններիս 57,8%-ը կատարվել է **զենք չհանդիսացող կտրուղ-ծակող** առարկաների, 34,9%-ը՝ **հրազենի** (որպես կանոն, ողորկափող որսորդական), 3,9%-ը՝ **սառը զենքի**, 2,7%-ը՝ **գազային զենքի** (որպես կանոն, ատրճանակի) և 0,8%-ը՝ տարատեսակ **պայթուցիկ սարքերի** (այդ թվում՝ հրավառության համար նախատեսված) կիրառմամբ:

4. Խուլիգանության օբյեկտիվ կողմի առանձնահատկություններով պայմանավորված՝ հանցավոր վարքագծի տվյալ դրսևորման կրիմինալոգիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունեն քննարկվող հանցանքների կատարման **վայրի** և **ժամանակահատվածի** վերաբերյալ ցուցանիշները, որոնք արտացոլված են աղյուսակներ 34-ում և 35-ում:

Աղյուսակ 34

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված խուլիգանությունների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու վայրի (%)

	Խուլիգանություններ	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Փողոց, պուրակ, այգի	71,0	49,5
Ռեստորան, բար, սրճարան	3,5	4,6
Բնակարան, առանձնատուն	12,8	26,8
Հանրակացարան	1,7	2,6
Շենքի շքամուտք, նկուղ	1,9	2,2
Ավտոմեքենա, ավտոտնակ	0,4	3,6
Այլ վայր	8,7	10,7
Ընդամենը	100,0	100,0

4.1. Ներկայացված աղյուսակից հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ խուլիգանությունները **հիմնականում** կատարվել են փողոցներում, պուրակներում և այգիներում (71,0%), ինչը գլխավորապես բացատրվում է հանցավոր վարքագծի տվյալ դրսևորման առանձնահատկություններով,
- ✓ վերը նշված վայրերին **ըստ նվազման** հաջորդել են բազմաբնակարան շենքերի բնակարանները և առանձնատները (12,8%), ռեստորանները, բարերը և սրճարանները (3,5%), բազմաբնակարան շենքերի շքամուտքերը և նկուղները (1,9%), հանրակացարանները (1,7%) և ավտոմեքենաները, ավտոտնակները (0,4%),
- ✓ **մնացած դեպքերում** (8,7%) խուլիգանությունները կատարվել են այլ վայրերում:

4.2. Քննարկվող հանցագործությունների (ինչպես և բռնությամբ կատարվող վերը քննարկված մյուս հանցագործությունների) պարագայում **քաղաքներում առկա կենսապայմաններն առավել հանցածին** նշանակություն ունեն, քան այլ բնակավայրերում գոյություն ունեցողները: Մասնավորապես, քաղաքներում և քաղաքատիպ ավաններում կատարվել է խուլիգանությունների **ավելի քան 90%-ը** (սեքսուալ բնույթի բռնի գործողությունների 92,4%-ը, դիտավորությամբ առողջությանը վնասի պատճառումների 74,3%-ը, իսկ սպանությունների 80%-ից ավելին):

ՀՀ-ում 2019-2023 թթ. գրանցված խուլիգանությունների դասակարգումն ըստ հանցանքը կատարելու ժամանակի (%)

	խուլիգանություններ	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Առավոտ (ժ. 05:00-09:00)	2,3	3,4
Ցերեկ (ժ. 10:00-16:00)	23,4	16,3
Երեկո (ժ. 17:00-22:00)	36,1	30,1
Գիշեր (ժ. 23:00-04:00)	23,8	23,8
Ժամն անհայտ է	14,4	26,4
Ընդամենը	100,0	100,0

4.3. Տվյալ աղյուսակի վերլուծությունից մասնավորապես կարելի է հետևություն անել, որ քննարկվող ժամանակահատվածում՝

- ✓ խուլիգանությունները, ինչպես և բռնությամբ զուգորդված հանցավոր այլ արարքները, **առավել հաճախ** կատարվում են երեկոյան (36,1%),
- ✓ վերջիններիս **ըստ նվազման** հաջորդում են գիշերվա (23,8%), ցերեկվա (23,4%) և առավոտյան (2,3%) ժամերին կատարվածները,
- ✓ ընդհանուր առմամբ երեկոյան և գիշերվա ժամերին կատարվում է քննարկվող հանցագործությունների **շուրջ 60%-ը** (բռնությամբ կատարվող բոլոր հանցագործությունների՝ 53,9%-ը),
- ✓ խուլիգանությունների **14,4%-ի** (բռնությամբ կատարվող բոլոր հանցագործությունների՝ 26,4%-ի) պարագայում հանցանքի կատարման ժամը **ֆիքսված չէ**:

5. Հանցավորության քննարկվող դրսևորման կրիմինալ-գիական բնութագրի առումով կարևոր նշանակություն ունի

նաև դրանք **կադարողների անձը** բնութագրող հատկանիշների վերլուծությունը: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում:

Աղյուսակ 36

Տեղեկություններ ՀՀ-ում 2019-2023 թթ. խուլիզանություն կատարած անձանց վերաբերյալ (%)

	խուլիզանություններ	Ընդ. բռնությամբ կատ. հանցագործություններ
Սեռ՝		
արական	91,4	94,2
իգական	8,6	5,8
Տարիք՝		
14-15 տ.	1,1	1,3
16-17 տ.	3,4	4,8
18-24 տ.	18,8	21,5
25-29 տ.	18,9	19,0
30-49 տ.	45,9	42,8
50 և ավելի տ.	11,9	10,6
Սոցիալական վիճակ՝		
գործազուրկ	77,3	78,3
մշտ. աշխ. ունեցող	0,6	0,4
սովորող	1,2	0,8
ոչ մշտ. վաստակ ունեցող	20,9	20,5
Վիճակ՝		
ալկ. հարբ.	29,3	25,6
թմրանյութ. հարբ.	0,1	0,2
Սթափ	70,6	74,2
Քրեական անցյալ՝		
նախկ. հանց. չկատ.	83,5	82,4
նախկ. հանց. կատ.	16,5	18,6
Միանձնյա	85,7	89,7
Խմբի կազմում	14,3	10,3
Այդ թվում՝		
չափահասների	76,7	77,6
անչափահասների	5,3	4,6
խառը	18,0	17,8
Ընդամենը	100,0	100,0

5.1. Ներկայացված աղյուսակից հետևում է, որ ՀՀ-ում 2019-2023 թվականներին խուլիգանություն կատարած անձանց կառուցվածքում.

- ✓ Գերակայում են **արական սեռի** ներկայացուցիչները, որոնց մասնաբաժինը 91,4% է: Արդեն նշվել է, որ նույն պատկերն է նաև բռնությամբ կատարվող հանցավոր այլ արարքների պարագայում:
- ✓ **Մեծահասակների** (չափահասների) տեսակարար կշիռը 95,5% է: Ընդ որում, ինչպես և բռնությամբ կատարվող այլ հանցագործությունների պարագայում, հանցավոր **առավել ակտիվ** վարքագիծ են դրսևորել 30-49 տարեկանները (45,9%): Նրանց ըստ նվազման **հաջորդում են** 25-29 (18,9%), 18-24 (18,8%), 50 և ավելի (11,9%), 16-17 (3,4%) և 14-15 տարեկանները (1,1%):
- ✓ Բավականին **մեծ է** գործազուրկների (77,3%) և ոչ մշտական վաստակ ունեցողների (20,3%) թիվը: Մշտական աշխատանք ունեցողների և ուսումնական տարբեր հաստատություններում սովորողների տեսակարար կշիռն ընդհանուր առմամբ 1,8% է:
- ✓ **Զգալի է** հարբած վիճակում հանցանք կատարողների մասնաբաժինը (29,4%): Ընդ որում, նրանց շարքում **գերակայում են** ակոհոլային հարբածության վիճակում գտնվողները (99,7%):
- ✓ **Նախկինում հանցանք կատարած անձանց** տեսակարար կշիռը կազմում է 16,5%: Վերջիններս, որպես կանոն, նախկինում դատապարտված են եղել կա՛մ մարդու, կա՛մ սեփականության դեմ ուղղված հանցագործության համար:
- ✓ **Գերակայում են** (ինչպես նաև բռնությամբ կատարվող մյուս հանցագործությունների պարագայում) հանցան-

քը միանձնյա կատարողները (85,7%): Ուստի խմբի կողմից կատարվել է քննարկվող հանցագործությունների ընդամենը 14,3%-ը: Ընդ որում, դրանք առավել հաճախ կատարվել են **նվազագույն թվով** հանցակիցների (երկու համակատարողի) կողմից:

- ✓ Խուլիգանությունների 76,7%-ը կատարվել է **բացառապես չափահասներից**, 18,0%-ը՝ **խառը** (նաև անչափահասների մասնակցությամբ), իսկ 5,3%-ը՝ **բացառապես անչափահասներից** բաղկացած խմբի կազմում:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М.: Логос, 2004, –448 с.
2. Аракелян С.В. Преступное насилие. Монография / Под ред. докт. юрид. наук, проф. Ю.М. Антоняна. Ереван: ЕГУ, 2013, –304 с.
3. Калиниченко Г.И. Криминологический анализ хулиганства // Аллея науки. 2019. Т. 1. № 10 (37), с. 532-534.
4. Пашкин Д.С. Криминологические и психологические аспекты характеристики личности преступника, совершающего уголовно-наказуемое хулиганство // Проблемы права. 2010. № 2 (22), с. 99-101.
5. Рагулин А.В. Ретроспективный анализ российского уголовного законодательства об ответственности за хулиганство // Вестник ВЭГУ. № 23/24, с. 95-107.
6. Репецкая А.Л., Рыбакова А.С. Виктимологическая характеристика современного хулиганства (по материалам Сибирского федерального округа) // Сибирский юридический вестник. 2021. № 3 (94), с. 48-53.

7. Романова А.С. Характеристика современного состояния хулиганства // Сибирский юридический вестник. 2019. № 3 (86), с. 71-74.
8. Скворцова В.В. Современные проблемы борьбы с хулиганством в быту // Вестник Владимирского юридического института. 2006. № 1, с. 247-248.
9. Таилова А.Г. Хулиганство как разновидность насильственной преступности // Вестник научных конференций. 2015. № 1-1 (1), с. 138-139.
10. Терещенко Т.Г. Криминологическая характеристика насильственной преступности и хулиганства в Республике Беларусь // Вестник института: преступление, наказание, исправление. 2017. № 1 (37), с. 57-62.
11. Токманцев Д.В., Антончикова А.Д., Гладышева Е.Э. Криминологическая характеристика и профилактика хулиганства на транспорте // Научный компонент. 2022. № 3 (15), с. 42-49.
12. Холодкова А.В. О некоторых криминологических аспектах мелкого хулиганства // Актуальные проблемы борьбы с преступлениями и иными правонарушениями. 2016. № 16-2, с. 80-81.

§2.5. Ընտանեկան հանցավոր բռնության բնութագիրը

Միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով պարտավորություն է սահմանվում դրանց միացող պետությունների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) համար՝ ակտիվ և գործուն միջոցներ ձեռնարկել ընտանեկան

բոնությունը կանխելու և դրանից տուժողներին պաշտպանելու, նրանց օգնություն և աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև բռնարարներին արդյունավետ պատասխանատվության ենթարկելու համար: Այլ կերպ ասած՝ նշված պետությունները պարտավոր են ապահովել, որ ընտանեկան բռնությունից տուժած անձինք ստանան առավելագույն պաշտպանություն, ընտանեկան բռնության դեպքերով բոլոր մեղադրանքները մանրակրկիտ և արագ քննվեն և բռնարարները կանգնեն դատարանի առջև:

1. Ընտանիքում (ընտանեկան) բռնության հասկացությունը, դրա կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները սահմանվում են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով:

Մասնավորապես, նշված օրենքի հոդված 3-ի 1-ին մասի համաձայն՝ **«Ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև»:**

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է ընտանիքում բռնության տեսակները: Մասնավորապես, դրանք են՝

1) **Ֆիզիկական բռնություն**¹ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները¹, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը,

2) **սեռական բռնություն**¹ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները,

3) **հոգեբանական բռնություն**¹ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը,

4) **տնտեսական բռնություն**¹ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը,

¹ ՀՀ քրեական գործող օրենսգրքով նախատեսված է ոչ թե ծեծի, այլ ֆիզիկական ներգործության հանցակազմը (հոդված 195):

5) **անտեսում**՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

1.1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **ընտանիքի անդամներ** են՝

ա) անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

բ) համատեղ բնակվող տատը, պապը, քույրը և եղբայրը (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

1.2. Համապատասխանաբար՝ **ընտանեկան բռնություն համարվող հանցագործություն** (կամ՝ ընտանեկան հանցա-

վոր բռնություն) ասելով հարկ է հասկանալ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված և հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված այն արարքները (վարքագծի դրսևորումները), որոնք սահմանված են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի 2-րդ մասով: Օրինակ՝ սպանությունը (ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելով), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ինքնասպանության հասցնելը, հղիության արհեստական ընդհատմանը կամ ամլացմանը հարկադրելը, թրաֆիքինգը կամ շահագործումը, ազատությունից ապօրինի զրկելը, հոգեկան կամ ֆիզիկական ներգործությունը և այլ արարքները, **որոնք կատարվել են ընտանիքի անդամների միջև:**

2. ՀՀ-ում ընտանեկան հանցավոր բռնության վիճակի (մակարդակի) և շարժընթացի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներն¹ արտացոլված են աղյուսակ 37-ում:

Աղյուսակ 37

Տեղեկություններ 2022-2024 թթ. ՀՀ-ում գրանցված ընտանեկան հանցավոր բռնության վերաբերյալ

	2022թ.	2023թ.	2024թ.	Ընդամ.
Հարուցված քրեական գործերի քանակ	138	508	1 360	2 006
Որից՝				
ուղարկվել է դատարան	54	258	234	546
կարճվել է	82	55	34	171
գտնվում է ընթացքի մեջ	—	195	1 092	1 287
Մերժված քրեական գործերի քանակ	195	—	—	195
Ընդամենը	333	508	1 360	2 201

¹ Ընտանեկան բռնության վերաբերյալ ցուցանիշները սկսել են արտացոլվել պաշտոնական վիճակագրական հրապարակումներում 2022 թվականից:

Այդ թվում՝				
կենսակցի կողմից	1	—	50	51
ամուսնու կողմից կնոջ նկատմամբ	220	267	549	1 036
կնոջ կողմից ամուսնու նկատմամբ	4	3	27	34
նախկին ամուսնու կամ կնոջ կողմից	—	45	142	187
ծնողի կողմից զավակի նկատմամբ	14	45	100	159
զավակի կողմից ծնողի նկատմամբ	27	44	142	213
ընտանիքի այլ անդամների կողմից	67	104	350	521

2.1. Ներկայացված վիճակագրական ցուցանիշներից նախ և առաջ կարելի է հետևություն անել, որ 2023 թվականին, նախորդող տարվա համեմատ, ՀՀ-ում գրանցվել է ընտանեկան բռնություն համարվող հանցագործությունների **զգալի աճ**: Մասնավորապես, եթե 2022 թվականին դրանց թիվը կազմել է **333**, ապա 2023 թվականին՝ **508**: Այսինքն՝ բացարձակ աճը նշված ժամանակահատվածում կազմել է **+175**, իսկ աճի տեմպը՝ **+1,526** (կամ **152,6%**): Մինչդեռ 2024 թվականին, 2023 թվականի համեմատ, նշված հանցագործությունների բացարձակ աճն ավելի էական է եղել՝ **+852**: Համապատասխանաբար, աճի տեմպը նույն ժամանակահատվածում կազմել է **+2,677** (կամ **267,7%**):

2.2. Միևնույն ժամանակ, **էական աճ է** արձանագրել ընտանեկան բռնության վերաբերյալ հարուցված քրեական գործերի (նախաձեռնված վարույթների) քանակը: Մասնավորապես, եթե 2022 թվականին դրանց թիվը կազմել է **138**, ապա 2023 թվականին՝ **508**, իսկ 2024 թվականին՝ **1 360**: Ընդ որում, եթե 2022 թվականին քրեական վարույթ է նախաձեռնվել գրանցված ընտանեկան բռնության դեպքերի (333) միայն **41,4%-ի** կապակցությամբ, ապա 2023 և 2024 թվականներին՝ գրանցված **բոլոր դեպքերով** (համապատասխանաբար՝ 508 և 1 360) հարուցվել են քրեական գործեր: Այսինքն՝ եթե 2022 թվականին գրանցված ընտանեկան բռնության դեպքերի **58,6%-ի** կապակցությամբ քրեական գործերի հարուցումը

մերժվել է, ապա 2023 և 2024 թվականներին մերժված քրեական գործեր **չեն արձանագրվել**:

2.3. 2022 թվականին ընտանեկան բռնության վերաբերյալ հարուցված քրեական գործերի (138) քննության արդյունքում դրանց **39,1%-ը** (54) ուղարկվել է դատարան, իսկ **60,9%-ը** (82) կարճվել է: Նշված ժամանակահատվածում ընթացքի մեջ գտնվող քրեական գործեր **չեն արձանագրվել**: Մինչդեռ 2023 թվականի վերաբերյալ ցուցանիշների պարագայում իրավիճակն այլ է: Մասնավորապես՝ հարուցված քրեական գործերի (508) քննության արդյունքում դրանց **50,8%-ը** (258) ուղարկվել է դատարան, **10,8%-ը** (55)՝ կարճվել, իսկ **38,4%-ը** (195) գտնվում է ընթացքի մեջ: Այլ կերպ ասած՝ 2023 թվականին, 2022-ի համեմատ, էապես աճել է դատարան ուղարկված, ինչպես նաև նվազել՝ կարճված քրեական վարույթների քանակը:

2024 թվականի պարագայում պատկերը հետևյալն է. հարուցված քրեական գործերի (1 360) քննության արդյունքում դրանց ընդամենը **17,2%-ն** է (234) ուղարկվել է դատարան: Միաժամանակ, նշված գործերի **2,5%-ը** (34) կարճվել է, իսկ **80,3%-ը** (1 092) գտնվում է ընթացքի մեջ: Հետևաբար՝ 2024 թվականին, 2023-ի համեմատ, զգալիորեն նվազել է ինչպես դատարան ուղարկված, այնպես էլ կարճված, սակայն էապես աճել՝ ընթացքի մեջ գտնվող քրեական վարույթների քանակը:

3. Հետաքրքրարժան են նաև ՀՀ-ում 2022-2024 թվականներին գրանցված ընտանեկան բռնություն համարվող հանցանքները կատարողների և նշված հանցագործություններից տուժողների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները: Մասնավորապես՝

- քննարկվող հանցանքները մեծամասամբ կատարվում են **ամուսնու կողմից կնոջ նկատմամբ** (գրանցված 2 201 հանցագործությունից 1 036-ը (**47,1%**) կատարվել է նշված կատեգորիայի անձանց կողմից՝ հիշատակված տուժողների նկատմամբ),
- դրանց հաջորդում են **ընտանիքի այլ անդամների կողմից** կատարվող հանցանքները (գրանցված 2 201 հանցագործությունից 521-ը (**23,7%**) կատարվել է նշված կատեգորիայի անձանց կողմից),
- հաջորդը **զավակի կողմից ծնողի նկատմամբ** կատարվող հանցանքներն են (գրանցված 2 201 հանցագործությունից 213-ը (**9,7%**) կատարվել է նշված կատեգորիայի անձանց կողմից՝ հիշատակված տուժողների նկատմամբ),
- վերջիններիս հաջորդում են **նախկին ամուսնու կամ կնոջ կողմից** կատարվող հանցանքները (գրանցված 2 201 հանցագործությունից 187-ը (**8,5%**) կատարվել է նշված կատեգորիայի անձանց կողմից),
- դրանց հաջորդում են **ծնողի կողմից զավակի նկատմամբ** կատարվող հանցանքները (գրանցված 2 201 հանցագործությունից 159-ը (**7,2%**) կատարվել է նշված կատեգորիայի անձանց կողմից՝ հիշատակված տուժողների նկատմամբ),
- հաջորդը **կենսակցի կողմից** կատարվող հանցանքներն են (նշված կատեգորիայի անձանց կողմից կատարվել է գրանցված 2 201 հանցագործությունից 51-ը կամ **2,3%-ը**),
- քննարկվող հանցագործությունների կառուցվածքում ամենափոքր մասնաբաժինն ունեն **կնոջ կողմից ամուսնու նկատմամբ** կատարվող հանցանքները

(գրանցված 2 201 հանցագործությունից 34-ը (1,5%) կատարվել է նշված կատեգորիայի անձանց կողմից՝ հիշատակված տուժողների նկատմամբ):

4. ՀՀ-ում ընտանեկան հանցավոր բռնության կրիմինալոգիական բնութագրի առումով որոշակի նշանակություն ունի նաև դրանց **տարածաշրջանային առանձնահատկությունների** բացահայտումը (տե՛ս աղյուսակ 38):

Աղյուսակ 38

ՀՀ-ում 2023-2024 թթ. գրանցված ընտանեկան հանցավոր բռնության դեպքերի քանակն ըստ մարզերի և Երևան քաղաքի

	2023 թ.	2024 թ.	Ընդամենը (%)
Երևան	134	398	532 (28,5%)
Արագածոտն	19	53	72 (3,85%)
Արարատ	87	169	256 (13,7%)
Արմավիր	49	121	170 (9,1%)
Գեղարքունիք	40	46	86 (4,6%)
Լոռի	36	141	177 (9,47%)
Կոտայք	44	91	135 (7,22%)
Շիրակ	47	167	214 (11,5%)
Սյունիք	18	75	93 (4,97%)
Վայոց ձոր	6	16	22 (1,17%)
Տավուշ	28	83	111 (5,94%)
Ընդամենը	508	1 360	1 868

4.1. Ներկայացված աղյուսակից մասնավորապես հետևում է, որ.

- ✓ ՀՀ-ում ընտանեկան հանցավոր բռնության դեպքերն **առավել հաճախ** (դրանց ընդհանուր թվի 28,5%-ը) արձանագրվում են Երևան քաղաքում: Վերջինիս նվազման կարգով **հաջորդում են** հետևյալ մարզերը՝ Արարատը (13,7%), Շիրակը (11,5%), Լոռին (9,47%), Արմավիրը (9,1%), Կոտայքը (7,22%), Տավուշը (5,94%),

Սյունիքը (4,97%), Գեղարքունիքը (4,6%), Արագածոտնը (3,85%) և Վայոց ձորը (1,17%):

- ✓ ՀՀ-ում 2023-2024 թթ. քննարկվող հանցագործությունների **մեծ մասը** (62,4%) գրանցվել է մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում (Արագածոտնում, Արարատում, Արմավիրում և Կոտայքում), որտեղ բնակվում է երկրի բնակչության 65,5%-ը:

4.2. 100 հազար բնակչի հարաբերակցությամբ ընտանեկան հանցավոր բռնության դեպքերի գործակիցների հաշվարկի պարագայում, սակայն, իրավիճակն այլ է: Այդ կապակցությամբ վիճակագրական համապատասխան ցուցանիշներն արտացոլված են աղյուսակ 39-ում:

Աղյուսակ 39

	Բնակչության թվաքանակը 2024թ. տարեվերջի դրությամբ (1 000 մարդ)	Ընտ. հանցավոր բռնության դեպքեր (գործակից)
Երևան	1 141.3	532 (46,6)
Արագածոտն	135.4	72 (53,2)
Արարատ	267.0	256 (95,9)
Արմավիր	268.0	170 (63,4)
Գեղարքունիք	215.5	86 (39,9)
Լոռի	229.2	177 (77,2)
Կոտայք	293.6	135 (46,0)
Շիրակ	242.4	214 (88,3)
Սյունիք	116.7	93 (79,7)
Վայոց ձոր	49.1	22 (44,8)
Տավուշ	117.6	111 (94,4)
Ընդամենը ՀՀ-ում	3 075.8	1 868 (60,7)

Մասնավորապես՝ **առաջին դիրքում** Արարատն է (95,9), որին **ըստ նվազման** հաջորդում են Տավուշը (94,4), Շիրակը (88,3), Սյունիքը (79,7), Լոռին (77,2), Արմավիրը (63,4), Արագածոտնը (53,2), Երևանը (46,6), Կոտայքը (46,0), Վայոց ձորը (44,8) և Գեղարքունիքը (39,9): Փաստորեն, նշված գործա-

կիցներով քննարկվող հանցագործությունները, ի տարբերություն սպանությունների և առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների, **առավել տարածված են մայրաքաղաքից հեռու** գտնվող մարզերում: Մասնավորապես, վերջիններիս պարագայում համապատասխան գործակիցը միջին հաշվարկով կազմում է 70,7, իսկ մայրաքաղաքում և դրան սահմանակից մարզերում՝ 61,0:

5. Ընտանեկան բռնությունը (այդ թվում՝ հանցավոր) գոյություն ունի սոցիալական **առանց բացառության բոլոր** խմբերում: Դրան բախվում են անկախ նյութական ապահովվածությունից, կրթական մակարդակից, կրոնի, բարոյական ու էթիկական նորմերի հանդեպ վերաբերմունքից, սոցիալական կարգավիճակից:

6. Ընտանեկան բռնությունից տուժողի առավել տարածված **հոգեբանական բնութագիրը** կազմում են՝

- չափազանց ցածր ինքնագնահատականը և անկարողության զգացումը,
- հավելյալ տագնապայնությունը և ավելորդ ներշնչողականությունը,
- ինքնավստահության բացակայությունը և սեփական ուժերի հանդեպ թերահավատությունը,
- մեղքի ձևախեղված զգացումը և հանցավորի արարքները միշտ արդարացնելու հակվածությունը («մեղավորը հենց զոհն է» դիրքորոշմամբ),
- զայրույթ արտահայտելու անկարողությունը և հակադրվելու, դիմադրելու ցանկության բացակայությունը,
- համոզվածությունը, որ ստեղծված իրավիճակում ոչ ոք իրապես չի կարող օգնել:

ՑԱՆԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Աբրահամյան Ա., Միրջևա Ս. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանում ոստիկանության ծառայողների վերապատրաստման ձեռնարկ: Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2021 թ.:
2. Առաքելյան Ս.Վ. Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից: Եր.: Ասողիկ, 2001, 168 էջ:
3. Dr Inge Baumgarten et. Interpersonal Violence and Alcohol in the Russian Federation. Policy briefing (PDF). Violence and Injury Prevention Programme. World Health Organization (2006).
4. Gondolf EW, Shestakov D. Spousal Homicide in Russia Versus the United States: Preliminary Findings and Implications // Journal of Family Violence. 1997. 1 March (vol. 12, iss. 1).
5. Алиев Ш.И., Таилова А.Г. Алиев А.Ш. Социальное неблагополучие и насилие в семье и их влияние на преступность. Монография. Избербаш: ДГУ, 2024, –104 с.
6. Бекетов О.И., Майле А.Д. Профилактические меры полицейского воздействия в системе мер противодействия домашнему насилию в государствах европейского сообщества // Вестник ВГУ / Серия Право. 2009. № 1, с. 420-431.
7. Бочкарева Е.В. Специальная виктимологическая профилактика насильственной преступности в семейно-бытовой сфере // Союз криминалистов и криминологов. 2019. № 1, с. 33-38.
8. Гончаренко Е.В., Гераськов В.С., Тайсаева С.Б., Полякова Е.В. Стокгольмский синдром в криминологической

- практике // Вестник Костромского государственного университета. 2022. Т. 28, № 4, с. 120-123.
9. Жигунова Г.В., Пономаренко Н.О. Причины насилия над женщинами в семье // Известия высших учебных заведений. Поволжский регион. 2015. № 2(34), с. 137-144.
 10. Ильяшенко А.Н. Основные черты насильственной преступности в семье // Социологические исследования. 2003. № 4, с. 85-90.
 11. Катушонок О.В. Специальные криминологические меры предупреждения насильственной преступности в семье // Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции. 2016. Т. 2. № 9, с. 119-124.
 12. Кобец П.Н. Правовые аспекты обеспечения предупреждения насильственной преступности в семье // Сборники конференций НИЦ Социосфера. 2014. № 50, с. 69-71.
 13. Криминальное насилие против женщин и детей: международные стандарты противодействия: Сборник документов / Сост. В.С. Овчинский. М.: Норма, 2008, –816 с.
 14. Кузников Д.К. Роль стокгольмского синдрома в декриминализации домашнего насилия // JURISPRUDENCE / «Colloquium-journal». 2019. № 15(39), с. 47-49.
 15. Лысова А.В. Доминирование и насилие в супружеских отношениях // Криминологический журнал Байкальского государственного университета экономики и права. 2014. № 2, с. 133-141.
 16. Марцинечко А.С. Детерминанты насильственной преступности в семье в отношении женщин // Вестник Калининградского юридического института МВД России. 2008. № 2(16), с. 71-74.

17. Матасарь Ю.Г. К вопросу о предупреждении насильственной преступности, совершаемой в семейно-бытовой сфере // Юридический факт. 2019. № 67, с. 11-14.
18. Насилие в семье: Особенности психологической реабилитации. Учебное пособие / Под ред. Н.М. Платоновой и Ю.П. Платонова. – СПб.: Речь, 2004, –154 с.
19. Семья и домашнее насилие. Практика консультирования мужчин – субъектов домашнего насилия: Учебное пособие / Под ред. Н. М. Платоновой. – СПб.: СПбГИПСР, 2013, –210 с.
20. Щенина Т.Е. Насилие в семье: частное дело или социальная проблема? // Вестник Удмуртского университета / Экономика и право. 2008. Вып. 2, с. 217-225.

ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԾԱՐ

1. «Բռնությամբ կատարվող հանցագործություն» հասկացությունը:
2. Բռնության մոտիվացիայի էությունը: Բռնության և շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների սահմանազատումը:
3. Բռնությունը որպես նպատակ և նպատակին հասնելու միջոց:
4. Բռնությամբ կատարվող հանցագործությունների վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը:
5. Բռնությամբ հանցանք կատարող անձանց սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական առանձնահատկությունները:
6. Տագնապայնությունը և օտարվածությունը որպես բռնությամբ հանցանք կատարողների հոգեբանական առանձնահատկություններ:
7. Բռնությամբ հանցանք կատարողների տիպաբանությունը:
8. Բռնությամբ կատարվող հանցագործություններին նպաստող գործոնների ընդհանուր բնութագիրը:
9. Ագրեսիան որպես հոգեբանական պաշտպանության մեխանիզմ: Ֆրուստրացիա և ագրեսիա:
10. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման հասկացությունը և ընդհանուր բնութագիրը:
11. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման ընդհանուր-սոցիալական միջոցները:

12. Բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման հատուկ-կրիմինալոգիական միջոցները:
13. Անհատական կանխման առանձնահատկությունները և նշանակությունը:
14. Հասարակության դերը բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման գործում:
15. Սպանությունների վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը:
16. Սպանություն կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունները:
17. Սպանությունից տուժողների կրիմինալոգիական բնութագիրը:
18. Սպանություններին նպաստող գործոնները:
19. Սպանությունների կանխարգելման հիմնական ուղղությունները:
20. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը:
21. Առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառողների անձը բնութագրող առանձնահատկությունները:
22. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներից տուժողների կրիմինալոգիական բնութագիրը:
23. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումներին նպաստող գործոնները:
24. Առողջությանը դիտավորությամբ վնասի պատճառումների կանխարգելման հիմնական ուղղությունները:
25. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը:

26. Բռնությամբ սեռական հանցանք կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունները:
27. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններից տուժողների կրիմինալոգիական բնութագիրը:
28. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործություններին նպաստող գործոնները:
29. Բռնությամբ կատարվող սեռական հանցագործությունների կանխարգելման հիմնական ուղղությունները:
30. Խուլիգանությունների վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը:
31. Խուլիգանություն կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունները:
32. Խուլիգանություններից տուժողների կրիմինալոգիական բնութագիրը:
33. Խուլիգանություններին նպաստող գործոնները:
34. Խուլիգանությունների կանխարգելման հիմնական ուղղությունները:
35. Ընտանեկան հանցավոր բռնության վիճակը (մակարդակը), կառուցվածքը և շարժընթացը:
36. Ընտանեկան հանցավոր բռնություն գործադրողների անձը բնութագրող առանձնահատկությունները:
37. Ընտանեկան հանցավոր բռնությունից տուժողների կրիմինալոգիական բնութագիրը:
38. Ընտանեկան հանցավոր բռնությանը նպաստող գործոնները:
39. Ընտանեկան հանցավոր բռնության կանխարգելման հիմնական ուղղությունները:

РЕЗЮМЕ

НАСИЛЬСТВЕННЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ (УЧЕБНО-МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ)

Аракелян Сергей Ваганович
*доктор юридических наук, ректор Академии юстиции,
профессор кафедры уголовного права ЕГУ*

Пособие посвящено раскрытию сущности насильственных преступлений в Республике Армения, обсуждению их криминологических особенностей и основных направлений предупреждения рассматриваемых преступных деяний. В данном контексте представлены как общая характеристика преступного насилия, так и криминологические особенности отдельных видов исследуемого проявления преступного поведения.

Данное издание предназначено для преподавателей, студентов, магистрантов и аспирантов юридических вузов и факультетов, а также всех других лиц, интересующихся проблемами борьбы с насильственными преступлениями.

SUMMARY

VIOLENT CRIMES (EDUCATIONAL-METHODICAL MANUAL)

Sergey V. Arakelyan

*Doctor of Legal Sciences, Rector of the Academy of Justice,
Professor of the YSU Department of Criminal Law*

The manual is dedicated to the disclosure of the essence of violent crimes in the Republic of Armenia, their criminological features and the discussion of the main directions of prevention. In this context, the general characteristics of criminal violence and the criminological features of individual types of this manifestation of behavior are presented.

This publication is intended for lecturers, students, master's and postgraduate students of law schools and faculties, and other people interested in the main issues of combating violent crimes.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԵՐԳԵՅ ՎԱՀԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Ա. Հովակիմյանի

Հեղինակ հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 13.10.2025:

Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 10.625:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

www.publishing.ysu.am



publishing.y-su.am